

Զարուհի Բաթոյան

**Հաշմանդամության խնդիրը
և
զանգվածային լրափվության
միջոցները**

Ուղեցույց լրագրողների համար

Երևան
Հեղինակային հրատարակություն
2009

ՀՏԴ 376:070
ԳՄԴ 74.3+76.1
Բ 176

**Ուղեցույցը երաշխավորել է հրատարակության
Երևանի պետական համալսարանի
Ժուռնալիստիկայի ֆակուլտետը:**

**Գիտական խմբագիր՝ Հ. Ավետիսյան
Խմբագիրներ՝ Ն. Մարտիրոսյան
Ա. Մենեմյան**

Բ 176 Բաթյան Զ.

Հաշմանդամության խնդիրը և զանգվածային
լրատվության միջոցները.-Եր.: Հեղինակային
հրատարակություն, 2009.- 124 էջ:

**Գրքույկը հրատարակվել է «Հուլիսի կամուրջ» և
«Առաքելություն Արևելք» կազմակերպությունների
աջակցությամբ և Դանիայի զարգացման
գործակալության ֆինանսավորմամբ:**

ԳՄԴ 74.3+76.1

ISBN 978-9939-53-469-5

© Բաթյան Զ., 2009
© «Հուլիսի կամուրջ» ՀԿ, 2009

Նախաբան

Երևույթների և արժեքների նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման համար հզոր նշանակություն ունեն գանգվածային լրագրության միջոցները: Նրանց դերը ժողովրդավարական հասարակության մեջ կայանում է ոչ միայն հասարակական գործընթացների արտացոլման, այլև այդ գործընթացներում քաղաքացիների լայն մասնակցության ապահովման մեջ, ինչը կնպաստի ժողովրդավարական ինստիտուտների կայացմանը երկրում:

Հայաստանում այս խնդիրը խիստ արդիական է, քանի որ հասարակական կառույցների գործառույթների մասին հստակ պատկերացում չկա, բացակայում են անհատի հասարակություն ինտեգրելու մեխանիզմները:

Լրագրողների կարևոր խնդիրներից մեկն իրենցից էապես փարբերվող մարդկանց մասին գրելն է: Հաճախ լրագրողի դերը փվյալ անձի դիրքորոշումները, գաղափարները կամ աշխարհայացքը ճշգրիտ կերպով ներկայացնելն է, նույնիսկ եթե այդ անձը փարբերվում է իր ազգային պատկանելությամբ, հավատով, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակով, եթե անգամ այդ փարբերությունները զգալի են:

Լրագրողները և լրագրական կազմակերպություններն ի գորու են ուժեղացնելու կամ թուլացնելու կարծրափայերը՝ բազմակողմանիորեն կամ պարզ պատկերելով փարբեր սոցիալական խմբերի: Նրանք կարող են խթանել սոցիալական լարվածությունը և հակամարտությունները կամ նպաստել խաղաղության հաս-

տալանները, օգնել հասարակության յուրաքանչյուր խմբի՝ ստանալու պատշաճ վերաբերմունք և ուշադրություն:

Այդ խմբերից մեկն էլ հաշմանդամ մարդիկ են, ովքեր այսօր ամենախոցելին է Հայաստանում:

Աշխարհի բոլոր երկրներում և հասարակության ցանկացած խմբում կան հաշմանդամ մարդիկ: Նրանց թիվն աշխարհում շարունակ աճում է: Հաշմանդամության պատճառներն ու հետևանքները տարբեր երկրներում տարբեր են: Այդ տարբերությունները պայմանավորված են սոցիալ-տնտեսական իրավիճակով և պետության իր քաղաքացիների բարեկեցության ապահովմանն ուղղված միջոցառումներով¹:

Անվտանգություն, քամահրանք, նախապաշարումներ և վախ. ահա այն սոցիալական գործոնները, որոնք մարդկության պատմության ողջ ընթացքում հաշմանդամների ընդունակությունների զարգացման համար խոչընդոտ են եղել ու հանգեցրել նրանց մեկուսացմանը:

Պատմության ընթացքում հաշմանդամ մարդկանց նկատմամբ տարվող քաղաքականությունը փոխվել է. այն անցել է երկար ուղի՝ համապատասխան հաստատություններում նրանց հանդեպ կենցաղային պարզ հոգատարությունից մինչև հաշմանդամ երեխաների կրթություն ստանալն ու արդեն հասուն տարիքում վերականգնումը²:

Կրթության և վերականգնման շնորհիվ հաշմանդամ մարդիկ սկսեցին ավելի ակտիվ պայքարել հանուն իրենց նկատմամբ վարվող քաղաքականության զարգացման: Ողջ աշխարհում ստեղծվել են հաշմանդամ մարդկանց, նրանց ընտանիքների ու համախոհների կազմակերպություններ, որոնք հանդես են գալիս այդ խմբի կենսապայմանների բարելավման օգտին³: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երևան եկան այնպիսի

հայեցակարգեր⁴, որոնք արտասույցում են հաշմանդամ մարդկանց պոտենցիալ հնարավորությունները:

Այն երկրներում, որտեղ հաշմանդամների շարժումն առավել ակտիվ է, ԶԼՄ-ներն ավելի հաճախ են անդրադառնում նրանց խնդիրներին⁵: Սակայն դա՝ միայն զարգացած երկրներում, ուր ժողովրդավարությունն իր հաստատուն քայլերն է անում, որի հիմնական գրավականներից է անխտրական, հանդուրժողական ու բոլորի համար բաց հասարակությունը:

Խորհրդային հասարակարգում 70 տարի շարունակ հաշմանդամների նկատմամբ այլ քաղաքականություն էր իրականացվում: Հաշմանդամությունը դիտվում էր որպես արտա, ուստի և հաշմանդամ մարդիկ տեղ չունեին Խորհրդային Միության «իդեալական» հասարակության մեջ⁶: Ինչպես իր հոդվածներից մեկում⁷ նշում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի. Լ. Տրունովը, ըստ Խորհրդային Միության պետական գաղափարախոսության՝ Խորհրդային հասարակարգում հաշմանդամության խնդիր չկար: Իսկ հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մասին օրենքը ԽՍՀՄ-ում միայն 1991 թ. ընդունվեց:

Խորհրդային իշխանության փարիներին հաշմանդամ քաղաքացիները վաղ մանկությունից լրիվ մեկուսացվում էին հասարակությունից և դիտարկվում որպես անկարող մարդիկ հասարակության մեջ ապրելու և ակտիվ գործելու համար: Լայն փարածում գրած այս կարծրափայլ պահպանվել է մինչ օրս: Հաշմանդամ անձանց մեծ մասը շարունակում է ապրել մեկուսացված կյանքով՝ իրենց ընդհանրությունում կամ հատուկ հաստատություններում:

Խորհրդային իշխանության փլուզումը և անցումը ազատ փոփոխական հարաբերությունների, ինչպես նաև պատերազմն ու երկրաշարժը բազմաթիվ հայ ընդհանրությունների և մանուկների

դարձրին տնտեսապես և սոցիալապես խոցելի: Իրավիճակը հարկապես ծանր է հաշմանդամ մարդկանց և նրանց ընտանիքների համար:

Նրանց ինտեգրումը սահմանափակված է ճարտարապետական, մշակութային արգելքների, թերի օրենսդրական դաշտի, հանրության իրազեկության ցածր մակարդակի պատճառով:

Հայաստանում վերջին շրջանում հասարակության իրազեկության աստիճանը հաշմանդամ մարդկանց հիմնախնդիրների մասին զգալի բարձրացել է, սակայն դեռևս գերիշխում են նրանց հանդեպ առկա կարծրափայերը:

ԶԼՄ բազմաթիվ գործառույթներից առնվազն երեքը կոչված են լուծելու վերը նշված խնդիրները: Դրանք ուղղակիորեն կապված են մեր հասարակության մեջ այս բացը լրացնելու գործընթացի հետ և արդյունավետ կիրառման դեպքում մի ամբողջ մեխանիզմ կարող են ներկայացնել:

Այդ գործառույթներն են՝

- գաղափարական. կոչված է ազգային և համամարդկային արժեքներ և նորմեր, բարոյական կողմնորոշումներ, ինչպես նաև ժողովրդավարության և ազատության սկզբունքներ քարոզելու.

- բարոյադաստիարակչական. սերտ կապված է առաջինի հետ և արտացոլում է ինչպես հանրային վարքի բարոյագեղագիտական կողմի գերադասելի օրինակները, բարոյականության սկզբունքները, գեղագիտական ճաշակն ու չափանիշները, այնպես էլ չարի և բարու մասին պարկերացումները.

- նորարարական (համեմատաբար նոր է). եռթյունն այն է, որ դինամիկ զարգացող գործընթացներում ԶԼՄ-ները բացառական, նախապարտադրական դեր են կատարում, հող են նախապարտադրում նոր մտայնումների, գաղափարների ձիշտ և օբյեկտիվ ընկալման համար:

Քանի որ հասարակությունը հիմնականում պահպանողական է և այս կամ այն չափով ընդդիմանում է փոփոխություններին, ՋԼՄ-ների դերն այս դեպքում այդ գործընթացները հնարավորինս արագացնելն է:

Եվ քանի որ ՋԼՄ-ները հսկայական դեր ունեն հասարակությանն իրազեկելու, կարծրափայեր կոտրելու, մարդկանց նկատմամբ դրական վերաբերմունք և հարգանք ձևավորելու գործում, դրանք, անշուշտ, կարող են նպաստել Հայաստանում բոլորի համար մարչելի հասարակության ձևավորմանը, մի հասարակություն, որը հավասարապես հոգ է փանում իր բոլոր անդամների համար և երաշխավորում է հաշմանդամ անձանց իրավունքների լիիրավ պաշտպանությունը: Միայն այս հասարակությունը կարող է գնալ դեպի սոցիալական կայուն զարգացում և իրական ժողովրդավարություն: Որևէ երկիր չի կարող ժողովրդավարական համարվել, եթե նրա բոլոր քաղաքացիների համար չկան կրթություն ստանալու, աշխատելու, ընտանիք կազմելու, սպեղծագործելու և հասարակական կյանքին մասնակցելու հավասար հնարավորություններ:

«Հաշմանդամների և սոցիալական հարցերի նախարարության փյալների համաձայն՝ 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում ապրում է ավելի քան 170 հազար հաշմանդամ մարդ: Նրանցից մոտ 9 հազարը մինչև 18 փարեկան երեխաներ են:

2007 թ. մարտի 30-ին աշխարհի 80 պետությունների հետ միասին Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ում ստորագրեց Հաշմանդամ անձանց իրավունքների կոնվենցիան:

Կոնվենցիայի նպատակն է խթանել հաշմանդամների իրավունքների լիիրավ պաշտպանությունը, նպաստել հասարակությանը նրանց ինտեգրմանն ու հավասար մասնակցությանը սոցիալական գործընթացներին:

Հաշմանդամ անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիայի 8-րդ հոդվածում, որը նվիրված է իրազեկության բարձրացմանը, ամրագրված է՝

1. անդամ պետությունները հանձն են առնում իրականացնելու անհապաղ, արդյունավետ և համապատասխան միջոցներ՝

ա) բարձրացնելու իրազեկությունը հասարակության մեջ, ներառյալ ընտանիքի մակարդակում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ և ստորաբերելու հարգալից վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ.

բ) պայքարելու կարծրափոփոխի, նախապաշարմունքների և վնասակար պրակտիկայի դեմ, որոնք առնչվում են հաշմանդամություն ունեցող անձանց հետ, մասնավորապես սեռային ու փարիքային առանձնահատկություններով պայմանավորված.

գ) բարձրացնելու իրազեկությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների ու ներդրման վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը շուրջով կվավերացնի այս փաստաթուղթը:

Այդպիսով մեր երկիրն իր պատրաստակամությունն է ցուցաբերում հաշմանդամ մարդկանց իրավունքների պաշտպանության հարցում, ինչի համար որդեգրել է հաշմանդամության սոցիալական մոդելի վրա հիմնված քաղաքականություն: Իսկ դա արդեն իր հերթին ենթադրում է հավասար պայմանների և անխոչընդոտ միջավայրի ստեղծում:

Կոնվենցիայի ընդունումը նախատեսում է մոտեցումների փոփոխություն ինչպես օրենսդրական դաշտում, պետական քաղաքականությունում, այնպես էլ զանգվածային հրապարակումներում: Սա նշանակում է, որ հայաստանյան զանգվածային լրատվության միջոցների համար խնդրի լուսաբանման նոր պահանջներ են առաջադրվում:

Սակայն ինչպես մյուս հեպտորիդային երկրներում, այնպես էլ Հայաստանում ոչ բոլոր լրագրողներն են ըմբռնում խնդրի կարևորությունը և դրա լուծման ուղիները: Խնդիրը չեն ճանաչում և դժվար են պարկերացնում, թե ինչ և ինչպես պետք է գրել, կամ ցույց փալ, որպեսզի նպաստեն խտրական վերաբերմունքի վերացմանը:

Հայաստանում հաշմանդամության հիմնախնդրի լուսաբանման առումով լուրջ անելիք կա. ՋԼՄ-ներում լուսաբանման փորձի և հմտությունների պակաս է զգացվում:

Թեմային առնչվող նոր խոսք, նոր մտածողություն է պետք: Բացի այդ, ՀՀ քաղաքականությունը նոր մտերցումներ է ցուցաբերում հաշմանդամների խնդիրների լուծմանը, որոնք պետք է ավելի պարզ արտացոլվեն ժամանակակից լրագրամիջոցներում:

Թեմայի լուսաբանման համար հաշմանդամ մարդկանց խնդիրներով զբաղվող հայաստանյան կազմակերպությունները նոր չափանիշներ և սկզբունքներ են առաջարկում, որոնք ավելի մարդասիրական են և համապատասխանում են ժողովրդավարական հասարակության չափանիշներին: Դրանք ևս պետք է հիմնաքար ծառայեն լրագրամիջոցների համար այս խնդրին անդրադառնալիս:

Ինչ վերաբերում է ՋԼՄ-ների կողմից ցուցաբերած հեղափոխությանն այս խնդրի նկատմամբ, ապա ուսումնասիրությունները ցույց են փալիս, որ մեր լրագրողները բնական հեղափոխություն են ցուցաբերում թեմային, այնքան, որքան սոցիալական մյուս խնդիրների նկատմամբ: Եվ որքանով հասարակության մեջ ընդհանրապես սոցիալական թեմաներն են արդիական, այդքան էլ հաշմանդամության խնդիրը:

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի (ԲՏԻ) ուսումնասիրությունները ցույց են փալել, որ արդի հայաստանյան

մամուլում Կրեմլի գրած հրապարակումների 0,8%-ն ամբողջությամբ նվիրված է փոքրամասնություններին: 2004 թ. դրանց 40,6%-ը նվիրված է եղել հաշմանդամության թեմային: 2005 թ. այս ցուցանիշն աճել է 13,9%-ով կազմելով 54,5%: Այս առումով Հայաստանն առաջատար է Կովկասում (Ադրբեջան՝ 30%, Վրաստան՝ 5%)⁸: Շար կարևոր է նաև, թե թերթի որ էջում է տպագրվում հրապարակումը: Հայրնի է, որ ամենակարևոր նյութերը հրապարակվում են առաջին էջերում, հերևաբար այստեղ գերեղված նորություններն ու իրադարձությունները լայն հասարակության ուշադրության են արժանանում: Մինչդեռ հայաստանյան մամուլում փոքրամասնություններին վերաբերող նյութերի (որից 54,5%-ը հաշմանդամությանը վերաբերող) միայն 3,1%-ն է հրապարակվել առաջին էջերում:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ ՋԼՄ-ներն այսօր ավելի շարհակված են ժամանցային, առևտրային գործառնոյթներ կատարելու, և սոցիալական կարևորության թեմաները կարծես հեղին պլան են մղվել: Ընդհանրապես, փորձագետները ՋԼՄ-ների դերը երկրի հասարակական կյանքում շարհ ցածր են գնահատում: Դրա համար կան ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Նախ և առաջ Հայաստանում հասարակական գործընթացների վրա ամենամեծ և լուրջ ազդեցությունը թողնում է հեռուստատեսությունը, որը հատկապես վերածվել է կոմերցիոն ինդուստրիայի: Հայաստանում ընդհանրապես չկա հանրային հեռարձակում, այլ միայն Հանրային հեռուստատեսություն: Մեր բոլոր հեռուստաընկերությունները տարբեր պատճառներով արտապուլում են ոչ թե հանրության, այլ տարբեր իշխանական օղակների, տնտեսական և քաղաքական վերնախավի շահերը:

Տպագիր մամուլը փոքր տպաքանակի պատճառով չի կարող գալի ազդեցություն ունենալ խնդրի լուծման վրա: Բացի այդ,

պարբերականներն այնքան էլ հակված չեն այդ թեմաներին անդրադառնալու, որովհետև հասարակական գիտակցության մեջ դեռևս չի կարևորվում սոցիալական թեման՝ որպես քաղաքացիական հասարակություն հաստատելու գործոն: Ինքնաֆինանսավորումը ևս թույլ չի փալիս ընդհանուր պահանջարկին դեմ գնալ:

Ռադիոյի՝ սոցիալական հարցերում ունեցած նվազագույն ազդեցությունը պայմանավորված է նրանով, որ այն առավելապես ժամանցային ուղղվածություն ունի: Չնայած իր մեծ սփռմանը և լսարանին՝ ռադիոն շատ ավելի քիչ հնարավորություններ ունի հասարակական կարծիքի ձևավորման գործում, քան մամուլը:

Այս պայմաններում դժվար է խոսել ՋԼՄ-ների՝ հասարակական գործընթացների վրա որոշակի դրական ազդեցություն ունենալու կամ հանրային կարծիքի ձևավորման հնարավորության մասին: Մասնագետները հաստատում են, որ հասարակության խնդիրների լուծման գործում ՋԼՄ-ները որոշակի դեր, այնուամենայնիվ, ունեն, բայց միայն այն դեպքերում, երբ որոշվում են մանր կենսադային խնդիրներ:

Հաշմանդամության խնդիրը ևս դիտելով այդ տեսանկյունից՝ պարզ է դառնում, թե զանգվածային լրատվության միջոցներից որն ինչպես է անդրադառնում խնդրին, ինչ խորությամբ, ինչ հեփաքրքրություն է ցուցաբերում:

Մեր հարցումները և ուսումնասիրությունները ցույց են փալիս, որ, այնուամենայնիվ, կան լրագրողներ, որ անդրադառնում են այդ խնդրին, և իրենց պրոֆեսիոնալ կարողություններով, անձնական հեփաքրքրասիրությամբ և նախաձեռնություններով փորձում են նպաստել թեկուզ մանր կենսադային, բայց հաշմանդամ մարդկանց խնդիրների լուծմանը:

Ովքեր երկար փարհներ անդրադարձել են այդ թեմային, հասկանում են՝ փրեցփարի ինչ պահանջներ են առաջադրվում թե՛

լուսաբանման, թե՛ նույն այդ խնդիրների լուծման համար: Եթե 10 փարի առաջ խնդրի մասին պարզապես խոսելը, բարձրաձայնելն արդեն մեծ բան էր, ապա այսօր դա բնական պահանջ է, և խոսքը մարդու իրավունքների ապահովման, հավասար հնարավորությունների ստեղծման, կրթության և զբաղվածության մասին է:

Խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ ներկայացուցիչների, հաշմանդամ մարդկանց և ոլորտի պատասխանատուների կարծիքներն այս հարցի շուրջ միանշանակ չեն:

Ոմանք համոզված են, որ հաշմանդամության թեման լրագրողներին քիչ է հեփաքրքրում: Քաղաքականությունը նրանց ավելի է գայթակղում, շարերը հաշմանդամությունն այնքան էլ լուրջ և ամենօրյա լուսաբանման արժանի սուպիլական խնդիր չեն համարում:

ՀԿ ղեկավարները, հաշմանդամ մարդիկ էլ այն կարծիքի են, որ թեման քիչ է հեփաքրքրում լրատվամիջոցներին, որովհետև խնդրին անդրադառնում են առիթի առիթ՝ սենսացիա գտնելու թաքուն ցանկությամբ: Հարցվածներից շարերն էլ համոզված են, որ կան լրագրողներ, ովքեր հեփաքրքրվում են խնդրով, անհանգստացած են և ուզում են լավ գրել: Բայց կան նաև լրագրողներ, ովքեր հեփաքրքրվում են միայն շոու սարքելու նպատակով:

Հայաստանյան ՋԼՄ-ների սակավաթիվ կանոնագրերում գրեթե չեն ամրագրված հաշմանդամ մարդկանց խնդիրները լուսաբանելու էթիկայի նորմերը: Նմանափոխ նորմերի կամ կանոնների լրագրողները հիմնականում չեն ծանոթանում ոչ մասնագիտական կրթություն ստանալիս, ոչ էլ լրագրողական սեմինարների և վերապարաստումների մասնակցելիս: Լրատվական կազմակերպու-

թյունները և ակումբները ևս նրանց այդ սկզբունքներին չեն ծանոթացնում: Լրագրողներն այդ թեմային անդրադառնալիս առաջնորդվում են սեփական բարոյական սկզբունքներով ու չափանիշներով:

Այս ուղեցույցը հաշմանդամության խնդրի վերաբերյալ ԶԼՄ-ների տեղեկատվության երկարամյա մոնիթորինգի արդյունք է: Ուսումնասիրվել են 2004 թ. հոկտեմբերից 2008 թ. փետրվարը հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների հեռուստատեսության, ռադիոյի, էլեկտրոնային և տպագիր մամուլի հրատարակումները՝ նվիրված հաշմանդամության խնդրին, մասնավորապես՝ «Առավոտ», «Երկիր», «168 ժամ», «Ազգ», «Հայք», «Հայաստանի Հանրապետություն», «Ժամանակ երևան» «Օրինաց երկիր», «Սևան», «Զանգակ», «Ճիչ» տպագիր, «Արմենիանու», «Պանորամա», «Առեղիս» էլեկտրոնային պարբերականներում հաշմանդամության թեմայով հրատարակված նյութերը, Հանրային ռադիոյի «Լյունսե» երիտասարդական ծրագիրը, «Ազատություն» ռադիոկայանի «Մաքսլիբերթի» հաղորդումը, «Ռադիոհայի» «Լուսմա» ծրագիրը, ինչպես նաև տարբեր ռադիոկայանների լրատվական ծառայությունները:

Ուսումնասիրել ենք նաև Հանրային, «Շանթ», «Երկիր մեղիս», «Վենտրոն», «Շողակաթ» հեռուստաընկերությունների հաղորդումները:

Հարցում է անցկացվել տպագիր և էլեկտրոնային մամուլի լրագրողների, հեռուստառադիոլրագրողների, խմբագիրների, ռեժիսորների, օպերատորների, ոլորտի պատասխանատուների, հաշմանդամ մարդկանց, նրանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ⁹:

Թեման ընտրելու և ուսումնասիրելու հիմնական պատճառն այն է, որ նախադեպ Հայաստանում չկա: Որևէ լրատվական

կազմակերպություն, լրագրողական դպրոց կամ հասարակական կազմակերպություն չի անդրադարձել այս խնդրին և չի արել որևէ հեղափոխություն, բացառությամբ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի «Փոքրամասնությունների մասին մամուլի հրապարակումների 2004-2005 թթ. մոնիթորինգը»¹⁰, որի 9 մասերից մեկը նվիրված էր հաշմանդամների խնդիրների լուսաբանմանը:

Ուսումնասիրությունը հնարավորություն կտա քաջալերելու հաշմանդամ մարդկանց մասին ավելի հավասարակշռված, տեղեկացված և ներառական լրատվության հաղորդումը ԶԼՄ-ների կողմից և կարող է աջակցել հաշմանդամ մարդկանց համայնքներին, նրանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններին ԶԼՄ-ների և սեփական լրատվամիջոցների օգնությամբ իրենց շահերը պաշտպանելու գործում:

Գլուխ 1

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1.1. Հաշմանդամության խնդրի բժշկական և սոցիալական մոդելները ԶԼՄ-ներում

1988 թվականի երկրաշարժից հետո մարդիկ կարեկցանք ու գթասրբություն ցուցաբերելուց զատ՝ խղճահարությամբ էին նայում աղետի հետևանքով հաշմանդամ դարձած հազարավոր համերկրացիներին, և դա բնական էր: Միակ օգնությունը, որ նրանք կարող էին այդ ժամանակ ակնկալել, մարդասիրականն էր, որին շատ շուտ ընտելացան ոչ միայն աղետից տուժածները, այլև մեր նորանկախ հանրապետության մյուս բնակչությունը: Համարարած աղքատության մեջ ամենախոցելի խմբում հայտնված հաշմանդամ մարդիկ չէին կարող մրտածել կրթության, հասարակությանն ինտեգրվելու և լիարժեք կյանքի մասին:

Միակ ու գլխավոր սպասելիքը թե՛ պետությունից և թե՛ այլ կազմակերպություններից հումանիտար օգնությունն էր: Արդյունքում ԶԼՄ-ներում տեղ գտնող հրապարակումները խղճահարություն, գուրթ, օգնելու ցանկություն առաջացնելուն էին ուղղված: Այսպես լրագրողը մարդուն օգնելու իր անկեղծ մղումն էր արտահայտում, և խնդիրը լուսաբանվում էր առավելապես հաշմանդամության բժշկական մոդելի¹¹ տեսանկյունից, այսինքն՝ հաշմանդամ մարդուն դիտում էր որպես խնամքի օբյեկտ: Այս տեսանկյունից հաշմանդամ մարդու փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամող, ընտանիք, հասարակություն): Հասարակությունը սահմանափակում է կրթության, մասնագիտու-

թյան, աշխատանքի և այլ հնարավորությունները հաշմանդամ մարդու համար, որին համարում է հիվանդ, միայն խնամքի կարող:

Բժշկական մոդելը սահմանում է, որ մարդը հաշմանդամ է դառնում ֆիզիկական, մտավոր, սենսորային պրոբլեմների, առողջության կորստի կամ հոգեկան հիվանդության հետևանքով: Նա զրկվում է կենսական ինքնուրույն ընտրություններից և դառնում է «հիվանդ», «խնամյալ», ում կյանքում մասնագետները դնում են բազմաթիվ սահմանափակումներ: Դա հանգեցնում է հաշմանդամների սոցիալական մեկուսացման ու չի նպաստում նրանց ներգրավմանը հասարակական կյանքին:

1993 թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամներն ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական բոլոր այն իրավունքները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1978 դեկտեմբերի 9-ի ընդունած «Հաշմանդամների իրավունքների մասին» հռչակագրում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, սույն օրենքում և օրենսդրական այլ ակտերում¹²: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է հաշմանդամների անհատական գրանցման, նրանց կողմից իրենց ընդունակությունների, իրավունքների ու ազատությունների իրացման, Հայաստանի Հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հասարակական կյանքի տնտեսական և սոցիալական բնագավառներին մասնակցելու պայմանների և հնարավորությունների ապահովումը¹³:

Սակայն ռադիո- և հեռուստահաղորդումներում, տրամադրված է ելեկտրոնային մամուլի հրատարակումներում մինչ օրս ընդունված է հաշմանդամին ներկայացնել որպես անլիարժեք, հիվանդ,

խնամքի և արտոնությունների կարիք զգացող մարդու: Լրագրողը հաճախ ծայրահեղորեն կենտրոնանում է հաշմանդամ մարդու ֆիզիկական խնդրի վրա, ողբերգական երանգներ մտցնելով փորձում է խղճահարություն առաջացնել լսարանի մեջ և հաշմանդամ մարդուն ներկայացնել զոհի կարգավիճակում:

«Տեղ այս արևի տակ»¹⁴ հոդվածում, խոսելով հաշմանդամ կանանց գեղեցկության ֆոտոմրցույթի հաղթողի մասին, հեղինակը նախաբանում շեշտում է հերոսուհու բժշկական խնամքը՝ մը և նյութի հիմնական ու եզրափակիչ մասերն ամբողջությամբ նվիրում աղջկա հաշմանդամության պատմությանը, նրա տարած վիրահատություններին և բուժմանը: «Շիկահեր, համեստ այդ աղջկան ի ծնե դրվել էր «ձախ ոտքի հեմափոմա» դիագնոզը: Երկու տարեկան հասակում արդեն վիրահատություն է արվել, սակայն ոտքն անշարժությունից չի հաջողվել փրկել: 6 ժամ տնած վերջին վիրահատությունը շար բարդ էր, դա հազվագյուտ դեպք է, երբ հեմափոման աղիների վրա է տարածվում: Ավետան շար բարի ու համեստ անձնավորություն է, երբեք ոչ մի բանից չի դժգոհում: Նա լավ գիտեր, որ այս վիրահատությունն իր միակ հույսն է...»:

Այստեղ ակնապես ենք անհարկի կենտրոնացման հաշմանդամ մարդու ֆիզիկական խնդրի վրա, ինչի արդյունքում խամրում է հերոսուհու անհատականությունը, որպես լիարժեք մարդ հանդես գալու նրա հնարավորությունը: Փոխարենը սրեղծվում է պաթոս, որի քողի տակ 17-ամյա գեղեցկուհին ընթերցողին ներկայանում է տանջված ու տառապած հերոսուհի, ով, «ի հեճուկս ամեն ինչի», ապրում է ու «նույնիսկ» գեղեցիկ է:

«Խաթարված ձակարագրեր» հրապարակումը ևս այն մոտեցման բնորոշ արտահայտություն է, թե բարեգործությունն ու գթասիրությունը հաշմանդամի համար միակ օգնությունն են մարդկու-

թյան կողմից, իսկ իրական աջակցություն կարող է ցուցաբերել միայն պետությունը, այն էլ՝ արտոնությունների միջոցով. «Ինչքան էլ հասարակությունն աջակցի (գումարների փոխանցում հիմնադրամների հաշվեհամարներին, պարզապես լավ վերաբերմունք, ջերմ ասված խոսք, հոգատարություն շրջապատի կողմից և այլն), այնուամենայնիվ, այսպեղ հստակ պետական մոտեցում է անհրաժեշտ. ռազմավարական ծրագիր, սակայն գիտակցելով մեր պետության այժմյան տնտեսական իրավիճակը՝ ակնկալվում է թեկուզև փոքր, բայց պետական աջակցություն: ...Հաշմանդամներին գոնե անհրաժեշտ է արևածաղիկ բույսի նման արևի, լույսի, տաքության մի շող, այսինքն՝ օրենքով սահմանված արտոնություններ»¹⁵:

Անշուշտ, ԶԼՄ-ի ուղղվածությունը մեծ նշանակություն ունի թեմայի լուսաբանման ձևի և առանձնահատկությունների համար: Սակայն որքան էլ երիտասարդական, ժամանցային լրատվամիջոցներին հատուկ է զգացմունքայնությունը, այնուամենայնիվ բարեգործական, բժշկական տեսանկյունից լուսաբանումները միայն ամրապնդում են բժշկական մոդելի հնապսած մոտեցումները և դրանցից սերող կարծրափայերը:

Ռադիոհաղորդումներից մեկի ժամանակ լրագրողը պատմում է հատուկ խաղալիքների մասին, որ ստեղծվել են հատուկ կարիքներով երեխաների համար: Ռեպորտաժը սկսվում է խաղալիքների նկարագրությամբ, ինչը ռադիոթերից «տեսանելի» է դարձնում գույնզգույն և հետաքրքիր խաղալիքների մի ամբողջ խումբ: Այուժեն ավելի մանկական և կենդանի է դարձնում որպես ֆոն օգտագործված մանկական երգը: Սակայն հաղորդման կեսից հեղինակը սկսում է թվարկել հաշմանդամության տեսակները՝ դրանք անվանելով հիվանդություն. «Աուտիզմ, դաուն, մանկական ուղեղային կաթված, խոսքի խանգարում. սրանք են հիմնականում այն հիվանդությունները, որոնցով տառապում են

«Նռանիի» շահառուները: Այստեղ նրանց ցուցաբերվում է համապատասխան անվճար բուժում»¹⁶:

Տպավորություն է ստեղծվում, որ գործ ունենք հիվանդ և անօգնական երեխաների հետ, որոնց ամենևին էլ հարկավոր չեն խաղալիքներ: Իսկ հաղորդման վերջում հնչող հափուկ մանկավարժի խոսքն այն մասին, որ դրանք օգնում են երեխաներին, և որ ծնողներն ասում են, թե դրանց շնորհիվ իրենց երեխաներն ինքնագրվում են հասարակություն, ոչ միայն համոզիչ չէ, այլև ապարդյուն է այլևս, որովհետև լրագրողը բժշկական տերմիններ և պիտակներ օգտագործելով ունկնդրի մեջ խղճահարություն է առաջացնում, և այդ զգայմունքային դաշտում կորչում է այն կարևոր տեղեկությունը, որ մարուսեղ էր հաղորդման սկզբում՝ խաղալիքների ստեղծման անհրաժեշտությունն ու դրանց օգտագործման արդյունքները:

Երբ լրագրողն առաջին հերթին նշում է հաշմանդամության տեսակներն ու պատճառները, երկրորդ պլան է մղվում մարդկանց աշխատանքին, ընդհանրությանը, զբաղմունքին, նախասիրություններին վերաբերող տեղեկատվությունը, լսարանն այլևս չի կարողանում ընկալել այն տեղեկությունը, որը կօգներ հաշմանդամ մարդուն որպես լիարժեք և իրեն հավասար մեկը ընդունելու:

Հարյված հաշմանդամ մարդկանցից շատերը նշում են, որ լրագրողների հետ զրույցի ընթացքում վերջիններս հիմնականում անհարկի կենտրոնանում են իրենց խնդրի վրա: Թեև լրագրողի հետ նույն զրույցում խոսում են իրենց հաջողություններից, ձեռքբերումներից և այլ կարևոր բաներից, այնուամենայնիվ վերջում հիմնական շեշտը դնում են հաշմանդամության վրա՝ անտեսելով հաջողությունները:

Շատ բան կախված է ոչ միայն նրանից, թե լրագրամիջոցի ինչ տեսակով է լուսաբանվում խնդիրը, այլև այն հանգամանքից,

թե հողվածն ինչի մասին է: Եթե խոսքը մասնագիտական հանդեսների, թերթերի, հրապարակումների մասին է, ապա անշուշտ այսօրեղ ընդունելի են խիստ մասնագիտական (այս դեպքում՝ բժշկական) մանրամասներն ու շեշտադրումները: Սակայն լայն հասարակության համար ամենևին կարևոր չեն նման մանրամասներն ու պարզաբանումները: Հեռու ենք այն մտքից, թե լրագրողը պետք է խուսափի հաշմանդամության մասին տեղեկություններ տալուց: Ամենևին: Այս դեպքում էլ ընթերցողը չի ստանա ամբողջական և լիարժեք տեղեկություն: Սակայն մարդու խնդիրն կամ հաշմանդամությանը պետք է անդրադառնալ այնքանով, որքանով դա նպատակահարմար ու արդարացված է ն՝ հողվածի հերոսի, ն՝ ընթերցողի համար, այնքանով, որքանով կլուծենք տեղեկատվությունն ամբողջական դարձնելու լրագրողի մասնագիտական խնդիրը:

Մեկ այլ օրինակ. «Առավոտից իրիկուն նկարում է: Եթե չի էլ նկարում, հեռուստացույցի առաջ նստած փողոճում է դրսալ՝ աշխարհում դիզայներական արվեստն ուր է հասել: Ուզում է լավ նկարիչ-դիզայներ դառնալ: Արմինեն թույլ լսողություն ունի, դա է պատճառը, որ աղջիկը տնից գրեթե դուրս չի գալիս»¹⁷:

Այսօրեղ լրագրողն ընթերցողին իրագեկում է, որ խոսքը թույլ լսողություն ունեցող աղջկա մասին է, սակայն կարևորվել են նրա կարողությունները, ընդունակություններն ու անհատականությունը: Այսպես ընթերցողին հնարավորություն է տրվում հերոսուհու մեջ տեսնել նախ և առաջ սրբազորություն, արարող ու լիարժեք մարդու, ով խնդիր ունի: Այսինքն՝ առաջին պլանում մարդու անհատականությունն է: Շարունակելով կարդալ հողվածը՝ ընթերցողն աստիճանաբար ծանոթանում է այն խնդիրներին, որոնց հանդիպում են խուլ կամ թույլ լսող մարդիկ՝ շրջակա միջավայրի, հասարակության վերաբերմունքի և այլ՝ հերոսուհուց դուրս առկա հանգամանքների պատճառով:

Այսպես արդեն հաշմանդամության թեման լուսաբանվում է ոչ թե բժշկական, այլ սոցիալական մոդելի¹⁸ տեսանկյունից:

Սոցիալական մոդելը հաշմանդամության հիմնախնդիրը դիֆարկում է որպես մարդու իրավունքների հիմնախնդիր: Պաշտպանում է հաշմանդամ մարդու՝ կրթություն, մասնագիտություն ստանալու, աշխատելու, հանգստի և վերականգնման, ամուսնանալու, երեխա ունենալու, մարզական միջոցառումներին մասնակցելու իրավունքները, այսինքն՝ այն ամենը, ինչի կարիք ունեն բոլոր մարդիկ: Այդ իրավունքները պաշտպանվում են մի շարք միջազգային փաստաթղթերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երեխայի իրավունքների կոնվենցիա, Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ստեղծման ստանդարտ կանոններ, Հաշմանդամ անձանց իրավունքների կոնվենցիա:

Սոցիալական մոդելը հաշմանդամությունը սահմանում է որպես ֆիզիկական, մտավոր, սենսորային և հոգեկան խանգարումներով մարդու գործունեության սահմանափակում, որն առաջանում է հասարակության մեջ գոյություն ունեցող պայմաններով, որոնք մարդուն դուրս են մղում գործունեության փոքր ոլորտներից: Այսինքն՝ ոչ թե հիվանդությունն է առաջացնում գործունեության սահմանափակում, այլ՝ պայմանները: Ըստ այս մոդելի՝ մարդը հաշմանդամ է ոչ թե այն պատճառով, որ հիվանդ է, այլ որովհետև միջավայրը հարմարեցված չէ նրա կարիքներին: Եթե այս մոդելը գործի, բոլոր մարդկանց համար հավասար հնարավորություններ կստեղծվեն՝ անկախ նրանց ֆիզիոլոգիական վիճակից:

Փորձելով պարասխանել «Ինչո՞ւ է մարդը հաշմանդամ» հարցին՝ բժշկական մոդելի տեսանկյունից հրապարակված հոդվածներն ու հրապարակումները հիմնականում գրում են. «Մարդը հաշմանդամ է, որովհետև չի կարող քայլել», «Մարդը հաշմանդամ

է, որովհետքն չի տեսնում» և այլն: Այնինչ սոցիալական մոդելի տեսանկյունից գրված նյութերի պատասխանները կլինեն «Մարդը հաշմանդամ է, որովհետքն միջավայրը հարմարեցված չէ նրա կարիքներին» կամ «Մարդը հաշմանդամ է, որովհետքն նա չունի համապատասխան տեղեկություն ստանալու հնարավորություն»¹⁹:

Պատահում է, որ նկարահանման ժամանակ հերոսները կամ ծնողները նկատում են, թե ինչպես է, օրինակ, օպերատորը նախ նկարում մարդու ուրքերը, նրա քայլակը՝ կենտրոնանալով միայն ֆիզիկական խնդրի վրա, հետո միայն մարդու: Այդպիսի դեպքերում նկարահանվողները երբեմն միջամտում են: Նրանք կարծում են՝ միշտ չէ, որ պարտադիր է ցուցադրել դժվարությունները, և որ ավելի շար պետք է դրականը ցույց տալ:

Սոցիալական մոդելի տեսանկյունից լուսաբանելիս լրագրողը շեշտը դնում է այն բանի վրա, որ հաշմանդամ մարդիկ տարբերվում են իրենց մտավոր կարողություններով, անձնական հատկանիշներով և հետաքրքրություններով նույն չափով, ինչ չափով ոչ հաշմանդամ մարդիկ:

1.2. ՁԼՄ-ների դերը հաշմանդամ մարդկանց նկատմամբ կարծրափայերը կոտրելու գործում

Հանրության իրազեկության պակասից է, որ հաշմանդամների մասին գոյություն ունեն կարծրափայեր՝ հաշմանդամ մարդը չի կարող սովորել, աշխատել, նա դժբախտ է, միշտ հիվանդ է, միայն մշտական խնամքի և բուժման կարոտ, չի կարող ընտանիք կազմել և այլն և այլն:

Տեղեկություններ հավաքելիս նախ պետք է փորձել գնահատել բոլոր կանխակալ կարծիքները կամ նախապաշարմունքները: Իհարկե, մարդը կարող է ունենալ իր սեփական կարծիքը,

սակայն լրագրության առաքելություններից մեկը սեփական և հասարակության կանխակալ մտքերի ուսումնասիրությունն է: Որևէ խմբի կարծիքը մյուսի մասին մեծավ մասամբ հիմնվում է ոչ թե փաստերի, այլ կարծրափայտերի վրա, թեև դրանք էլ հաճախ ճշմարտության փարր են պարունակում: Օրինակ՝ «Հաշմանդամ մարդիկ բարդությոներ ունեն»:

Կարծրափայտերը ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի մասին կայուն պատկերացումներ են՝ ձևավորված անձնական փորձի կամ դրա բացակայության հիման վրա: Որպես կանոն՝ դրանցից շարտերը ձևավորվում են մանուկ հասակում: Բոլոր մարդիկ այս կամ այն չափով ունենում են կարծրափայտեր: Դրանք օգնում են հստակեցնելու տեղեկությունը, որ ամեն օր ահռելի քանակով ստանում ենք, բայց չեն փախս փվյալ երևույթի մասին ամբողջական ու իրական պատկեր և հաճախ աղավաղում են այն: Ունենում են ազդեցություն մեր վարքագծի վրա փարբեր մակարդակներում²⁰, ինչպես նաև պետական ծրագրերի ստեղծման ժամանակ: Հաճախ լրագրողները լուսաբանում են թեման՝ ելնելով սեփական պատկերացումներից, և դիտողներն ընկալում են հարդրողները լրագրողի ներկայացրած պրիզմայով: Լրագրողների բրիտանական ազգային միության վարքականոնում ամրագրված է, որ լրագրողը պետք է խտրականություն, ծաղր, նախապաշարմունք կամ արելություն սերմանող նյութեր չպատրաստի²¹:

Փորձառու լրագրողը պետք է բացահայտի այդ սոցիալական խմբի նկատմամբ իր ունեցած կանխակալ կարծիքը, իսկ հետո՝ հարցազրույց անցկացնելիս և պատմությունը կազմելիս, փորձի մի կողմ դնել այդ գաղափարները: Եթե կարծրափայտին մոտեցում կա այն մարդկանց նկատմամբ, ում մասին պետք է գրել, սակայն լրագրողը դա չի գիտակցում, ապա ամենայն հավանականությամբ դա կդրսևորվի թե հարցերում և թե գրածում:

Հաճախ, երբ լրագրողները որոշում են անդրադառնալ խնդրին, առաջին հարցազրույցն անում են իրենց ծանոթ կամ հարազատ մարդու հետ, որպեսզի ազատ խոսելու խնդիր չունենան: Սակայն մյուս հերոսների հետ չգիտեն ինչպես խոսել, ինչպես դիմել և շուրով հասկանում են, որ իրենք ավելի շատ բարդություններ և կարծրափայեր ունեն, քան դիմապինը, ում վերաբերվում են իբրև հիվանդի:

Շուրով հաշմանդամություն ունեցող հերոսները, սակայն, սկսում են լրագրողներին օգնել, երբ նկատում են, որ նրանք չափից շատ են անհանգստանում: Կարծում են, թե, օրինակ, կույրերին քայլելու ընթացքում պարտադիր օգնություն է պետք: Հաճախ երկար ժամանակ է պետք լինում, որպեսզի լրագրողները գիտակցեն, որ իրականում կարիք չկա այդքան զգույշ լինելու սայլակին նստած մարդու հետ, և որ նրա ոչ մի տեղը չի ցավում: Շատ լրագրողներ են անկեղծանում, որ իրենց որոշ ռեպորտաժներով ոչ թե կոտրել են մարդկանց կարծրափայերը, այլ հակառակը՝ ակամայից խորացրել են դրանք:

Կարծրափայերին զոհ դառնալը խնդրին անտեղյակ լինելու, հաշմանդամների հետ շփման փորձ չունենալու հետևանք է: Բերենք մի քանի օրինակ:

«Երիտասարդի կյանքն իմաստավորվեց, երբ նա ամուսնացավ Թագուհու հետ, ով դարձավ նրա անբաժան ուղեկիցը, իսկ որդու ծնունդը սրիպեց նրան մոռանալ ամեն ինչ»²²: Այս տողերը մի հողվածից են, որը պատմում է տեսողության խնդիր ունեցող երիտասարդի մասին: Մի կողմից՝ ընթերցողը տեսնում է, որ հողվածի հերոսն անձնական կյանք, ընդհանրում ունի, սակայն մյուս կողմից՝ այնպիսի փայլունություն է, որ նա կնոջ ձեռքը բռնած է շարժվում և ապրում, այնինչ ամենևին էլ այդպես չէ: Մեր զրույցները տեսողության խնդիր ունեցող անձանց հետ

պարզել են, որ նրանց մեծ մասն ուղեկցության կարիք ունի, սակայն թույլ տեսնող կամ կույր մարդիկ, մեկ անգամ արդեն ծանոթանալով տեղանքին, հեշտությամբ կարողանում են կողմնորոշվել փարածության մեջ, ավելին՝ նրանք ինքնուրույն հագնվում են, սնվում և կարող են միանգամայն անկախ լինել իրենց անձնական կյանքում:

Մի հաշմանդամ կնոջ մասին լրագրողը գրում է. «Ձեռագործ սովորեցնողն ասում էր՝ չես կարող մի ձեռքով, բայց ես չլսեցի. որոշել էի սովորել ու սովորեցի»: Հիմա Բերձորի, Վակունիսի ու Կովսականի նրա ընկերների տներում Լեռնուհու ձեռագործ աշխատանքներն են սփռոցներ, գուլպաներ, ժիլետներ. «Ուրիշները մի գործվածքը մի շաբաթում են գործում, ես երկուսում կգործեմ»²³:

Այստեղ ներկայացվել են հաշմանդամ մարդու հնարավորությունները, այն, թե ինչ օգուտ կարող են բերել նրանք հասարակությանը: Հեղինակը հրաժարվել է այն կարծրափայից, թե հաշմանդամ մարդիկ միայն խնամքի կարոտ են և չեն կարող օգտակար լինել: Որքան շատ է հողվածում երևում, որ հաշմանդամ մարդը հասել է ինչ-որ բանի, այնքան քիչ նշանակություն է տրվում նրա հաշմանդամությանը կամ ուրիշներից փարբերվելուն:

Սակայն ԶԼՄ ներկայացուցիչներից բոլորը չէ, որ ունեն նույն կանխակալ վերաբերմունքը հասարակության խոցելի խմբերի նկատմամբ: Բայց երբ լրագրողը նոր-նոր է սկսում թեմայով հեփաքթրվել, մրածում է, թե մարդկանց անպայման պետք է հուզել: Ժամանակը և փորձը, իհարկե, իրենցն անում են, և այսօր շատերը, բնականաբար, խուսափում են դրանից, որովհետև գիտեն, որ դա ճիշտ չէ, և որ պետք է պարզապես փաստեր ներկայացնել: դրանք ավելի խոսուն են: Լսարանն էլ պետք է փաստը գնահատի: Այսօր քիչ չեն նաև այն հրապարակումները, որոնք կոպրում են հասարակության կարծրափայերը:

Երբ լրագրողը հաշմանդամ մարդկանց ներկայացնում է որպես հասարակության լիարժեք անդամներ, այլ ոչ թե պասիվ, ոչ ինքնուրույն դիպորդներ, նա նաև ցույց է փալիս, որ կրթություն, մասնագիտություն ստանալու հավասար հնարավորությունների, համապատասխան տեխնիկական պայմանների և սոցիալական ծառայությունների առկայության դեպքում հաշմանդամ մարդիկ կարող են մեծ օգուտ բերել իրենց ընտանիքներին և հասարակությանը:

Մինչ խնդրի լուսաբանումը շարժերը ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաներին որպես «խեղձ» են ընկալում: Բայց հետո, երբ սկսում են նյութեր պատրաստել, ՀԿ-ներ այցելել, շփվել, հասկանում են, որ շար սովորական մարդիկ են, և նույնիսկ շար ավելի հեղաքրքիր և կայացած, քան մյուսները, որ խնդիրներ չունեն: Գիտակցում են, իհարկե, որ հաշմանդամությունը լուրջ խնդիր է, և մարդուն բազմաթիվ հնարավորություններ են պետք հասարակական կյանքին լիարժեք մասնակցելու համար, բայց նաև հասկանում են, որ հաշմանդամությունն ընդամենը առանձնահատկություն է, որով նա փարբերվում է մյուսներից: Ինչպես, օրինակ, մեկի աչքերը կանաչ են, մյուսինը՝ սև, մեկը այս հնարավորությունն ունի, մյուսը՝ մեկ այլ, մեկը երաժշտական լսողություն ունի, մյուսը չունի, մեկն ունի վարժ քայլելու հնարավորություն, այս մյուսը՝ ոչ:

Հաճախ լրագրողներն ընկնում են մեկ այլ ծայրահեղության մեջ և անհարկի պաթոսով են գրում հաշմանդամի մասին: Նրան ներկայացնում են որպես «ոչ մի դժբախտության առաջ չընկրկող» հերոսի, որին քիչ է մնում շքանշանով պարգևատրեն միայն այն բանի համար, որ նա կա, ապրում է. «Մինչդեռ մեր քաղաքում, մեր կողքին ապրում են մարդիկ, որոնց կյանքի յուրաքանչյուր վայրկյանը պայքար է հանուն հենց այն

նույն կյանքի, որը նրանք իմաստավորում են իրենց ապրելով... Նա Արցախյան ազատամարտի մասնակից է, առաջին կարգի հաշմանդամ, որը ծանր վիրավորվելուց հետո գերմարդկային ճիգերով վերագտնում է իրեն ու փորձում աշխատել, ընտանիքը պահել»²⁴:

Ինչ խոսք, մեր երկրում հաշմանդամ մարդու համար լիարժեք կյանքով ապրելն այդքան էլ հեշտ չէ, եթե չասենք՝ գրեթե անհնար, բայց նրանք իրենց հերոս չեն համարում, իսկ առօրյա խոչընդոտներն ու դժվարությունները հաղթահարելը նրանց համար դարձել է նույնքան սովորական ու բնական, որքան մյուսների համար այլ կենցաղային խնդիրներ լուծելը:

Հաշմանդամ մարդուն անհարկի հերոսացնելու կամ նրան կարգավորելու խղճահարություն առաջացնելու փոխարեն լրագրողները պետք է հաղորդեն գործնական տեղեկություններ, որոնք առօրյա կյանքում օգտակար կլինեն ոչ հաշմանդամ մարդկանց՝ հաշմանդամ մարդկանց հանդիպելիս, հաղորդակցվելիս: Մեր հարցումները ցույց են տվել, որ ընթերցողին միշտ հետաքրքրում է նաև, թե ինչպես է, ասենք, կույր մարդը սովորում, հայ ուրում, կամ կարող է արդյոք սայլակ օգտագործողը մեքենա վարել:

Կարծում ենք՝ մարդիկ մեծ հետաքրքրությամբ կկարդան «Անավարտ պատմություն» հոդվածի այս տողերը. «Համալսարանում պատմություն ուսանելու համար կույր երիտասարդին անհրաժեշտ է ամեն օր ամբողջ կիսամյակի ընթացքում օգտագործել երեք 90-րոպեանոց ձայներիզ»²⁵:

Մեկ այլ հոդվածում, որ պատմում է ձեռքեր չունեցող աղջկա մասին, հեղինակը գրում է. «Երբեմն ընկերուհիների հետ դիսկո ակումբ է գնում, երբեմն, երբ ծնողներին հարմար չի լինում, փոքր եղբոր ծնողական ժողովներին է մասնակցում... Մերին ինք-

նուրույն ճաշում է, արամները վանում, նույնիսկ մեծ վարպետությանը սուրճ է եփում սուրճը լցնում սրճեփը, վառում գազօջախը, հեփո սրճեփից առանց մի կաթիլ կորստի՝ սուրճը բաժանում է բաժակների մեջ: Այդ ամենն անում է միակ ուրքի ու բերանի օգնությամբ: Բերանի օգնությամբ Սերին նաև նկարում է»²⁶:

Անշուշտ, այս մանրակրկիտ նկարագրությունները միայն նպաստում են, որ ընթերցողը համակողմանի և լիարժեք տեղեկություն ստանա հերոսուհու առօրյա կյանքի, հմտությունների, նախասիրությունների մասին: Չկա խղճահարության որևէ երանգ, այլ ականափեսի շարադրած փաստերի միջոցով ներկայացվել է լիարժեք կյանքով ապրող աղջկա կերպարը:

Լուսաբանման գործընթացը «լրագրողի կարծրափայային մրաժեղակերպ-լրագրողական նյութ-հասարակություն» փակ շղթա է, որն անընդհատ վերարտադրվում է: ԶԼՄ-ները խուսափում են կորուկ կամ էական փոփոխություններ մտցնել հրապարակումներում, ավելի համարձակ բացահայտումներ անել հաշմանդամ մարդկանց և նրանց խնդիրների մասին, հրաժարվել ավանդական մոտեցումներից: Հայաստանյան ԶԼՄ-ներից քչերն են անդրադառնում հաշմանդամ մարդու անձնական կյանքին՝ ենթադրելով, որ այն չի կարող դասավորվել, և դա նրա համար ցավոտ թեմա է: Երբեք չենք տեսնի, որ լրագրողը հարցազրույց վերցնի մրավոր խնդիրներ ունեցող մարդուց կամ նրա ուղղակի խոսքն օգտագործի իր հոդվածում:

Այնինչ ավելի զարգացած երկրներում լուսաբանումներն ամբողջությամբ կառուցվում են կարծրափայտ կոփրելու սկզբունքի վրա, օրինակ՝ ավելի հաճախ են անդրադառնում մրավոր խնդիրներ ունեցող մարդկանց հաջողություններին և, ընդհանրապես, հաշմանդամ մարդկանց ցույց են փալիս կյանքի բոլոր ոլորտներում և իրավիճակներում:

1.3. Լրափվածի ծոցներում կիրառվող լեզուն և բառեզրերը

Բառերն ու արտահայտությունները վիրավորելու, ինչպես նաև սփոփելու մեծ ուժ ունեն։ Լրագրողը պարփավոր է իրագեկ լինել, թե այն խմբի անդամները, ում մասին գրում է, ինչպես են նախընկրում, որ իրենց անվանեն։

Հաշմանդամ մարդիկ շատ զգայուն են իրենց բնութագրող բառերի նկատմամբ։ Այն երկրներում, որտեղ հավասար հնարավորությունների համար շարժումը դարձել է առավել ակտիվ, գործածության մեջ են մտել բնորոշումներ ու հասկացություններ, որոնք չեն հարուցում խղճահարություն կամ այլ բացասական զուգորդություններ²⁷։ Բառերն առաջացնում են զուգորդություններ, որոնք կարող են ձևավորել կարծրափայեր, դրանք էլ իրենց հերթին՝ հասարակական վերաբերմունք։

Հարկավոր է հատկապես ուշադիր լինել այնպիսի արտահայտություններ գործածելիս, ինչպիսիք են, օրինակ՝ «ինչպես բոլորին հայտնի է» կամ «ակնհայտ է, որ»։ Նման արտահայտություններով լրագրողները սովորաբար ներկայացնում են իրենց սեփական կամ իրենց սոցիալական խմբի կարծիքը, և միանգամայն հավանական է, որ այն, ինչ «բոլորին հայտնի է», հիմնված է նախապաշարմունքի վրա կամ էլ կոնկրետ իրավիճակի, փաստերի արտացոլում է։

Հաճախ հաշմանդամ մարդու մասին գրելիս լրագրողն օգտագործում է բժշկական բառեզրեր՝ վերցնելով մարդու հիվանդության պատմությունից, որոնք սակայն ոչինչ չեն ասում մարդու դժվարության կամ խնդրի մասին, այլ միայն ավելորդ կարծրափայ են ստեղծում նրա նկատմամբ՝ ներկայացնելով որպես հիվանդ ու անկարող մարդ։ Նման բացասական օրինակներ են՝ անկարող, դեբիլ, ոչ նորմալ, ֆիզիկական արատ, անվասայլակին գամված, փռապալում է ցերեքրալ պարալիչից, պոլիոմիելի-

տի զոհ, հիվանդ, թուլամիտ երեխա և այլն: Այս արտահայտություններն անցանկալի զգացողություններ ու վերաբերմունք են ծնում:

«Համրերի, խուլերի, տեղաշարժման խնդիրներ ունեցող քաղաքացիների համար քաղաքային միջավայրին հարմարվելու միջազգային չափանիշներ կան, որոնք տանելի են դարձնում հաշմանդամների տխուր կենցաղը ժամանակակից զարգացած երկրներում»²⁸:

Քննարկելով վերը նշված օրինակը նախ նշենք, որ «խուլ ու համր» արտահայտությունն օգտագործելիս լսարանի մեջ տպավորություն է ստեղծվում, թե այս մարդկանց հետ շփվելն անհնար է, այնինչ լսողության խնդիրներով որոշ մարդիկ կարող են խոսել, իսկ նրանց մեծ մասը հաղորդակցվում է ժեստերի լեզվով: Ինչ վերաբերում է «տանելի են դարձնում տխուր կենցաղը» արտահայտությանը, ապա այստեղ գուցե ոչ մի կոպիտ «սխալ» չնկատվեր, եթե դա հաշմանդամ մարդկանց կյանքին ու առօրյային չվերաբերեր: Այնինչ լրագրողը չի էլ մտածել, որ իր ենթատեքստը խոսում է «անտանելի կյանքի և տխուր կենցաղի» մասին, որը կարծես օրինաչափ է հաշմանդամների համար:

Հաճախ լրագրողական նյութերում գործածվում են բառեր, որոնք պարզապես ընդունելի չեն հաշմանդամության սոցիալական մոդելի դիտանկյունից. «Օրենքում նշվում է, որ ընտրելու իրավունք հաշմանդամներն ունեն ուղեկցությամբ: Մինչդեռ ուղեկցության կարիք ունեն անդամալույծներն ու կույրերը»²⁹:

Քաղաքակիրթ աշխարհը վաղուց հրաժարվել է այնպիսի բառերից ու արտահայտություններից, ինչպիսիք են՝ անդամալույծ, հիվանդ, անկարող, խեղված, խեղանդամ, ոչ լիարժեք, ոչ նորմալ, հիվանդության զոհ, խեղձ, անբախտ:

Սակայն, ցավոք, մեր լրագրամիջոցների լուսաբանումներում

շարունակում ենք հանդիպել այսօրինակ արտահայտությունների:

Ռադիոհաղորդումներից մեկի ժամանակ լսում ենք. «Դառուները մարդկային շփումներում շատ բարի են, նրանց նեղացնել, սակայն, չի կարելի»³⁰: Այնպիսի փրկավորություն է, թե խոսքը ոչ թե մարդկանց, այլ բնությանը դեռևս անծանոթ էակների մասին է, որոնք անգամ մարդկային անուն չունեն:

Հաշմանդամ մարդիկ, նրանց խնդիրներով զբաղվող անհայրներն ու կազմակերպությունները ողջ աշխարհում մշակել և լրագրողներին են առաջարկում «չեզոք», կարծրափայեր չառաջացնող արտահայտություններ: ՄԱԿ-ը ևս իր առաջարկություններն է անում լրագրողներին³¹.

- հաշմանդամ բառի հականիշը ոչ հաշմանդամ-ն է (ոչ թե հաշմանդամ - նորմալ կամ հաշմանդամ - առողջ).
- մանկույց հաշմանդամ (ոչ թե բնածին արար).
- հաշմանդամ մարդիկ (ոչ թե հաշմանդամներ).
- թույլ փեսնող, թույլ լսող (ոչ թե փեսնողության և լսողության թերություններ ունեցող).
- անվասայլակ օգրագործող (ոչ թե անվասայլակին գամված):

«Իրենց փարիքին հատուկ՝ երեխաները չափից դուրս ակտիվ էին և ուրախ բացականչություններով վազվզում էին թեժայող կրակի շուրջբոլորը... Նրանցից մի քիչ հեռու, սայլակին գամված, իր հասակակիցների շարժումներին անփարբեր ու լուռ ունկնդրում էր Սևակը...»³²: Այս փողերը խղճահարություն են առաջացնում երեխայի նկատմամբ:

«Սայլակին գամված» արտահայտությունը փրկավորություն է սփռվածում, որ նա ընդհանրապես չի բաժանվում սայլակից, այնինչ անվասայլակն ընդամենը փեղաշարժման միջոց է օգրագործողի համար. վերջինս կարող է նստել նաև աթոռին, մեքենայում

կամ հենակներով քայլել: Այս դեպքում կարելի է ասել՝ անվասայլակ օգտագործող, բայց եթե նույնիսկ վերը բերված օրինակում ավելի չեզոք արտահայտություն արվեր, ապա խղճահարություն հարուցող երանգիս լրագրողը չէր խուսափի, որովհետև այսպետ շեշտը հենց դրա վրա է դրված: Լրագրողն ուզում է ցույց տալ, թե որքան դժբախտ է երեխան միայն այն պարճառով, որ մյուսների նման վազել չի կարողանում: «Աստծո կամոք Սևակն այդպես է լույս աշխարհ եկել և այդպես էլ մեծանալու է չճաշակելով երեխայական չարաճճիությունների բերկրանքը»³³, - շարունակում է հեղինակը: Այսպետ ևս կոնկրետ բառերի բացասական օրինակներ չկան, սակայն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ սայլակով տղան չի կարող խաղալ, ընկերներ և երջանիկ մանկություն ունենալ միայն այն պարճառով, որ տեղաշարժման խնդիր ունի:

Այսպես հեղինակը ոչ միայն խղճահարություն է առաջացնում, այլև կարծրատիպ ստեղծում բոլոր այն երեխաների և մարդկանց նկատմամբ, ովքեր տեղաշարժման խնդիր ունեն և սայլակ են օգտագործում: Հոդվածն ավարտվում է այս տողերով. «Բայց չէ՞ որ այսօր էլ շատ երեխաներ ծնվում են խեղանդամ կամ հաշմանդամ: Իսկ հասարակությունը, պետությունը պարտաստ չեն նրանց շրջապատել հոգատարությամբ, գուրգուրանքով, հոգալ նրանց բուժման և խնամքի հարցերը, որպեսզի նրանք իրենց մարդ զգան և մարդավարի ապրեն»: Լրագրողը փորձել է պետական այրերի և հասարակության ուշադրությունը հրավիրել: Սակայն նախ և առաջ շրջանցել է թեմայի լուսաբանման լեզվի և էթիկայի կանոնները՝ անտեսելով իր իսկ հերոսի զգացմունքները, մարդկային արժանապատվությունը, ինչպես նաև այն հաշմանդամ մարդկանց, ովքեր մեր հասարակության և գուցե նաև թերթի ընթերցողների մոտ 10 տոկոսն են կազմում: Բացի այդ, չկա առաջարկված որևէ կոնկրետ խնդրի կոնկրետ լուծում, որ

կարող էր առաջարկել լրագրողը և այդպիսով արժանանալ որոշումների կայացնողների և հասարակության ուշադրությանն ու նրանց մղել կոնկրետ քայլերի:

Շարունակելով թեման՝ հարկ է նշել, որ սովորաբար դրամափիկ երանգներ են սպեղծում «դառը ճակատագիր» կամ «ողբերգական պատահարի բերումով հաշմանդամ դարձած» արտահայտությունները:

ԶԼՄ-ներում մեծ տարածում ունի «զոհ» բառը, որը, բացի անօգնական, խեղճուկրակ, անգոր մարդու հիշեցնելուց, ողբերգական պատկեր է սպեղծում:

Հողվածներից մեկում կարդում ենք. «Դժբախտությունը, որը պատճառ դարձավ նրա փեսողության կորստյանը, պատահել է զինծառայության ընթացքում... Այո, եթե մեղավորները որոշ ժամանակով են դատապարտվել, ապա Վ. Ավետիսյանը որպես հաշմանդամ «դատապարտվեց» մինչ ի մահ»³⁴: Այսպեղ ևս հանդիպում ենք մի երևույթի, երբ հասարակության աչքում մարդուն ոչնչացնում են որպես կենսունակ, լիարժեք և լիիրավ անձ՝ ընդունակ ապրելու, աշխատելու և արարելու:

Հաճախ լրագրողները հաշմանդամ մարդկանց մասին գրելիս բավական զգույշ են մոտենում բառերի ընտրությանը, սակայն միևնույն ժամանակ ուշադրություն չեն դարձնում հասարակության մյուս անդամների բնութագրմանը: «Նրանց դեռ արհամարհում ու ծաղրում են այնպիսիները, ովքեր թեպետ արտաքինից սովորական են, սակայն խեղված են հոգեբանորեն, ինչը, կարծում ենք, ավելի սոսկալի է»³⁵:

Ուշադրություն դարձնենք որպես հաշմանդամ բառի հականիշ կիրառվող բառերի խմբին՝ առողջ, նորմալ, սովորական, լիարժեք: Եթե վերցնենք այս բառերի հականիշները, ապա կրեսնենք, որ դրանք ամենևին էլ հաշմանդամ բառի հոմանիշները չեն:

Յուրաքանչյուր լեզվում կան հափուկ բառեր հաշմանդամ մարդկանց բնորոշելու համար. դրանց մի մասը վիրավորական է, մյուսը՝ ոչ: Լրագրողը կարող է կարծել, թե կոնկրետ այս կամ այն արտահայտությունը վիրավորական չէ, սակայն դա դեռ քիչ է: Եթե հաշմանդամ մարդիկ ասեն, որ նախընտրում են, որ իրենց այլ կերպ դիմեն, ապա պետք է լրջորեն հաշվի առնել դա:

Մեր հարցումները ցույց են տալիս, որ հաշմանդամ մարդկանց հետ զրույցելիս լրագրողները չեն հարցնում ինչպես գրել կամ խոսել նրանց խնդրի մասին, ինչ բառեր կամ արտահայտություններ են նախընտրում նրանք: Եթե հարցվածներն իրենք չասեն, թե ինչն են նախընտրում, լրագրողները կամ կամաջեն, կամ էլ կկարծեն, թե ամեն ինչ գիտեն, ու հարկ չկա, որ ինչ-որ մեկն իրենց լրագրողական էթիկա սովորեցնի: Հաճախ նրանք այդպես են վարվում ավելի իրազեկ երևալու համար, սակայն եթե զրույակիցը հուշում է վարվելակերպի մասին, սիրով ընդունում են: ՀԿ ներկայացուցիչները ձեռքի փակ ունենում են էթիկայի, վարվելոթյան կանոններ, փարբեր նյութեր, որոնք ամեն հարցազրույցից հետո փալիս են լրագրողներին:

Կան եզակի ծնողներ, ովքեր գիտեն՝ ինչպես վարվել այն դեպքերում, երբ ՋԼՄ-ներում հաշմանդամ երեխային ներկայացնելու խնդիր կա. նրանք գիտեն՝ ինչպես շփվել ՋԼՄ-ների հետ, ինչ կարող են ասել, ինչ իրավունքներ ունեն նրանց հետ համագործակցելիս և այլն: Միշտ ասում են, թե ինչպիսին են ուզում լինի նկարահանումը, խոսքը ուղղակի՞ լինի, թե՞ պատմողական: Անգամ լրագրողին խնդրում են, որ մինչև նյութի հեռարձակվելը կամ փագորվելը իրենց հետ անպայման համաձայնեցնեն, որովհետև նույնիսկ մեկ ոչ ճիշտ ընտրված բառը կարող է փչացնել ամբողջ լավ աշխատանքը:

Սակայն հաշմանդամ մարդկանցից յուրաքանչյուրը չէ, որ կարող է ուղղորդել լրագրողին ճիշտ բառերի և լուսաբանման սկզբունքների ընտրության հարցում: Լրագրողը պետք է պատրաստ լինի նաև այնպիսի դեպքերի, երբ մարդը չի ուզում խոսել իր հաշմանդամությունից, ավելին՝ կտրականապես դեմ է «հաշմանդամ» բառին կամ իր ֆիզիկական վիճակը բնութագրող այլ արտահայտությունների: Այսինքն՝ լրագրող - հաշմանդամ մարդ հարաբերությունները միշտ չէ, որ կարող են ճիշտ ուղղությանմբ փանել հրապարակումը կամ լրագրողական աշխատանքը: Այստեղ զգալիորեն պակասում է օբյեկտիվության գործոնը, ինչն արդեն խոսում է լուսաբանման ցածր որակի մասին:

Լրագրողներից քչերն են, սակայն, հատուկ ուշադրություն և ժամանակ հատկացնում այս թեմաներով նյութերի նախապարտաստական աշխատանքին, խնդրի և զանազան աղբյուրների ուսումնասիրությանը:

«Երկիր» շաբաթաթերթի երիտասարդական էջի լրագրող Սերի Ալեքսանյանը ևս շատ լրագրողների նման իր հերոսների հետ խոսելիս չի հարցրել՝ ինչ բառեր օգտագործել: Սրածեղ է, որ դա նրանց ավելի կկաշկանդի: Սակայն իր առաջին թղթակցությանը պատրաստվել է բավական երկար: Խոսել է խնդրով զբաղվող փարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ «Փյունիկ», «Կամք և կորով», «Հույսի կամուրջ»: Զրույցել է հաշմանդամ երեխաների ծնողների փոխօգնության խմբի համակարգողի, հաշմանդամ երիտասարդների, երեխաների հետ աշխատող հատուկ մանկավարժի և հոգեբանի հետ: Ուսումնասիրել է կազմակերպությունների փորձառատ փեղեկատվական թերթիկները, փարբեր փեղեկատվական կայքեր: Արդյունքում՝ նրա առաջին հոդվածից մի բառ անգամ չի կրճատվել. վեջջանոց նյութում անդրադարձել է հաշմանդամ երեխաների կր-

թության, նրանց ծնողների իրազեկության, հասարակական վերաբերմունքի և միջավայրի մաքրելիության խնդիրներին, ինչպես նաև հաշմանդամային սպորտին և զբաղվածությանը վերաբերող հարցերին: Եվ այդ ամենն առանց որևէ «սխալի» կամ անհարկի արտահայտությունների:

Նույնիսկ մի քանի անգամ թեմային անդրադարձած լրագրողներին առ այսօր անհանգստացնում է բառերի ընկերության խնդիրը: Նրանց թվում է, թե գուցե կան բառեր, որ ճիշտ չեն արտասանում, տերմիններ կամ հաշմանդամության տեսակներ, որ էլի չգիտեն և այլն: Հաճախ խորհրդակցում են ծրագրի ղեկավարի, խմբագրի կամ գործընկերներից մեկի հետ, ով փորձառու է այդ հարցում: Հաճախ մեկ այլ միջոց էլ են կիրառում. փորձում են իրենց դնել այն մարդու տեղը, ում մասին պատրաստում են ռեպորտաժը, և պատկերացնել՝ եթե այսպիսի բան լսեն իրենց մասին, ինչ կզգան, կվիրավորվե՞ն արդյոք, կամ ունկնդրի մեջ ի՞նչ զգացում կառաջացնի այն: Աշխատելու այս եղանակն օգնում է շարժերին: Լավ «հոտառություն» ունեցող լրագրողները նաև միշտ լսում են, թե իրենք՝ հաշմանդամ մարդիկ, ինչպես են դիմում միմյանց, ինչպես են խոսում խնդրի մասին, ինչ բառեր են օգտագործում:

Փորձը ցույց է տալիս, որ չվիրավորելու վախից լրագրողները երբեմն սխալ են համարում «հաշմանդամ» բառի հաճախակի կիրառումը:

«Ի դեմս «Փյունիկի»՝ շնորհակալություն հայտնելով շահագրգիռ հասարակական կազմակերպություններին՝ միաժամանակ հայցում եմ ընթերցողի ներողամտությունը՝ հաշմանդամ բառը շարժ օգտագործելու համար»³⁶: Այս հետգրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հեղինակի բացասական վերաբերմունքի արտահայտումն այդ բառի նկատմամբ: Նմանօրինակ դեպքերը ոչ միայն խորաց-

նում են հասարակության նախապաշարմունքները «հաշմանդամ» բառի հետ կապված, այլև սուբյեկտիվությամբ ապակողմնորոշում են լսարանին:

Ռադիոեթերներից մեկի ժամանակ լսում ենք. «Ռումբա» մշակութային ծրագիրը, որը համախմբել է հաշմանդամության հարցերով զբաղվող մի քանի ՀԿ-ների, նպատակ ունի առավելագույնս ներգրավել փաղանդավոր հաշմանդամ դերասանների մշակութային ոլորտ»³⁷: Նախաբանը փրամադրում է կարծրատիպերից, սահմանափակումներից և այլ նախապայմաններից ազատ գրույցի, քանի որ խոսքը փաղանդավոր մարդկանց, արվեստի և մշակույթի մասին է: Անշուշտ, այս թեմաներն առավել մեծ հնարավորություն են ընձեռում ընդունված սահմաններից ու չափանիշներից դուրս գալու և երևոյթների վրա նոր հայացք գցելու համար: Բայց թեման շարունակվում է. «Ծրագիրը նպատակ է հետապնդում հայտնաբերել կատարող հաշմանդամների, բայց մինչ հայտնաբերելը սահմանափակ հնարավորությունների փեր մարդիկ կարծես մի փեսակ սրվեցում են մնացել»:

«Սահմանափակ հնարավորություններ» արտահայտությանը, որը գուցե ֆիզիկական կամ բժշկական փեսանկյունից ճիշտ է, մարդու հնարավորությունները բնորոշելու իմաստով և գործած փավորությամբ ավելի բացասական երանգ է հաղորդում բովանդակությանը: Եվ, որ ամենակարևորն է, հաղորդումը գուրկ է զարգանալու և մարդու հնարավորությունների անսահմանափակության մասին խոսելու գաղափարից:

Թեև լրագրողներից շարքերի հողվածներն ու հարցազրույցները խղճահարություն հարույցող բառեր չեն պարունակում, այնուամենայնիվ արտահայտությունների ընտրության հարցը արդիական է նրանց համար: Հարկապես փապգիր մամուլի աշխատակիցը խուսափում է անընդհատ նույն բառն օգտագործելուց,

օրինակ՝ շարունակ գրել «հաշմանդամ», հարկապես եթե կարծում է, որ հաճելի չէ, եթե մի տեքստի մեջ անընդհատ այդ բառը հանդիպի:

Պետք է նկատի ունենալ, որ հաշմանդամ բառը հոմանիշ չունի: Այն հարկ է գործածել որպես որոշիչ, ոչ թե որպես որոշյալ: Նախադասության մեջ այն կարող է լրացնել երեխա, մարդ, երիտասարդ և այլ գոյականների՝ հաշմանդամ մարդ, հաշմանդամ երեխա: Ինչ վերաբերում է կրկնություններին, ապա դրանցից խուսափելու համար ոչ մի դեպքում չի կարելի նոր բառեր և բառակապակցություններ հնարել, քանի որ դրանք իրենց հերթին նոր գուգորդություններ և կարծրափայտեր կառաջացնեն: Այս դեպքում առաջնայնությունը պետք է տալ ոչ թե ոճական առանձնահատկություններին և բազմազանությանը, այլ պարզաճությանը:

Անդրադառնալով մրցի ձևակերպմանը՝ չի կարելի անտեսել մեկ նրբություն ևս. հակադրությունները ևս անցանկալի են հաշմանդամ մարդու մասին պատմելիս կամ նրա հետ զրուցելիս: Հիմնականում լրագրողը դրանք կիրառում է կոնտրաստի հասնելու, դրականը շեշտելու համար, բայց այս դեպքում դա խորացնում է բացասական իմաստը: Օրինակ՝ «Չնայած Ալեքսանդրը կույր է, սակայն նա զարմացնելու աստիճան քաղաքավարի և ուշադիր վերաբերմունք ուներ իր հյուրերի նկատմամբ»: Թվում է, թե լրագրողն առանձնակի ուշադրություն է հրավիրում հերոսի քաղաքավարության վրա, բայց ասվածը ենթադրում է, որ հաշմանդամ մարդը սովորաբար զուրկ է փարրական հմտություններից: Այս նախադասությունը զավեշտի է վերածում չնայած - սակայն հակադարձումը:

Ուզենք թե չուզենք՝ հաշմանդամ մարդկանց մասին խոսելիս հակադրական շղկապները նույն արդյունքն են տալու. ամեն ինչ հակադրելու են հաշմանդամությանը, ինչն անընդունելի է

այն դեպքում, երբ մենք ուզում ենք մարդն ընդունվի հասարակության մեջ և ներառվի կյանքի բոլոր ոլորտներում իր առանձնահատկություններով և փարբերություններով հանդերձ: Սա, թերևս, այն նրբություններից է, որ հայաստանյան լրավամիջոցները դեռևս չեն գիտակցել: Այնինչ պարզապես հարկավոր է խուսափել փարբեր հակադրական շահկապներից ու կապերից, երբ հարկ է խոսել հաշմանդամությունից: Կարելի է միտքը շարունակել նոր նախադասությամբ: Օրինակ՝ վերը նշված նախադասությունը վերաշարադրել հետևյալ կերպ. «Ալեքսանդրը կույր է: Նա զարմացնելու աստիճան քաղաքավարի և ուշադիր վերաբերմունք ուներ իր հյուրերի նկատմամբ»: Կարելի է նկատել, որ նույնիսկ նախադասությունների անմիջական հաջորդականության դեպքում հերոսի կուրությունը և քաղաքավարությունն ու ուշադրությունը չեն հակադրվում միմյանց: Նախադասությունը ընթերցողին է փալիս ընտրության հնարավորություն՝ որպես հակադրություն, թե՞ որպես լրացում ընդունել արձանագրած փաստերը:

Սխալ բառագործածությունն ու մտքի ոչ պարզաձև ձևակերպման պարզառներից մեկն այն է, որ լրագրողները հաճախ խուսափում են հաշմանդամ մարդուն հարցեր փալ նրա հաշմանդամության մասին: Այս խնդիրը հուզում է շարերին: Սա, թերևս, այն հարցն է, որ հեղաքրքրում է բոլորին, անկախ մասնագիտությունից, ինչն էլ պետք է նկատի ունենա հատկապես լրագրողը՝ իր ընթերցողների հեղաքրքրությունները բավարարելիս կամ ամբողջական փեղեկություն հաղորդելիս: Սակայն թե ինչպե՞ս դա անել՝ անձնական համարձակության կամ էթիկայի հարց է:

Մեր հարցումները ցույց են փալիս, որ լրագրողներից քչերն են հարցազրույցի, ակնարկի դեպքում ուղիղ հարցեր փալիս

իրենց գրույակցի հաշմանդամության մասին: Նրանք դա փորձում են պարզել մտերմիկ գրույցի ընթացքում և հրապարակում են այն, ինչ հերոսն ինքն է պատմում իր մասին:

Հարցվածների թվում եղան մարդիկ, ովքեր համոզված են, որ հաշմանդամության մասին ուղղակի հարցեր փառ ճիշտ չէ: Սակայն այս դեպքում վրանգ կա, որ տեղեկությունը կարող է ամբողջական չլինել: Ավելին՝ հաճախ լրագրողներն այդ տեղեկությունը իմանում են հերոսի հարազատներից կամ մտերիմներից, ինչը ևս նրան չի ապահովագրում սխալներից և անձշտություններից:

Հեղինակներից շատերը հիմնականում հարցնում են այդ մասին՝ գիտակցելով, որ հերոսի իրավունքն է՝ ասել, թե՞ ոչ: Սակայն վերջին հաշվով դա հասարակությանը տեղեկացնելու համար է: Եթե նա չի ուզում, որ հասարակությունն իմանա այդ մասին, լրագրողն իրավունք չունի նրա կամքին հակառակ հրապարակել դա: Նրանք փաստում են, որ ուղղակիորեն չեն հարցնում նշե՞ն հաշմանդամության մասին կամ տեսակը, բայց սովորաբար հարցնում են, թե ինչպես է դա պատահել: Մի խոսքով՝ ուղիղ հարցերի միջոցով չեն պարզում: Եթե մարդը պատմում է այդ մասին, ուրեմն ուզում է, որ գրեն:

Տեղեկատվական նյութեր պատրաստելիս հակառակը՝ լրագրողը նախ և առաջ հարցնում է հաշմանդամության տեսակը, ախտորոշումը, կարգը և այլն՝ հետագայում դա օգտագործելով հիմնականում նախաբանում: Կարծում ենք՝ պատճառն այն է, որ հատկապես օպերատիվ լրատվության ոլորտում աշխատողներն առաջնային տեղեկությունը երկրորդականից զատելու կարճ ճանապարհին նույնիսկ նվազագույն ժամանակ չեն հատկացնում մրտնոցելու՝ արդյո՞ք իրենց գրույակցի առաջնային տարբերակիչ հատկությունը հաշմանդամությունն է:

Հանրային հեռուստատեսության և «Երկիր մեդիայի» լրատվական թողարկումներում արձանագրվել են դեպքեր, երբ ռեպորտաժում հնչող սինքրոնի ժամանակ փոփոխություն մարդու անուն-ազգանվան փակ որպես հավելյալ տեղեկություն նշվել է «հաշմանդամ»:

1.4. Հաշմանդամության խնդրի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրները, լուսաբանման նախաձեռնումը

Ժողովրդավարական պետության համար շար կարևոր է, որ սոցիալական բոլոր խմբերը ԶԼՄ-ներով իրենց կարծիքն արտահայտելու և ձայնը լսելի դարձնելու հնարավորություն ունենան: Լրագրողները հաշմանդամության խնդրին անդրադառնալիս դիմում են պաշտոնական աղբյուրներին, հաշմանդամ մարդկանց, ինչպես նաև այլ աղբյուրների: Որոշ սոցիոլոգներ պնդում են, որ պաշտոնական աղբյուրները մյուսներից ավելի մեծ ուժ ունեն, որովհետև խնդրի մասին ճշգրիտ տեղեկություն կարող են տալ: Բացի այդ, պաշտոնյաներն առաջինն են, ում դիմում են լրագրողները որևէ տվյալ կամ տեղեկություն ստանալու համար: Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի հայաստանյան գրասենյակի տվյալների համաձայն Հայաստանում հաշմանդամ մարդկանց մասին տեղեկատվության 55,1%-ը լրագրողները ստանում են պաշտոնական աղբյուրներից և միայն 22,4%-ը՝ հաշմանդամ մարդկանցից կամ այլ աղբյուրներից³⁸:

Սակայն, ցավոք, Հայաստանում պաշտոնական աղբյուրներից հաճախ հնարավոր չէ շար բան իմանալ:

Մինչև 2008 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարությունը ցանկացած իրազեկում իրականացնում էր ԶԼՄ-ների կամ գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներով: 2008 թ. նախարարության ոլորտի հարցերի շուրջ հանրային իրազեկման համար պեդագոգիկ հատկացվել է 15 մլն դրամ: Այդ գումարը նախատեսված է միջոցառումների երկու խմբի համար: Առաջինը տպագրություններ են՝ ինչպես սեփական, այնպես էլ թերթերում պատվիրված հոդվածների տեսքով: Երկրորդը հեռուստաժամերն են՝ ամսական 2 անգամ 20 րոպե տևողությամբ, որոնց շարքում նաև հաշմանդամության խնդիրն նվիրված եթերներն են:

Սակայն որքան էլ նախարարության ինտերնետային կայքը հագեցած է բազմաբնույթ տեղեկատվությամբ, վիճակագրական տվյալներով, այնուամենայնիվ հաշմանդամության խնդիրը լուսաբանելու՝ լրագրողների համար նախատեսված ուղեցույցը մինչ օրս տեղադրված չէ այնտեղ, թեև գոյություն ունի: Նախարարությունը ԶԼՄ մոնիթորինգ չի անում. պարզապես մարդկային ռեսուրսներ չունի, և նրան օգնում են ՀԿ-ները:

Իսկ ՀԿ-ները վաղուց ունեն առաջարկների այն փաթեթը, որով ներկայանում են լրատվամիջոցներին: Լուսաբանման գլխավոր և առաջնային սկզբունքները հասանելի են թե՛ ՀԿ-ների ինտերնետային կայքերում, թե՛ գրասենյակներում:

Եվ պարահական չէ, որ լրագրողների մի մասը կարծում է, որ տեղեկատվության լավագույն աղբյուրը ՀԿ-ներն են:

Հաշմանդամ մարդկանց մասին գրելիս չափազանց կարևոր է այդ խմբի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ անցկացնել և վերջիններիս դիրքորոշումներն ընդգրկել հրապարակման մեջ: Հակառակ դեպքում նրանք հանդես են գալիս ոչ այնքան իբրև այդ հոդվածի «սուբյեկտներ», որքան որպես «կրողներ»: Ոչ մի հոդվածում չպետք է քննարկվի մարդկանց մի ամբողջ

խումբ՝ առանց փվյալ խմբի անդամներին ներկայացնելու, սեփական փեսակեպը ներկայացնելու հնարավորություն ընձեռնելու:

Սակայն հարցումները ցույց են փալիս, որ ԶԼՄ-ները բավարարված չեն փեղեկափութայան բազմազանությամբ և ոչ մի փեղից պատշաճ փեղեկություն չեն սփանում: Պատճառը նաև այն է, որ ձկուն մասնագիտական մրաժողություն ունեցող լրագրողները նոր-նոր են կայանում երկրում: Շափերի համար կանոն է, որ անպայման 3-4 աղբյուր պեպք է ունենան ինչ-որ խնդրի մասին խոսելիս: Այս հարցում նրանց օգնում են հատկապես ՀԿ-ները: Դա ամենօրյա քրփնաջան աշխատանք է, ինչի շնորհիվ փարեցփարի լրագրողները նոր հմտություններ են ձեռք բերում և բավականին հեշտ պատրաստում այդ փիպի նյութերը:

Ինչպես բոլոր մյուս դեպքերում, այնպես էլ այս թեման շոշափելիս լրագրողներն օգտագործում են իրենց անձնական կապերը՝ ընկեր, ծանոթ, ոլորտում աշխատող ՀԿ-ներ և այլն: Եթե թեման հեփաքրքրում է նրանց, աղբյուրի հեփ կապված խնդիր երբևէ չեն ունենում:

Մեր գրույցները լրագրողների և հաշմանդամության խնդրով գբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հեփ փաստում են, որ ԶԼՄ-ներով հարցը լուսաբանելու և թեմային անդրադառնալու նախաձեռնությունն առավելապես ՀԿ-ներինն է, որոնք լրափվամիջոցների ուշադրությունը փորձում են հրափիրել խնդրին զանազան միջոցառումների՝ կլոր սեղանների, մամուլի ասուլիսների, մշակութային իրադարձությունների, ակցիաների միջոցով: Հասարակական կազմակերպությունների դեկավարների խոսքով՝ լրագրողների հեփ համագործակցելու և նրանց անդրադարձին արժանանալու միակ նախապայմանը առիթ սրեղծելն է: Կամ էլ հաշմանդամների միջազգային օրվա առիթով է, որ բոլոր լրափվամիջոցները միաժամանակ անդրա-

դառնում են թեմային: Սակայն հաճախ ՋԼՄ-ներն այդ առիթը որպես հիմնական տեղեկություն են ներկայացնում, առանց խնդրի խորքային վերանայման և վերլուծության:

Հաճախ լսարանն ինքն է առաջարկներ անում: Օրինակ՝ ընտրությունների ժամանակ ունկնդիրներն են հեռաձայնում խմբագրություններ, իրենց ընտրական իրավունքի հարցը բարձրացնում, տեղեկություններ հայտնում: Հենց այդպիսի դեպքերում էլ երբեմն լրատվամիջոցները գնում են հեղինակ և անդրադառնում խնդրին: Ուրեմն՝ չենք կարող ասել, որ լրագրողները միշտ պասիվ, սպասողական դիրքում են: Գրեթե յուրաքանչյուր լրատվամիջոցում կգտնվի գեթ մեկ լրագրող, ում բնական հետաքրքրասիրությունը թույլ չի տա, որ սպասի մամուլի հաղորդագրությունների կամ խմբագրի հանձնարարությունների:

Այդ մասնագետները հիմնականում անկանոն են անդրադառնում խնդրին՝ ոչ հաճախ, բայց ոչ էլ հազվադեպ. եթե ասելիք ունեն, ցանկացած պահի անդրադառնում են հարցին՝ երբեմն՝ ամիսը մի քանի անգամ, երբեմն էլ՝ մի քանի ամիս ընդմիջումով: Դա հիմնականում չկրկնելու և անընդհար նույն բանի մասին չգրելու համար է: Նրանք հաճախ հարմար առիթ են սպասում հարցին նոր տեսանկյունից մոտենալու համար, երբ, ասենք, ոլորտում գտնեն մի նոր բան կամ մի մարդ, ով նոր խոսք ունի ասելու:

Հանրային ռադիոյի «Լյունսե» երիտասարդական ծրագիրն այն եզակիներից է, որ պարբերաբար անդրադառնում է հաշմանդամության խնդրին, անկախ միջազգային օրերից և իրադարձություններից: Երիտասարդական ծրագրի ստեղծողներն առաջնորդվում են այն գիտակցությամբ, որ հաշմանդամ մարդկանց շրջանում էլ քիչ չեն երիտասարդները, այսինքն՝ հիշում են նաև լսարանի այդ հատվածի մասին, հաշվի են առնում նաև նրանց պահանջները:

Բացի այդ, դա այն խնդիրներից է, որը հուզում է երիտասարդներին և հասարակությանը: Իսկ խնդրին անդրադառնալու նախաձեռնությունը հիմնականում ծրագրի ղեկավարինն է լինում, ով լրագրողներին ուղղորդում է կազմակերպություններ, որ զբաղվում են հաշմանդամության խնդիրներով: Այդպես է սկսվում երիտասարդ աշխարակիցների համագործակցությունը փարբեր ՀՎ-ների հետ: Դրանից հետո արդեն պարբերաբար մասնակցում են նրանց կազմակերպած միջոցառումներին, հաղորդումներ պատրաստում և արդեն ուղղորդելու կարիք չի լինում, քանի որ լրագրողի մեջ ի հայտ է գալիս հետաքրքրություն խնդրի և մարդկանց ճակատագրերի նկատմամբ: Պարզապես պետք է ինչ-որ փեղից սկսել, և շղթան կշարունակվի: Թեմաներն անսպառ են, և նույնիսկ մի խնդրի մասին մեկ անգամ խոսելը բավական չէ:

Ալեքսանդր ժույկովը հետաքրքիր անհատականություն է և հաջողությունների է հասել ինչպես անձնական կյանքում, այնպես էլ մասնագիտական ոլորտում, մասնավորապես՝ երաժշտության բնագավառում: Նա երբևէ չի դիմել լրագրողներին: Հակառակը՝ միշտ վերջիններս են գտել նրան և հարցազրույց վերցրել: Այս դեպքն ինքնին բնական է, որովհետև եթե մարդը հաջողություններ ունի, անկախ ամեն ինչից, լրագրողների ուշադրության կենտրոնում է: Մեր հարցումների արդյունքում հանդիպել ենք նաև լրագրողների, ովքեր հավատացնում են, թե այս սոցիալական խնդիրն իրենց կողմից ամեննին էլ անուշադրության մատնված չէ: Բայց դա չեն վերագրում բոլոր լրագրամիջոցներին միանշանակ:

Գրողներից շատերը, փեսնելով իրենց հերոսներին հասարակությունից հեռու, մեկուսացած և միայնակ, նախ և առաջ ցանկանում են նպաստել նրանց ինֆորմանը հասարակություն, և պետության ուշադրությունը հրավիրել հաշմանդամ քաղաքացի-

ների վրա: Դա անում են հավաքալուծ, որ իրենց հերոսները հիմնականում ընդունակ են թե՛ աշխատելու, թե՛ սովորելու, և մրավախոթություն չեն ունենում, թե թերթը չի վաճառվի կամ դա չի հեփաքրքրի ընթերցողին, ունկնդրին կամ հեռուստադիտողին: Այս լրագրողները գիտեն իրենց լրագրամիջոցների առանձնահատկությունները, ուղղվածությունը և գիտեն նույնիսկ անհեփաքրքիր թեման մատուցել այնպես, որ դուր գա լսարանին: Նրանցից ոմանք նույնիսկ համոզված են, որ հաշմանդամության խնդիրն այնպիսիներից է, որ ոչ մի տեղ դժգոհություն չի առաջացնում, որևէ մեկը դեմ չէ, որ այդ մասին խոսվի:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում գրեթե չկա մեկը, ով հաշմանդամություն ունեցող ծանոթ, հարևան կամ բարեկամ չունենա: Լրագրողներից շատերին նաև մտերիմներին օգնելու ցանկությունն է մղում խնդիրն ուսումնասիրել և անդրադառնալ դրան մասնագիտական գործունեությամբ: Նրանցից շատերը՝ իրենց մտերիմների ճակատագրով մտահոգ, փորձում են պարզել նաև, թե պետությունը որքանով է հեփաքրքրվում նրանց խնդիրներով: Փորձելով օգնել՝ լրագրողները հանդիպում են փարբեր խոչընդոտների և ականավառ են լինում, թե ինչպես են շատերը վերապահումով մոտենում հաշմանդամ մարդկանց: ՋԼՍ ներկայացուցիչներից շատերը հաճախ ստիպված են ներկայանալ որպես լրագրող, որ մարդիկ սկսեն ինչ-որ շարկումներ կամ «արդարացման միջոցներ» գտնել իրենց վարքագծում:

Խոսելով իրենց աշխատանքի արդյունքների և ՋԼՍ-ների հրապարակումների մասին՝ մասնագետները նշում են, որ դեռ բոլորովին վերջերս ինչպես լրագրողները, այնպես էլ պետությունը չունեին խնդրի հստակ գիտակցում: ՋԼՍ հրապարակումներն առիթից առիթ էին լինում, այն էլ՝ եթիկասպես սխալ ձևակեր-

պումներով գրված: Սակայն երբ զարգանում է հասարակությունը, և պատասխանատու կառույցներն ավելի վճռական են դառնում, ՋԼՄ-ներին ոչինչ չի մնում, եթե ոչ այդ զարգացումներին արձագանքելը:

2003 թ. սկսեց գործել Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի հայաստանյան գրասենյակը: Շահույթ չհետապնդող, ոչ քաղաքական այս կազմակերպությունը մինչև 2006 թ. համախմբում էր լրատվամիջոցների ուժը միջխմբային կոնֆլիկտները մեղմացնելու նպատակով, առաջ էր քաշում փոքրամասնությունների և մարդու ընդհանուր իրավունքները և նպաստում հանրության կողմից սոցիալական բազմազանության ընդունմանը: Համագործակցելով մեդիակազմակերպությունների, լրագրողների, լրագրություն դասավանդողների, ՀՎ-ների և կառավարությունների հետ՝ ԲՏԻ-ն նպաստում էր ինչպես հակամարտությունները կանխելուն և կարգավորելուն, այնպես էլ խուսելի խմբերի նկատմամբ հանդուրժողականության, չեզոք և անաչառ լրագրության ձևավորմանը:

2003 թվականից ՋԼՄ-ների հետ հետևողական աշխատանք և ակտիվ համագործակցություն է ծավալում հաշմանդամության խնդրով զբաղվող «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը, որն առաջինը կարևորեց հաշմանդամության խնդրի լուսաբանումը երկրում և լրագրողների վերապատրաստումն այս խնդրի լուսաբանման համար: Ամեն տարի ավելի քան 70 լրագրողների համար կազմակերպվում են «Հասարակությունը և հաշմանդամության սոցիալական մոդելը», «Հաշմանդամության խնդրի լուսաբանման լեզուն և էթիկան», «Կարծրատիպերի հաղթահարման ուղիները», «Նոր մոտեցումներ հաշմանդամության խնդրի լուսաբանմանը» և այլ թեմաներով դասընթացներ: Կազմակերպությունն անցկացնում է հաշմանդամության թեմայով լավագույն

հրապարակումների ամենամյա մրցույթ, որի նպատակն է խթանել հաշմանդամության թեմայի հաճախակի և որակյալ լուսաբանումը լրատվամիջոցներով և հաշմանդամ մարդու մասին դրական պատկերացումների ձևավորումը:

«Հուլիսի կամուրջ» այս առիթով համագործակցում է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, որի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ կազմակերպում են սեմինարներ և միջոցառումներ, ինչպես նաև հրապարակում ուղեցույցներ՝ նախատեսված լրագրողների և լրագրողների հետ աշխատող ՀԿ-ների համար:

Հաշմանդամության խնդրի մասին ՋԼՄ արձագանքներն ավելի հաճախակի և որակյալ դարձնելու համար 2003 թվականից ամեն փարի «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն հաշմանդամության թեմայով հրապարակման մրցույթ է անցկացնում, որ կոչվում է «Արևածաղիկ»: Մրցութային հանձնաժողովում ընդգրկված են լրատվական դաշտի և հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների պրոֆեսիոնալ և հեղինակավոր ներկայացուցիչներ: Հանձնաժողովի աշխատանքը հիմնված է թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի սկզբունքների վրա:

Հանձնաժողովի անդամները նշում են, որ վերջին փարիներին թեմայի հանդեպ հետաքրքրությունն աճել է, բայց դա շահագրգիռ մոտեցում է, որովհետև հրապարակումների մրցույթ կա:

ՋԼՄ-ով ցանկացած հարյի լուսաբանման լավագույն դրդապատճառը եղել և մնում է պաշտոնյայի դերակատարությունը, նրա առնչությունը խնդրին, ունեցած հանդիպումները ոլորտի պատասխանատուների հետ, կատարած քայլերը, ծրագրերը և այլն: Հարկապես ՀՀ Ազգային ժողովի և նախագահական ընտրությունների ժամանակ հեռուստադիտողն ականատես եղավ

նման օրինակների: «Երկիր մեղիա» հեռուստաընկերության լրատվական ծրագիրը ցուցադրեց ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հանդիպումը կույրերի հետ³⁹: «Հայլուր» լրատվականը հաշմանդամությանը վերաբերող ռեկորդային (մոտ 6 րոպե փոստալային) ռեպորտաժ հեռարձակեց ՀՀ վարչապետ և նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի՝ խուլերի դպրոցում ունեցած ՀԿ-ների հետ հանդիպման մասին⁴⁰:

Մեր ուսումնասիրությունների համաձայն՝ բոլոր լրատվամիջոցների համար տեղեկատվության առաջնային աղբյուրը խնդրով զբաղվող հասարակական կազմակերպություններն են: Դա նաև պայմանավորված է նրանով, որ ՀԿ-ներից շատերի ծրագրերի և գործողությունների զգալի մաս է կազմում ՋԼՄ-ով հանրային իրազեկումը: Բավական շատ են կազմակերպությունների նախաձեռնությունները, որոնք լրատվամիջոցների ուշադրությանն արժանանալու առիթ են դառնում:

Որպես աղբյուր՝ ՋԼՄ-ների համար երկրորդ տեղում են գերատեսչությունները, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու կրթության և գիտության նախարարությունները:

ՋԼՄ-ներում շատ քիչ ենք տեսնում հաշմանդամ մարդկանց, ովքեր խոսում են իրենց խնդրի, կյանքի փորձի, ձեռքբերումների մասին: Հաճախ լրագրողներին հաջողվում է գտնել հերոսներ, որոնց պատմությունն օբյեկտիվորեն ներկայացնելը միայն բավական է, որ հասարակությունը լավագույնս տեղեկանա հիմնախնդրին և դրա պատճառներին: Սակայն միշտ չէ, որ մեր լրագրողների պրոֆեսիոնալիզմը թույլ է տալիս պարզապես չմիջատել ցանկալի արդյունքի հասնելու համար, քանի որ բացի աղբյուրներ և հերոսներ գտնելուց՝ լրագրողի համար կարևոր է նաև լռելու կարողությունը:

1.5. Հաշմանդամության հիմնախնդիրը սոցիալական գովազդում

Սոցիալական գովազդ ասելով՝ սովորաբար հասկանում ենք գովազդի այն տարատեսակը, որը վերաբերում է հասարակությանը և կապված է հանրային շահերի առանցքային խնդիրների հետ: Այս մոտեցումը լայն տարածում է գտել մեր տարածաշրջանի բոլոր երկրներում: Գոյություն ունեն այս ոլորտը կարգավորող երկու դրույթներ.

1. հեռարձակողները պարտավոր են սոցիալական գովազդների համար անվճար տրամադրել գովազդին հատկացվող ընդհանուր տարեկան եթերային ժամանակի ոչ պակաս, քան 5 տոկոսը.

2. սոցիալական գովազդը չի հաշվարկվում գովազդի թույլատրելի ժամանակի և տևողության հաշվարկման ժամանակ:

Սոցիալական գովազդը ենթադրում է հասարակական խնդիրների արժարժում, որոնք անմիջական ազդեցություն են թողնում թե՛ ամբողջ հասարակության կյանքի և թե՛ յուրաքանչյուր անձի վրա: Սոցիալական գովազդն անդրադառնում է հանրությանը հուզող բոլոր խնդիրներին առանց բացառության՝ բնապահպանությունից մինչև ծխելու խնդիրները:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում ամրագրված է, որ ԶԼՄ-ները, հեռարձակման լիցենզիա ստանալիս, պարտավորվում են իրենց տարեկան գովազդի ծավալի 5%-ը տրամադրել սոցիալական գովազդին:

Ահա թե ինչ է ամրագրում «Գովազդի մասին» օրենքի 13-րդ հոդվածը, որը նվիրված է սոցիալական գովազդին.

«1. Գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և

առևտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ փրամադրել գովազդին հարկապետող փարեկան եթերային ժամանակի (փպագրական մակերեսի) ոչ պակաս, քան 5 րոպուսը:

2. Սոցիալական գովազդի փեղաբաշխման պարվերները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, փարածքային կառավարման և փեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պեփական կազմակերպությունների կողմից:

3. Սոցիալական գովազդի արփադրության և փեղաբաշխման ծախսերը կարարվում են գովազդարուի միջոցների հաշվին»:

«Հեռուստափետության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում սոցիալական գովազդի դրույթներ ամրագրված չեն:

«Աուդիովիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը «Սոցիալական գովազդի անվճար փարածում և խթանում» ծրագրի շրջանակներում 2007 թ. օգոստոսսեպտեմբեր ամիսներին հեփազոփություն է իրականացրել հայաստանյան հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների շրջանում:

Գործող բոլոր հեռուստառադիոկայաններին ուղարկել է փեղեկարվական հարցաթերթիկ, որում ընդգրկված հիմնական հարցադրումներն են՝

- կայանը վերջին 1 փարվա ընթացքում քանի՞ սոցիալական գովազդի հոլովակ է հեռարձակել.

- ի՞նչ թեմաներով,

- ի՞նչ փոողությանը,

- ի՞նչ պարբերականությամբ,

- հոլովակի հեռարձակման համար կայանները պարվիրարփուից գումարներ գանձել են, թե՞ ոչ:

Հեղափոխության արդյունքում պարզվել է, որ հեռարձակված սոցիալական գովազդի հոլովակների թեմաներն են՝

- առողջապահություն,
- բնապահպանություն,
- ընտանիքային կյանք,
- հաշմանդամ մարդիկ:

Սոցիալական գովազդի հեռարձակման միջին քանակը օրական 3 անգամ է եղել, իսկ մեկ հոլովակը կամ հոլովակների շարքը, սովորաբար, հեռարձակվել է 1 շաբաթվա կամ 10 օրվա ընթացքում: Կայանների մեծ մասը նշել է, որ սոցիալական հոլովակներն անվճար է հեռարձակում: Միայն 1 կայան է նշել, որ անվճար սոցիալական գովազդ չի հեռարձակել, 3 կայան էլ նշել են, որ իրենց վճարել են մասամբ:

«Աուդիովիզուալ լրագրողների ասոցիացիան» 2007 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին իրականացրել է նաև հասարակական կազմակերպությունների հեղափոխություն: Հարցման երթարկված 20 հասարակական կազմակերպություններից 12-ը նշել են, որ հեռուստաընկերություններին ամբողջությամբ կամ մասամբ վճարել են սոցիալական գովազդի հեռարձակման համար: Սոցիալական գովազդի հեռարձակման համար գումար վերցրած հեռուստաընկերությունների թվում ՀԿ-ների ներկայացուցիչները նշել են «Հ2»-ը, «Կենտրոնը», «Գավառը», «Զանգակը», «Հ1»-ը, «ԱԼՄ»-ն, «Շանթը», «Ցայգը»:

Հասարակական կազմակերպությունների փրամադրած տեղեկությունների համաձայն՝ անվճար սոցիալական գովազդ են հեռարձակել «Շողակաթը», «Ար»-ը, «Երկիր մեդիան», «Հ1»-ը, «Հ2»-ը, «Կենտրոնը»:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը հաշմանդամության խնդրի իրազեկմանն ուղղված սոցիալական գո-

վագրներ է պատրաստում 1998 թվականից: «Լինենք միասին, լինենք ընկերներ» հոլովակների շարքը նվիրված էր հաշմանդամ երեխաներին: Իսկ ահա 2003-ին նկարահանված 4 տեսահոլովակները կրում էին «Հնարավորություններ բոլորին» խորագիրը: Վերջիններն անվճար ցուցադրվեցին ինչպես Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ, այնպես էլ հանրապետության մյուս հեռուստաալիքներով:

«Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադևոսյանի հավաստմամբ՝ դրա համար մեծ ջանքեր չեն գործադրվել, պարզապես նամակ է ուղարկվել հեռուստաընկերությունների ղեկավարներին, և հոլովակները օրը նվազագույնը 1 անգամ ցուցադրվել են եթերով, նույնիսկ ամենաթանկ եթերաժամերին: Գլխավոր նախապայմանն այստեղ տեսահոլովակների որակն է, ինչպես բովանդակային, այնպես էլ տեխնիկական, որովհետև հեռուստաալիքները միշտ չէ, որ համաձայն են ցածրորակ տեխնիկայով նկարահանված տեսանյութեր ցուցադրել իրենց եթերում:

Շատ մեծ դեր ունի նաև, թե ով է նկարողը: Եթե դա իր գործը լավ իմացող պրոֆեսիոնալ է և ճանաչում ունի հեռուստաշուկայում, ապա այդ աշխատանքը հեռարձակելը մեծ խնդիր չէ: Այստեղ կարևորը ոչ թե հաշմանդամ մարդկանց նկարելու և նրանց խնդիրները ներկայացնելու էթիկան է, այլ պրոֆեսիոնալ չափանիշները, որոնք, ցավոք, դեռևս փարանջափվում են իրարից:

Սակայն դա նաև մեծ գումարների հետ է կապված, որը չուներն հասարակական կազմակերպությունները:

Իսկ եթե, բարեբախտաբար, ՀԿ-ին հաջողվել է գտնել հոլովակներ նկարահանելու ֆինանսական հնարավորություն, ապա դրանք ցուցադրում է նեղ շրջանակներում, փոքր կինոդիտումների կամ միջոցառումների ժամանակ, ինչն անհամեմատ քիչ միջոցներ է պահանջում:

«Փրկություն» ՀԿ նախագահ Արփինե Աբրահամյանը նշում է, որ իրենց նկարահանած 5 հոլովակները ցուցադրելու համար դիմել են «Արմենիա», «Հ1», «Հ2» հեռուստաընկերություններին, որոնք ամեն անգամ խնդրել են զանգահարել դեկտեմբերին կամ հունվարին, երբ բյուջեի հատկացումներն են անում: Սակայն երբ դիմել են նշված ամիսներին, պարզվել է, որ սոցիալական գովազդի սահմանաչափերն արդեն լրացված են, և այլևս տեղ չունեն դրանց: Առայժմ դրանք ցուցադրվել են միայն 2005-ի հոկտեմբերին՝ «Հ2»-ով, որի եթերի 1 րոպեի համար հասարակական կազմակերպությունը վճարել է 70 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ներառյալ զեղչերը:

«Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը 2005 թ. ընթացքում իրականացրել է 19 հեռուստաընկերությունների կողմից հեռարձակվող եթերի մոնիթորինգի արդյունքների և ՀՀ օրենսդրության միջև դիֆարկված անհամապատասխանությունների համեմատական վերլուծություն: Մոնիթորինգի արդյունքներում առանձին կետ կա սոցիալական գովազդի հոլովակների հեռարձակման վերաբերյալ, որտեղ նշվում է. «Համաձայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ սոցիալական գովազդի ծավալը պետք է կազմի տարեկան գովազդային եթերաժամանակի ոչ պակաս, քան 5 %-ը: Այսինքն՝ հաշվի առնելով հեռուստաընկերության գովազդային եթերաժամանակը՝ այդ ծավալը կարող է տարբերվել ըստ որոշակի հեռուստաընկերության մրցութային պայմանների և մրցութային իր առաջարկի:

Այնուամենայնիվ, մոնիթորինգի անցկացման ընթացքում արձանագրվել են ութ հեռուստաընկերություններ, որոնք այդ ժամանակահատվածում որևէ սոցիալական գովազդ չեն հեռարձակել: Հաշվի առնելով այն փաստը, որ օրենսդրության պահանջներին սոցիալական գովազդի ծավալների համապատասխանու-

թյան հարցը որոշելու համար պահանջվում են ոչ միայն բարդ մաթեմատիկական փոկոսային հաշվարկներ, այլ նաև հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականության կանխատեսում փարվա մյուս հավավածում, անհնարին ենք համարում դիփարկել նման գովազդի ծավալների համապատասխանությունը օրենսդրությանը, քանի որ այդ գովազդը հաշվարկվում է փարեկան փոողությանը»:

Համեմատաբար ավելի մարչելի են ռադիոհողովակները: 2006 թ. «Հուլիսի կամուրջ» ՀԿ պարվերով «Իմպուլս» ռադիոկայանը Վանաձորի «Միգ FM»-ի աջակցությամբ սփեղծեց 8 ռադիոհողովակ: «Հաշմանդամությունը դարավձիռ չէ, կյանքը շարունակվում է» խորագրով 40-50 վրկ փոողությանը հողովակներից յուրաքանչյուրն իր հերոսն ուներ, ով իր օրինակով հասփարում էր ընդհանուր գաղափարը, որը պարկանում էր ոչ թե սոցիալական գովազդը պարվիրողներին, այլ սփեղծողներին: Սա հրաշալի օրինակ է, երբ պրոֆեսիոնալները հասկանում են նաև ներկայացվող խնդրի էությունն ու նրբությունները:

Հողովակներն անվճար և պարբերաբար հեռարձակվեցին «Իմպուլս» և «Ռադիոհայ» ռադիոկայաններով: Սակայն նման օրինակները շար չեն, և ուսումնասիրությունները ցույց են փարիս, որ ՀԿ-ները հակված չեն ռադիոհողովակներով իրենց ասելիքը հանրությանը հասցնելու:

Սոցիալական գովազդի ականարես գրեթե չենք եղել փարագիր և ինփերներփարյին մամուլում:

Հասարակական կազմակերպությունների շրջանում հաշմանդամության խնդրի մասին իրազեկությունը բարձրացնելու համար փարածված է սոցիալական գովազդի մեկ այլ փարարեսակ, որն այնքան էլ չի վերաբերում ՋԼՄ-ներին: Ցույապասփարանների, գրքույկների, օրացույցների, էջանիշների փեսքով հանդի-

պող ուղերձներն ու կոչերն ամենահաճախ հանդիպող քարոզչության միջոցն են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և «Հաշմանդամ մարդկանց շահերի պաշտպանություն» ՀԿ դաշինքը՝ «Առաքելություն Արևելք» դանիական կազմակերպության ֆինանսական օժանդակությամբ, 2007 թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը հայտարարել էին հաշմանդամ մարդկանց իրավունքների պաշտպանության միամսյակ: Միամսյակի նպատակն էր բարձրացնել Հայաստանում հաշմանդամության հիմնախնդիրների մասին իրազեկությունը և նպաստել հաշմանդամ մարդկանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը:

Կարելի է ասել՝ միամսյակն ամբողջությամբ սոցիալական գովազդ էր: Միջուցառումների շրջանակում տպագրվեցին Ա3 և Ա4 ֆորմատի 4000 օրինակ ցուլապատկերներ՝ «Միամանք հանուն հավասար հնարավորությունների» և «Քո վերաբերմունքն ավելի է ազդում իմ կյանքի վրա, քան իմ հաշմանդամությունը» ուղերձներով, 1000 օրինակ էջանիշ-օրացույցներ: Դրանք տարածվեցին Երևանի և մարզերի դպրոցներում, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում, Երևանի մեթոդալուծիտներում և ներքաղաքային ավտոբուսներում:

Ինչ վերաբերում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի դիրքորոշմանը, ապա այն հեռուստառադիոընկերությունների կողմից սոցիալական գովազդի հեռարձակման վերաբերյալ քննարկումներ է իրականացնում սոցիալական գովազդի տեղաբաշխման պատվերներ ներկայացնող կազմակերպությունների բողոքի դեպքում: Իսկ այդպիսի բողոքներ գրեթե չի ստացել հանձնաժողովը, հետևաբար՝ նման քննարկումներ չեն լինում:

Սոցիալական գովազդը նաև կառավարության կողմից հասարակությանն ուղղված հաղորդագրություն է և բովանդակում է հարցում, կոչ, պահանջ՝ կապված հասարակական կյանքի այս կամ այն կողմի հետ: Մասնավորապես՝ վերջինները վերաբերում են հարկերի վճարման, զինվորական ծառայության և այլ խնդիրներին: Այս առումով մեծ դեր ակնկալվում է հենց պետության կողմից: Սոցիալական խնդիրների լուծմամբ շահագրգիռ կազմակերպություններն ուսումնասիրությունների արդյունքում գործնական առաջարկներ ունեն այդ առիթով. նախ՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքում պետք է հստակ սահմանել, որ սոցիալական գովազդը փարածվում է անվճար և պետական բյուջեում գումար հատկացնել սոցիալական գովազդի պարասպան և հեռարձակման համար: Մասնագետները նպատակահարմար են համարում նաև հանձնաժողովի ստեղծումը (ամենայն հավանականությամբ՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում), որը կհամակարգի սոցիալական գովազդի սահմանման, արտադրման և փարածման հարցերը: Այդ հանձնաժողովում կընդգրկվեն կառավարության, հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը հասարակական կազմակերպությունների ներկայացրած առաջարկների հիման վրա կկազմի սոցիալական հնչողություն ունեցող խնդիրների ցանկը, կդասակարգի դրանք ըստ առաջնահերթության: Կառույցը պետական բյուջեից հատկացված գումարի շրջանակներում արտադրող ստուդիաներին և հեռարձակող կայաններին կպատվիրի նաև սոցիալական գովազդի հոլովակներ՝ այնուհետև դրանք փրամադրելով հեռուստատեսային և ռադիոկայաններին՝ անվճար հեռարձակման համար: Տվյալ հանձնաժողովը կորոշի պետական բյուջեից չֆինանսավորվող (հասարակական, մի-

ջազգային կազմակերպությունների ուժերով) գովազդների սուսիալական բնույթը և, նույնականացման դեպքում, կաջակցի անվճար փարածմանը:

Մասնագետները կարծում են նաև, որ սուսիալական գովազդի հոլովակների 50%-ը պետք է հեռարձակվի Հանրային հեռուստառադիոընկերության կողմից, մյուս 50%-ը՝ մասնավոր կայանների:

Գլուխ 2

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ

2.1. Տպագիր և էլեկտրոնային մամուլ

Տպագիր և էլեկտրոնային մամուլը նախ և առաջ առանձնա-
նում է ծավալային հնարավորություններով: Այն, ինչը հնարավոր
չէ ցուցադրել և ասել մի քանի թույլ տպագրության հեռուստա-
ռադիոէթերում, հնարավոր է արտահայտել տպագիր եղանակով:
Հիմնական պարզառնեղից մեկն էլ այն է, որ այսօր էթերը թանկ
է: Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, հա-
կապես սոցիալական հարցերի վերհանման առումով առաջին
տեղում հենց այս տեղեկատվական միջոցներն են:

«Առավոտ», «168 ժամ», «Երկիր», «Ազգ», «Հայք», «Վանա-
ձորյան խճանկար» պարբերականները և «Արմենիանաու», «Ար-
մեդիա», «Հեթք», «Պանորամա» էլեկտրոնային լրատվական մի-
ջոցներն առավել շատ են լուսաբանում հաշմանդամության խն-
դիրը, քան մյուս պարբերականները: Ցավոք, հայ պարբերական
մամուլում նկատվելի է լուսաբանման միայն քանակական աճ:
Տպագիր մամուլում դեռ գերիշխում են նկարագրություններ պար-
ունակող աշխատանքները, մակերեսային անդրադարձները և
անհարկի պաթոսը:

«Հույսի կամուրջ» կազմակերպության և «Արևածաղիկ» լրագ-
րողական մրցույթի հանձնաժողովի նախագահ Սուսաննա Թա-
ղևոսյանի հավաստմամբ՝ իրենց մրցույթին մասնակցող լրագ-
րողների թիվը նախորդ տարիների հետ համեմատած անընդհատ
աճում է, սակայն արդյունքներն ու հրապարակումների որակն

ավելին ցանկանալու առիթ են տալիս: Նրա խոսքով՝ ներկայացրած աշխատանքների մեջ ամենամեծ թիվը կազմում են մամուլում հրապարակված նյութերը:

«Արևածաղիկ» ՋԼՄ հրապարակումների մրցույթի հանձնաժողովի անդամները նշում են, թե տպագիր մամուլում իրենց համար ավելի մտահոգիչ է այն փաստը, որ առ այսօր նկատվում է ավելի շատ հասարակության մեջ խղճահարություն առաջացնելու միտումը: Այսօր դա անընդունելի են համարում, որովհետև միայն փաստերն են, որ մարդուն պետք է մտածելու տեղիք տան: Վերլուծական, հետևողական մոտեցում չկա, շարունակական շարքերը ևս բացակայում են: Մամուլում դա չի լուսաբանվում որպես հասարակական խնդիր կամ երևույթ:

«Ալեքսանդրը կույր է, սակայն դա չի խանգարել նրան, որ անգամ առանց կնոջը տեսնելու՝ ամբողջ հոգով սիրահարվի նրան»⁴¹, - գրում է «Առավոտի» թղթակիցը՝ սկսելով հաշմանդամություն ունեցող նորաստակ զույգի պատմությունը: Հեղինակն այս կերպ ավելորդ դրամատիզմ է հաղորդում պատմությանը, բայց այդ՝ այս խոսքը ենթադրել է տալիս, թե հնարավոր չէ մարդուն «ամբողջ հոգով սիրահարվել»՝ առանց նրան տեսնելու:

Հարկ է նշել, որ նույնիսկ երիտասարդական և ժամանցային այնպիսի թերթեր, ինչպիսին, օրինակ, «Ճիչն» է, իրենց էջերում չպետք է թույլ տան այն աստիճան զգայմունքայնություն, ողբերգական երանգներ և խղճահարություն հարուցող ոճ, ինչպիսին տեսնում ենք համարներից մեկում տպագրված պատմության մեջ:

«Սայլակին գամված երիտասարդ տղան սիրահարվել էր մի աղջկա: Թեև աղջիկը բոլորովին էլ սիրահարված չէր տղային, սակայն արևի աղբյուր էր հանդիսանում անտարբեր հասարակությունից մեկուսացած հաշմանդամ երիտասարդի համար: Եվ

հրաշք տեղի ունեցավ. փղան, որ անփարբեր էր կյանքում ամեն ինչի և նախ և առաջ սեփական անձի նկատմամբ, սկսել էր ամենայն բժախնդրությամբ հեղհեղ իր արտաքինին, մարմնամարդությանը զբաղվել, պարզապես ժպտալ, այո՛, սկսել էր բուռն կերպով վայելել արևի լույսը, ջերմությունը, կյանքը: Եվ ինչպես արևածաղիկն է ժպտում արևին, ճիշտ այդպես էլ հաշմանդամ փղան կյանքին էր ժպտում հայուհու աչքերի միջոցով»⁴²:

Իհարկե հիանալի է, որ հեղինակը խոսում է սիրո լուսավոր ազդեցության մասին, բայց նրա խոսքի ներքին ենթատեքստն այնքան էլ լուսավոր չէ. այսօրվա անուղղակիորեն նշվում է, որ հաշմանդամությունը ողբերգություն է, որ «սայլակին գամված երիտասարդը» պեք է անպայման անփարբեր լինի «կյանքում ամեն ինչի և նախ և առաջ սեփական անձի նկատմամբ», չհեղհեղ իր արտաքինին և այլն: Ու եթե հանկարծ նա երջանիկ զգա իրեն, դա պարզապես հրաշք կլինի:

Իսկ ահա «Հայք» օրաթերթում լույս տեսած հոդվածներից մեկում⁴³ հենց վերնագրից է սկսվում պաթեթիզմը. «Մենք խուլ ենք, բայց ամեն ինչ կարող ենք»: Հեղու էլ գրում է. «Կլոր սեղանին ներկա հաշմանդամ արվեստագետները կյանքի ու մշակույթի շարժվելի առողջ տեսակետներ հնչեցրին, քան դա կարող են անել ֆիզիկական արարներից զուրկ, բայց ուղեղից հաշմանդամ շարժվելի «մշակութաբաններ»: Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Պաթեթիզմի պարզառը հիմնականում դառնում է լրագրողի զգայմունքայնությունը: Խնդրին և երևույթներին անժանոթ՝ նա փափավորվում է իր հերոսի կյանքով, անսպասելի բացահայտումներով և այդ հույզերն ինքնըստինքյան արտացոլում հեղինակած աշխատանքում: Հաշմանդամ մարդկանց հետ ծանոթանալիս մարդկանց միշտ թվում է, թե նրանք ավելի ուժեղ են, քան մյուս-

ները, և զարմանում են, թե ինչպես են կարողանում այդպես ապրել, առավել ևս՝ ստեղծագործել, աշխատել, ընտանիք պահել և այլն: Հարցազրույցից հետո հաճախ լրագրողները երկար մտածում են, թե ինչ գրեն, ինչպես գրեն այդ նյութը: Սովորաբար այդպիսի դեպքերում ավելի շարժազայմունքային է ստացվում:

Մամուլի ծավալի առումով ավելի մեծ հնարավորություններ ունենալու հանգամանքը հաճախ բացասական է անդրադառնում լրագրողական աշխատանքի վրա: Հաշմանդամության խնդիրը բազմաթիվ ոլորտներ ունի, փարբեր կողմեր, և երբեմն տեղի սահմանափակման բացակայությունը պարզառե է դառնում, որ լրագրողը խճճվի իր բարձրագույն հարցերում:

Տարեցտարի լուսաբանումների որակը աճ է ապրում, բայց միևնույն է, դրանք հիմնականում մակերեսային անդրադարձներ են: Լրագրողը կարող է հրապարակումներում հաշմանդամության տեսակները շփոթել, մի քանի թեմա իրար խառնել, ինչի պարզառեով խնդիրը հստակ չէրևա: Օրինակ՝ «Մենք խուլ ենք, բայց ամեն ինչ կարող ենք»⁴⁴ վերնագրով հոդվածը, թվում է, թե պետք է խոսի լսողության խնդիրներ ունեցողների մասին: Բայց հոդվածի նախաբանում կարդում ենք. «Հայաստանում 148 հազար հաշմանդամ կա, որոնցից 140 հազարն ունի ընտանիքային իրավունք: Սակայն զարմանալիորեն կուսակցությունները նախընտրական գովազդերում համարյա թե անտեսել են ընտանիքային ճանապարհը»:

Նախաբանում ոչինչ չի ասվում խուլերի կամ լսողության խնդիրներ ունեցողների մասին, և նրանց հարցը ոչ մի կերպ չի կապվում նույնիսկ վերը նշված ընտանիքային ճանապարհի հետ:

Հոդվածը շարունակվում է «Հաշմանդամությունը և մշակույթը» խորագրով կլոր սեղանի նկարագրությամբ, որը կազմակերպել էր ՀԿ-ներից մեկը, և որի ընթացքում խոսվել է մշակութա-

յին միջոցառումներին, արվեստի փարբեր բնագավառներին հաշմանդամ մարդկանց մասնակցության մասին: Կրկին ոչ մի խոսք այն մասին, թե ինչ կապ ունեն խուլ քաղաքացիները երկրում կայանալիք ընտրությունների հետ: Մինչդեռ հողվածում մանրամասն ներկայացվում են հայտնի մշակութային գործիչների կարծիքները, արվեստի ոլորտում հաշմանդամ մարդկանց ունեցած փորձը և այլն: Եվ միայն բազմաթիվ կարծիքների թվում հանդիպում ենք նաև լսողության խնդիր ունեցող դերասանի խոսքը՝ «Մենք խուլ ենք, բայց կարող ենք, մենք ամեն ինչ կարող ենք», որն էլ, ըստ երևույթին, ամենամեծ փապվորությունն է գործել լրագրողի վրա և առիթ է հանդիսացել, որ վերջինս այն վերնագիր դարձնի:

Տարածված դեպք է, երբ լրագրողն իր հրապարակումը սկսում է մի թեմայով, շարունակում երկրորդով և ավարտում երրորդով: Այս մոտեցումը գուցե ընդունելի լիներ, եթե դրանք միմյանց լրացնեին, բայց ոչ կտրուկ անցումների արդյունք լինեին: Բացի այդ, նման դեպքերը չեն խրախուսվում հաշմանդամությանն անդրադառնալիս, որովհետև ոլորտներից յուրաքանչյուրը բազմաթիվ խնդիրներ ունի, որոնք առանձին և լուրջ ուսումնասիրություն են պահանջում:

Այսպիսի հողվածներ քիչ չեն հանդիպում փապգիր և էլեկտրոնային ԶԼՄ-ներում. հեղինակը խնդիրների բազմազանության մեջ կորցնում է կենտրոնանալու և թեման հստակ ներկայացնելու կարողությունը: Արդյունքում՝ հաշմանդամ մարդն ընթերցողին ներկայանում է բազմազան և հաճախ անհասկանալի խնդիրների մի կույտով, ինչը թույլ չի տալիս մինչև վերջ ընկալել հարցի էությունը:

Կարծում ենք՝ ավելի արդյունավետ կլինի անդրադառնալ մեկ թեմայի, թեկուզ խիստ նեղ, բայց դա անել հանգամանալից, խո-

րությանը, քան թե «ձեռք գցել» խնդիրների մի ամբողջ խմբի՝ չկարողանալով դրանք հավուր պատշաճի «տեղավորել» մեկ հրապարակման մեջ:

Հայաստանյան արդի մամուլում տեղ գրած հրապարակումների գրեթե կեսը կառուցված է **հերոսների** շուրջ: Երբեմն լրագրողները մեկ ճակատագրի, մեկ օրինակի միջոցով փորձում են անդրադառնալ խնդրի առանձնահատկություններին:

Հարցումների և ուսումնասիրված նյութերի արդյունքում պարզ դարձավ, որ լրագրողներից շատերը գերադասում են նյութում ունենալ հերոս, որպեսզի այն ավելի կոնկրետ և ազդեցիկ լինի: Սակայն հերոս գտնելն այդքան էլ դյուրին գործ չէ նրանց համար, ովքեր մեծ շրջապատ կամ աշխատանքային փորձ չունեն, դժվարանում են այդ հարցում:

Մամուլն ավելի շատ հերոս է ընկրում հետաքրքիր ճակատագիր ունեցողների: Փորձը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում հետաքրքրվում են այն մարդկանց պատմությամբ, ում հաշմանդամությունը ձեռքբերովի է, և ովքեր կպատմեն նաև հենց այդ դեպքի մասին:

«Այս տարի գյումրեցի Հովհաննես Լուկոյանը կբոլորի 40-ամյակը: Մտերիմները նրան Հովուոս են անվանում: Հովուոսը երկու տարեկանում հիվանդացել է պոլիոմիելիտով և զրկվել քայլելու կարողությունից: Ասում է (կարծես դրանում բացարձակ ճշմարտություն կա), թե այդ հիվանդությունը «կաշուն» է ֆիզիկապես ուժեղ երեխաներին: Բժշկական «կարծիքի» հետ դա՛ շատ հնարավոր է, որ ընդհանրություն չունենա, բայց սա կարելի է դիտել լեզբնդ, որ օգնում է մարդուն ամուր ու պինդ լինել և հոգեպես, և ֆիզիկապես: Ավելին, քան ֆիզիկապես շատ ու շատ լիարժեք մարդիկ»⁴⁵:

Թեև այս տեղեկությունը որոշակի կարծրափայեր է պարու-

նակում, այնուամենայնիվ այն որպես նախաբան է Կրպագրվել հաշմանդամ մարդու հետ հեղինակի հարցազրույցում, որի համար ընտրված անհատը քաջալերող հերոսի ընտրության լավագույն օրինակներից է:

«Ես ճշալու, վիճակիս բարդությունը թմբկահարելու ուղղությունը չեմ ընտրել ինձ համար: Պարապ նստելն ինձ համար չէ. ես պետք է անընդհատ ապրուստի միջոցներ որոնեմ... Հովիկ լինելու համար պարզապես պետք է հոգեպես չկորսվել: «Եթե ես լավկանների շարքը համալրեմ, կկորցնեմ իմ հետաքրքրությունը: Օրինակ՝ հենց քեզ համար: Դու ինձ հարգում ես, որովհետև գիտես, որ ես լացը հաղթահարել եմ», - ընթերցողի աչքի առաջ գրույակիցը դիմում է լրագրողին:

Հաշմանդամության լուսաբանման ժամանակ հաշմանդամ մարդու առաջին դեմքով խոսքը հետաքրքիր և կենդանի է դարձնում նյութը և մտորելու առիթ տալիս ընթերցողներին, ռադիոլսողներին կամ հեռուստադիտողներին, ովքեր հնարավորություն են ունենում հրապարակման հերոսին ճանաչել ավելի անմիջական:

«Ես կուզենայի անկիրթ խոսելաձևը և վթարները վերանային: ... Կուզենայի, որ բոլոր մարդիկ գիջեն իրար: Ես կուզեի իմ աշխարհանքային անկյունն ունենալ և իմ վերանորոգած խաղալիքները դնել իմ պահարանի մեջ: Աշխարհում ամենաշատը լավ կլինեի, եթե բոլոր երեխաներն ապրեին ընդամենը քան, ոչ թե մանկավարժներում»: Այս մտքերի հեղինակը փոքրիկ մի տղա է՝ Արտակը»⁴⁶: Այսպես է սկսվում մամուլում տեղ գրած հրապարակումներից մեկը տեղաշարժման խնդիր ունեցող մի տղայի մասին:

Կենդանի խոսքը ոչ միայն հետաքրքիր է դարձնում հոդվածը, այլև կորուսում է հասարակության այն կարծրափայլ, թե

հաշմանդամ երեխաներն անօգնական ու դժբախտ են, մտածելու, դատողություններ անելու և կրթություն ստանալու անկարող: Այս հոդվածն առանձնանում է նաև նրանով, որ հեղինակը ներկայացրել է հաշմանդամ մարդու՝ երեխայի, դրական օրինակ գործունեության փարբեր ոլորտներում:

«Երբ ծանոթացանք, նա ամուր-ամուր սեղմեց իմ ձեռքը և ուշադիր նայեց աչքերիս մեջ: Քիչ անց, ընկերանալով, բացեց սիրտն իմ առաջ: Զարմացա՝ որքան իմաստություն և ներքին պատրաստվածություն կարող է ունենալ ութամյա տղան: Ժամանակ անց սահուն առողջանությամբ արտասանում է «Սասունցի Դավիթ» էպոսից հարված: «Կարելի է ասել, որ ես և Դավիթը կարող էինք ընկերներ լինել: Մեր փարբերությունն այն կլիներ, որ ես իսկական թուր և ձի չունեմ, չնայած ձի քշել գիտեմ, նաև լողի եմ գնում և կարող եմ ջրի փակ երկու մետր փարածություն լողալ»⁴⁷:

Այս ակնարկն ընթերցողին ասում է, որ տղան բոլորովին չի փարբերվում իր հասակակիցներից, որ բոլորի նման դպրոց է հաճախում, խաղում բակում և ունի բազմաթիվ հեփաքրքրություններ ու նախասիրություններ: Դա մի օրինակ է այն հրապարակումներից, որտեղ ասվում է, որ հաշմանդամ մարդիկ կարող են շարք բանի հասնել, ոչ թե պասիվ հեփսել իրենց շուրջը կատարվող իրադարձությունների:

Երբեմն հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ հեղինակը մեկ նյութի համար ընտրում է միանգամից մի քանի դերակատար: Սա թերևս արդարացիված կլիներ, եթե նրանցից յուրաքանչյուրն առանձին և իրարից փարբեր խնդիրներ ունենար: Սակայն որքան շարք են հոդվածի հերոսները, այնքան նվազ տպավորիչ են նրանց պատմությունը, խոսքը, բարձրացրած հարցերը:

Օրինակ՝ «Պանորամա» պարբերականում լույս տեսած «Մենք նրանց չենք լսում» հոդվածում լրագրողը բարձրացնում է խուլ և թույլ լսող մարդկանց հիմնախնդիրները: Անդրադառնալով նրանց կրթության, աշխատանքի, ժամանցի, հասարակական կյանքին մասնակցելու և այլ իրավունքներին՝ պատմում է հինգից ավելի մարդկանց մասին, ովքեր ունեն նույն խնդիրները և գրեթե նույն ճակատագիրը: Այս սկզբունքով կարելի էր անդրադառնալ հազարավոր խուլ մարդկանց պատմություններին, սակայն եթե խոսվեր միայն մեկ հերոսի մասին, դա արդեն բավական կլիներ նրանց խնդիրներն ամբողջությամբ պատկերացնելու համար: Բացի այդ՝ մի բացասական կողմ նա, որ առկա է այս հոդվածում. հերոսներից գրեթե ոչ մեկը հանդես չի գալիս ուղիղ խոսքով: Սա ավելի է խորացնում այն կարծրատիպը, թե լսողության խնդիրներ ունեցողները չեն կարող խոսել:

Որքան էլ փարօրինակ է, պատահում են դեպքեր, երբ մամուլում խնդրի մասին խոսում են ոչ խնդիրը կրողները: Լրագրողն ինֆորմացիա է տրամադրում առանց հեղինակի հետ զրույցելու: Ընդհանրապես անդամները որոշ բաներ են պատմում, լրագրողը մեջբերումներ է անում, և փոքրիկ ակնարկը պատրաստ է: Հրապարակողը կարծում է, թե լավություն է անում մարդուն, ով մեկուսացած է և չի ցանկանում խոսել: Պարզ չէ միայն, թե ինչու է այդ դեպքում ընդհանրապես գրվում ակնարկը:

Իսկ «Սպորտը և հաշմանդամությունը» հոդվածի⁴⁸ հեղինակը, անդրադառնալով հաշմանդամային սպորտի հիմնահարցերին, ոչ մի հարցազրույց չի վերցրել մարզիկներից: Լրագրողը բավարարվել է հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ զրույցներով, որոնք փրկեցին ակնարկի բնույթ են կրում:

Խոսելով հերոսների մասին՝ հարկ է նշել, որ մամուլում լրագրողները որպես նյութի գլխավոր դերակատարներ հիմնականում

ընտրում են երեխաներին և երիտասարդներին, ավելի հաճախ՝ արական սեռի ներկայացուցիչների: Որքան էլ հեղինակները գերադասում են ունենալ հերոսներ և դերակատարներ իրենց հողվածի համար, այնուամենայնիվ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշմանդամ մարդիկ հիմնականում երկրորդ պլանում են: Նրանք շատ քիչ են ներկայացվում որպես գլխավոր դերակատարներ: Լուսաբանումներում այնպիսի փափվորություն է, թե միջոցառումը, թեման, իրադարձությունը և քննարկվող հարցերը նրանց մասին են, բայց ոչ նրանց մասնակցությամբ, նախաձեռնությամբ կամ ղեկավարությամբ:

Պատճառը նաև այն է, որ մարդկանց գտնելը հափուկ ուշադրություն և երկարարև աշխատանք է պահանջում: Հեղինակները հերոսներ ներկայացնելն ու նրանց ձայն տալը հիմնականում երջանիկ պատահականության արդյունք է լինում:

Հերոսների ընտրությունն ու նյութի **ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները** սերտորեն փոխկապակցված են: Եթե լրագրողը հողվածի հերոս է ընտրել փառքեցի հաշմանդամ մարդուն, նյութը հիմնականում ծավալվում է սոցիալական աջակցության, արտոնությունների, առողջապահական հարցերի և խնամքի շուրջ: Այս դեպքում հողվածը սովորաբար զուտ փոփոխական բնույթ է կրում:

Եթե խոսքը հաշմանդամ երեխաների և երիտասարդների մասին է, ապա լրագրողը շոշափում է մեծավ մասամբ սոցիալականացման, կրթության և միջավայրի մարդասիրության հարցեր: Այս դեպքում արդեն լրագրողները, բացի փոփոխականից, նախընտրում են նաև ակնարկներ և վերլուծական ժանրեր: Մեծ փոքր են զբաղեցնում նաև հարցազրույցները: Հավելենք նաև, որ հեղինակական, վերլուծական հողվածները փոքր են գտնվում հիմնականում էլեկտրոնային մամուլում, ինչպիսիք են «Հեղք»,

«Արմեդիա», «Արմենիանաու», «Պանորամա», «Media.am» լրատվական կայքերը:

Ամեն դեպքում՝ միշտ չէ, որ լրագրողները խնդիրը համակողմանի ուսումնասիրության են արժանացնում, եթե նույնիսկ դրա համար կան բոլոր նախապայմանները:

2005 թ. Հայաստանում փոքրամասնություններին վերաբերող վերլուծական հոդվածները կազմում էին 10,1% (որի 54,5%-ը վերաբերում էր հաշմանդամներին)՝ 2004 թ. համեմատությամբ կրճատվելով 6,3 %-ով⁴⁹: Հրապարակումների գերակշիռ մասը մակերեսային անդրադարձ է թեմային:

Փորձելով առանձնացնել հոդվածների թեմատիկան՝ պետք է նշել, որ շատ բան կախված է ԿԿ-ների ոլորտում գործող ՀԿ-ների նախաձեռնություններից, նրանց ունեցած հաջողություններից և ակտիվությունից:

Խոսելով մամուլի մասին՝ կարող ենք ասել, որ այն նախ և առաջ անդրադառնում է հաշմանդամների կրթության խնդիրներին, մասնավորապես՝ ընդհանուր, ներառական և բարձրագույն կրթությանը: Քիչ է խոսվում հատուկ կրթության ոլորտի մասին, ինչը կապված է նաև դրա հանդեպ ունեցած նախապաշարմունքների հետ:

Երկրորդ տեղում է իրավունքների պաշտպանությունն ընդհանրապես, թեև վերջին տարիներին աճ է նկատվում ընտրական իրավունքին վերաբերող լուսաբանումներում: Այս փաստը սերտորեն կապված է երկրի ընտրական գործընթացների և ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի հետ: Ավելի հազվադեպ, բայց շոշափվում է նաև հաշմանդամների զբաղվածության խնդիրը, աշխատանքի իրավունքը: Երրորդ տեղում են հաջողված պատմությունները կամ պարզապես մարդկային ձակարագրերի մասին պատմող հրապարակումները: Դրանց հաջորդում են սոցի-

ալական պաշտպանությանը, մշակույթին, սպորտին, վերականգնողական միջոցառումներին նվիրված լուսաբանումները, որոնք մեծ թիվ չեն կազմում սակայն:

Մյուս թեմաները, որ շոշափվում են անկախ գերակա խնդրից, միջավայրի մաքვելիությունն ու հասարակության վերաբերմունքն են, որոնք սերտորեն կապված են բոլոր մյուս խնդիրների հետ:

Հրապարակումների մակերեսային, ոչ խորքային և վերլուծական բնույթը պայմանավորված է նաև **մասնագիտացված լրագրողների** պակասով: Լրագրողների մասնագիտացումը բնորոշ չէ այսօրվա հայաստանյան լրագրամիջոցներին: Դա վերաբերում է գրեթե բոլոր թեմաներին: Անշուշտ, այս երևույթն իր պարզառներն ու բացաբորություններն ունի, որոնք հափուկ են զարգացող երկրների նորաստեղծ լրագրական կազմակերպություններին և լրագրական մյուս կառույցներին:

Մամուլում, սովորաբար, էջի պատասխանատուներ կան, ովքեր գրում են կոնկրետ ոլորտի մասին: Սակայն այսպեղև ս րաանջատումները հստակ չեն. օրինակ՝ սոցիալական էջի պատասխանատուն, այսպես ասած, «փակում» է նաև րնրեսական բաժնի էջերը:

Բացի այդ, պարզ չէ, թե հաշմանդամ երիտասարդների խնդիրների մասին որ էջում պետք է գրել կամ որ ոլորտի լրագրողը՝ սոցիալական, թե՞ երիտասարդական: Այսպեղև ս ներառական մոտեցում է հարկավոր, երբ երիտասարդներին վերաբերող հարցերի համարեքստում տեսնում են նաև հաշմանդամ երիտասարդներին, կամ երբ կրթության ոլորտի խնդիրները քննարկելիս քաջարեղյակ են լինում հաշմանդամ մարդկանց կրթական պահանջներին: Շարքերթերում յուրաքանչյուրն ունի իր ոլորտը, դրանք են՝ սոցիալական, երիտասարդական, իրավական, քաղաքական, մշակութային և այլն: Սակայն չկա մի կոնկրետ

բնագավառ, որում մասնագիտացած է լրագրողներից յուրաքանչյուրը: Օրինակ՝ երիտասարդական էջի պատասխանատուն գրում է այն ամենի մասին, ինչ հետաքրքրում է երիտասարդին: Դա կարող է լինել կրթություն, ժամանց, ընտանիք, առողջապահություն, հաշմանդամություն և այլն: Բարեբախտաբար, շատերը կարծում են, որ շատ և փարբեր առիթներով խոսելով խնդրի մասին, կգանք այն գիտակցությանը, թե հաշմանդամ մարդիկ պետք է ներգրավված լինեն կյանքի բոլոր ոլորտներում: Նաև կարծում են, որ դրա մասին պետք է խոսեն բոլորը, բայց ոչ ցանկացած մեկը որոշի գրել այդ խնդրի մասին: Լրագրողները կարծում են, որ այդ ոլորտում ուշադրություն և հատուկ պատրաստված մարդիկ են պետք:

Եվ այսպես՝ լրագրողները պայմանականորեն բաժանվում են մշակութային, սոցիալական, քաղաքական թեմաներ լուսաբանողների: Բոլոր մյուս դեպքերում լրագրողական վարպետությունը բավարարում է չոր փեղեկավորություն փալու համար, ինչը չի ենթադրում խնդրի խորքային և բազմակողմանի ուսումնասիրություն: Հաշմանդամության թեման լուսաբանողների թվում այսօր կարելի է հանդիպել նաև լրագրողների, ովքեր հինգ փարուկ ավելի է, ինչ անդրադառնում են այդ խնդրին և, բնականաբար, փեղյակ են բոլոր նրբություններին⁵⁰: Բայց սա հազվադեպ երևույթ է:

Սակայն խնդիրը երկար ժամանակ ուշադրության կենտրոնում պահելը և հաճախակի անդրադարձը դեռևս չեն լուծում մասնագիտացման հիմնական խնդիրները: Այսպեղ ևս կան նրբություններ: Լրագրողին անհրաժեշտ է ոչ միայն հաճախակի անդրադառնալ, այլև լինել հեղինակական, պարբերաբար հանդիպել և շփվել հաշմանդամ մարդկանց, նրանց շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ, որպեսզի իրազեկ լինեն

նրանց խնդիրների լուծմանն ուղղված նոր և ընդունված մոտեցումներին ու սկզբունքներին:

Բազմակողմանի տեղեկափոխության ինստիտուտի վերոհիշյալ ուսումնասիրության համաձայն՝ փոքրամասնությունների մասին հայաստանյան մամուլի հրապարակումները **լուսանկարներով ու նկարներով** առաջատար չեն, սակայն մեր առաջինն են տեսանյութերի համապատասխանության և ներգործության ցուցանիշով: Այսինքն՝ հայաստանյան մամուլում այս թեմայով լույս տեսած հրապարակումների ամեն երկրորդն ուղեկցվում է համապատասխան լուսանկարով: 2004 և 2005 թվականներին այս ցուցանիշը չի փոխվել:

Հոդվածներում զեպտեղված լուսանկարները շատ առումներով տեղեկության հաղորդման հարցում նույնքան վճռորոշ նշանակություն են ունենում, որքան տեքստը: Տեսողական բաղկացուցիչը կարող է ազդեցիկ լինել և հաճախ էլ կարևոր տեղեկություն հաղորդել ընթերցողներին, ինչը ոչ միշտ է ակնհայտ նույնիսկ այդ նկարներն ընտրողների համար, ովքեր կարող են չպատկերացնել դրա ենթագիտակցական կամ չգիտակցված ազդեցությունը: Լրագրողական նյութը նկարով համադրելիս կարևոր է նկատի ունենալ, որ նկարները կարող են երկար «ապրել» ընթերցողների հետ, քանի որ վերջիններս կարող են անգամ չկարդալ տեքստը կամ էլ նկատել միայն վերնագիրը: Այսպիսով՝ լրագրողի համար կարևոր է ընտրել այնպիսի լուսանկարներ, որոնք արտացոլում են նյութի բուն էությունը և ոչ թե հակասում կամ փչացնում են այն:

Գերմանական մամուլի խորհուրդը մամուլի ընկերակցությունների հետ համագործակցությամբ ներկայացրած իր վարքականոնի 10-րդ հոդվածում անդրադառնում է լուսանկարներին: Հոդվածը մամուլի պատասխանատվության սկզբունքների հետ ան-

համաբեղելի է համարում այն լուսանկարների հրապարակումը, որոնք իրենց բովանդակությամբ և ձևով կարող են լրջորեն վիրավորել մարդկանց որոշակի խմբերի բարոյական կամ կրոնական զգայմունքները⁵¹:

Ֆոտոլրագրողների ազգային ընկերակցությունը համարում է, որ լուսանկարները, անկախ այն բանից՝ օգտագործվում են տեղի ունեցող իրադարձությունները հավաստի ցուցադրելու⁵², լուսաբանել-պատկերավորելու⁵³, թե՞ հասարակական հեղափոխություններ կայացնող իրադարձությունները մեկնաբանելու համար, մարդկանց ճշգրիտ տեղեկություններ հաղորդելու միջոց են, և որ դրանք օգնում են բոլոր մարդկանց՝ առավել լավ հասկանալու հասարակական կյանքի ցանկացած խնդիր⁵²:

«Ուրիշի ցավը նժարի վրա»⁵³ հոդվածն ուղեկցող լուսանկարն այնքանով է կապվում նյութի հետ, որ և՛ մեկը, և՛ մյուսը երեխայի մասին է: Սակայն տեքստը պատմում է հաշմանդամություն ունեցող 9-ամյա աղջնակի մասին, ով քայլում է հենակների օգնությամբ և սովորում է հատուկ դպրոցում, այնինչ լուսանկարում պատկերված մոտ 2 փարեկան փոքրիկը մոր հետ դուրս է նայում պարուհանի ճաղերի երևից: Այստեղ լուսանկարը ոչ մի կերպ չի կապվում նյութի հետ, որն է կերպ չի նպաստում տեղեկատվության ընկալմանը և պարզապես ավելորդ է, եթե, իհարկե, ճաղերը չդիտենք որպես հաշմանդամության խորհրդանիշ՝ խղճալով հերոսին:

Լրագրողները, երբեմն վախենալով կենտրոնանալ հաշմանդամ մարդու խնդրի վրա, կամա թե ակամա խուսափում են խնդիրը լիարժեքորեն ներկայացնելուց: Այդպես պատահում է նաև լուսանկարների ընտրության ժամանակ: Շատերը կարծում են՝ ավելի լավ է հերոսի նկարի փոխարեն հոդվածին կցել խորհրդանշական պատկեր, բայց նրանք չգիտեն, որ այդ «խորհրդա-

նիշը» կարող է, մեղմ ասած, այնքան էլ տեղին չլինել: Անդրադառնալով արդեն հիշատակված «Տեղ այս արևի տակ»⁵⁴ հոդվածին՝ հարկ է նշել, որ հաշմանդամ կանանց 2005 թ. ֆուտուրյուրի հաղթող աղջկա լուսանկարը տեղադրված է թերթի առաջին էջում: Սակայն այն ոչինչ չի ասում հենց այդ մրցույթի և հարկապես աղջկա մասին, բացի նրանից, որ նա գեղեցիկ է: Բնականաբար, կարևորը հենց այս փաստն է, սակայն պետք է նկատի ունենալ, որ ինքը մրցույթն արդեն ունի իր առանձնահարկությունը. այն հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար է, իսկ հաղթողը՝ հաշմանդամություն ունեցող գեղեցկուհի: Այնպես որ լուսանկարը ևս պետք է «խոսի» այս մասին՝ իհարկե, էթիկայի նորմերի սահմաններում:

«Արժանապատիվ ապրելու ուժը»⁵⁵ հոդվածը, որն ավելի շար կառուցված է պաթեթիզմի, ողբերգական երանգների վրա, ուղեկցվում է ավելի լավարեսական և խոսուն լուսանկարներով: Լրագրողը գրել է տեղաշարժման խնդիր ունեցող երիտասարդի մասին և նյութում տեղադրել նրա լուսանկարն ընդհանրապես կնոջ և զավակի հետ: Այս դեպքում հակառակ երևույթի ականապեսն ենք լինում: Պետք է հիշել, որ պատկերավոր նյութերն ավելի մեծ ազդեցություն են ունենում և ավելի տրավոլոյիչ են, քան բառերն ու արտահայտությունները: Դրանք կարող են թե փչացնել լավ ստեղծագործությունը և թե կարող են փրկել վար գրված հոդվածը: Այս դեպքում, թերևս, վերջինն է պարտադիր: Ավելորդ պաթոսն ու անհարկի ողբերգական երանգները խամրել են լուսանկարի արտահայտած լավարեսական ու իրական պատկերներից:

Ինչպես արդեն նշեցինք՝ պատկերները ոչ միայն լրացնում և ամբողջական են դարձնում հոդվածը, այլև կարող են կարծրափակ ստեղծել հասարակության մեջ: Նման լուսանկարները վի-

րավորական են և տեղեկատվության տեսանկյունից շատ քիչ բան են ավելացնում: Բոլորն էլ տեսել են մուրաչիկների, ովքեր հաշմանդամություն ունեն (կամ ձևացնում են, թե ունեն), սակայն հաշմանդամ մարդկանց համար հավասար հնարավորությունների, կրթության կամ նրանց կենսապայմանների բարելավման հարցերը շոշափելիս տեղին չէ այդպիսի լուսանկար զեպտելել, այլապես կնպաստենք հասարակության մեջ գոյություն ունեցող այն կարծրափայտի ամրապնդմանը, թե բոլոր հաշմանդամ մարդիկ աղքատ են կամ մուրաչիկ: Շատ ավելի հեփաքքիթ կլինի ընտրել այնպիսի լուսանկար, որը կբացահայտի մարդկանց մեկ այլ ենթատեքստում կամ անսպասելի իրավիճակում, օրինակ՝ համալսարան այցելելիս կամ ճաշ պատրաստելիս:

«Շարունակվող պատերազմ»⁵⁶ ակնարկն ուղեկցվում է լուսանկարներով, որտեղ ձեռքեր և ոտք չունեցող աղջիկն իր պատրաստած սուրճը բերանով լցնում է բաժակների մեջ: Մեկ այլ նկարում նա գրում է: Տեսարանները միանշանակ զարմանք ու հեփաքքրություն են արթնացնում: Սակայն դրանց հիմնական արժանիքն այն է, որ դրանք նախապաշարմունքներ են կտրում, իրազեկություն բարձրացնում:

Ուսումնասիրված թերթերն ու պարբերականներն ընդհանրապես շատ նման են հիմնական սկզբունքներով, և խնդրի լուսաբանման հարցում էական տարբերություններ չկան: «Ազգ» օրաթերթը հաշմանդամության թեմայով գրում է իրեն հատուկ պաշտոնական ոճով և տպագրում հիմնականում տեղեկատվական նյութեր, խնդրի հետ կապված պաշտոնական հայտարարություններ, օրենսդրական փոփոխություններ և այլն: Լինում են նաև ակնարկներ և հարցազրույցներ, սակայն ոչ այնքան հաճախ, որքան, ասենք, «Առավոտ» օրաթերթում, որն ամենաշատն է հաշմանդամ մարդկանց հաջողված պատմություններ գրում և հար-

ցազրույց անում նրանց հետ: Սակայն ավելի հաճախ մեկ պատմության միջոցով խնդրին անդրադառնում են էլեկտրոնային պարբերականները՝ ավելի մեծ ծավալ տրամադրելով թեմային, ինչը պայմանավորված է տեխնիկական հնարավորություններով: Այստեղ ամենաշատն ենք հանդիպում վերլուծական հոդվածների և ակնարկների, որոնք ուղեկցվում են համապատասխան նկարներով (հաճախ մեկից ավելի):

2.2. Հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկությունները ռադիոյում

Արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ ռադիոն այսօր ավելի շատ ժամանցային միջոց է Հայաստանում: ԶԼՄ-ների մյուս գործառնությունները քիչ թե շատ իրականացնում է Հանրային ռադիոն, որն ունի տեղեկատվություն հաղորդելու ավանդույթներ, փորձառու աշխատակազմ, սակայն որի լսարանը, ցավոք, մեծ թիվ չի կազմում մեր հասարակությունում:

Այսպիսով՝ ամենադինամիկ ԶԼՄ-ն լինելով՝ ռադիոն իր վրա չի վերցրել սոցիալ-քաղաքական և տեղեկատվական ուղղվածություն, բացառությամբ մի քանի ռադիոկայանների հեռարձակած հաղորդումների: Մինչդեռ նույնիսկ ԱՄՆ-ում ռադիոն ամենազդեցիկ լրատվական միջոցն է, մասնավորապես՝ վերնախավի վրա ազդելու իմաստով:

Այնուամենայնիվ այսօր Հայաստանի ռադիոներում կարելի է հանդիպել հաղորդումների, որոնց ընթացքում շոշափվում են ինչպես երաժշտաժամանցային, երիտասարդական, այնպես էլ սոցիալական խնդիրներ: Ռադիոյով հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկությունները պարզելու համար ուսումնասիրվել են, մասնավորապես, «Ազատություն» ռադիոկայան-

նի «Մաքսլիբերթի» ծրագիրը, որ հեռարձակվում է «Երևան» և «Արձագանք» ռադիոկայաններով, Հանրային ռադիոյի «Լյուսես» երիտասարդական ծրագրերը և «Ռադիոհայի» «Լուսնա» հաղորդաշարը:

Ինչպես իրենք՝ ռադիոլրագրողներն են նշում, սա, իհարկե, մի կաթիլ է օվկիանոսում, որովհետև եթե իրենք լրագրող չլինեին և նյութեր չպատրաստեին, իրենց կթվար, թե հաշմանդամ մարդիկ չկան Հայաստանում. նրանց չենք տեսնում ո՛չ թատրոններում, ո՛չ ցուցասրահներում, ո՛չ ընկրությունների ժամանակ, ո՛չ փողոցներում, ո՛չ էլ այլուր: Հարցումները ցույց են տալիս, որ մասնագետները ևս չեն տեսնում հաղորդման հեռուների, երիտասարդ հաշմանդամի ընդհանրի մասին պատմող հաղորդումների և այլն: Հաճախ հանդիպող հաղորդումներն էլ դրամաշնորհով արվող ծրագրեր են, որից հետո բոլորը գնում են իրենց գործին և մոռանում խնդրի մասին:

1999-ին շաբաթին թվում էր՝ դրա ժամանակը չէ: 2008-ին, իհարկե, վիճակն անհամեմատ լավ է. այսօր թվում է, թե այդ ժամանակը վերջապես եկել է:

Վերը նշված ռադիոծրագրերը տարին միջինը 5 հաղորդում են նվիրում հաշմանդամ մարդկանց տեղաշարժման, շրջակա միջավայրի մարդեկության, մշակույթի, աշխատանքի և կրթության խնդիրներին: Ինչպես հեղինակներն են նշում, չկա մի այդպիսի ոլորտ, որ չեն անդրադարձել հաշմանդամության մասին խոսելիս. կրթություն, ժամանց, սեր, ընդհանր, աշխատանք և այլն: Այսինքն՝ հաշմանդամ մարդը ցանկացած պատմության, ոլորտի մեջ կա, ինչպես մյուս բոլոր մարդիկ: Սակայն ռադիոյում ևս, ինչպես մամուլում, առաջնայնությունը տրվում է կրթության ոլորտին:

Խնդիրը լուսաբանելիս հեղինակները նշում են ամենակարև-

որ սկզբունքներից մեկը. պետք է իմանալ, թե ինչ՞ու ես դա անում, ում ինչ ես ուզում ասել, առաջադրված խնդիր պետք է ունենաս և հասցե, որպեսզի ասելիքը փեղ հասնի:

Հանրային ռադիոյի «Լյունսե» երիտասարդական ծրագրի ամեն մի ռեպորտաժը փրկում է 4-5 թույլ: Լրագրողներ կան, որ փարին 6-7 անդրադարձ են կատարում հաշմանդամության խնդրին: Սովորաբար այդ թեմայով նյութերը ծավալով ավելի մեծ են լինում, քան մյուսները, մոտ 6-8 թույլ փրկողությամբ: Այս փաստը հեղինակները բացատրում են նրանով, որ խնդրի մասին ասելիք կա, և շոշափված հարցերն այնքան կարևոր են, որ նույնիսկ սահմանված թույլները գերազանցելու դեպքում չեն կրճատում և այդպես էլ թողնում են եթեր: Մեր հարցումները ցույց փայցին, որ այդ թեմայով ռեպորտաժները միշտ երկար են ստացվում բոլոր ռադիոծրագրերում:

Ինչ վերաբերում է վերադասի կողմից խնդրի լուսաբանման սահմանափակումներին, բոլոր ռադիոլրագրողները միանշանակ փաստում են, որ այդ կարգի որևէ խնդիր չեն ունեցել և իրենց նախաձեռնությունները միշտ լավ են ընդունվել թե՛ ղեկավարության, թե՛ մյուս գործընկերների կողմից: Այսպեղ մեծ դեր ունեն մասնարկային գործունը և անհատական մոտեցումը: Խնդրին սրտապավ լինելու, դրա լուսաբանմանը կարևորություն տալու նախապայմանը գիտակցումն է, որ մեծագույն արժեքը մարդն է: Այս դեպքում նման եթեր կազմակերպել-չկազմակերպելու հարցը բացառվում է, որովհետև այն, ինչ մարդ արարածին է վերաբերում, պետք է լրագրողի համար միշտ հետաքրքիր լինի:

Ինչ վերաբերում է խնդրի արդիականությանը, լրագրողները համոզված են, որ թեման արդիական դարձնելը և դրանով ղեկավարությանը հետաքրքրելը կախված են նաև իրենցից՝ լրագրողներից. եթե նյութն այնպես ներկայացնեն, որ հետաքրքիր լի-

նի խմբագրին, Կոնօրենին, ապա նրանք կհասկանան, որ իրոք այդ մարդիկ խնդիրներ ունեն, և դրանք պետք է լուսաբանվեն:

Ժանրային առումով ռադիոյում գերակշռում են ռեպորտաժները և փրեզենտացիաները: Հանդիպում են նաև ուրվանկարներ, դիմանկարներ, որոնք սակայն նորից ուղեկցվում են որևէ իրադարձությամբ կամ միջոցառմամբ: Ռադիոյում առավել քան մամուլում, կարելի է հանդիպել խնդրի համակողմանի ուսումնասիրության: Այդպիսի օրինակ է Հանրային ռադիոյի երիտասարդական ծրագրի ընթացքում հեռարձակված 8 րոպեանոց վերլուծական հաղորդումը, երբ լրագրողը կրթության ոլորտում առկա խնդիրների ուսումնասիրության փորձ էր արել՝ խոսելով հաշմանդամություն ունեցող հերոսի, ՀԿ նախագահի և փորձագետի հետ: Հաղորդման ընթացքում վեր էին հանվել ինչպես շրջակա միջավայրին, մարդու իրավունքներին, այնպես էլ օրենսդրական դաշտին առնչվող խնդիրներ:

Վերլուծության և հետևողականության առումով ռադիոն թերևս գերազանցում է մամուլին և հեռուստատեսությանը, որոնք ավելի շար շեշտը դնում են հաճախականության, բայց ոչ որակի և ուսումնասիրության վրա:

Այնինչ ռադիոլրագրողներն առաջնային են համարում խնդրի համակողմանի ուսումնասիրությունը՝ նախ լսելով խնդիրը կրողներին, այս դեպքում՝ հաշմանդամ մարդկանց, ապա այդ խնդրի հետևից մինչև վերջ գնալով և հասկանալով, թե այն որտեղ է խոչընդոտի դեմ առել: Նրանք փաստում են, որ խնդիրները հիմնականում կապված են պետական կառույցների հետ, որոնք էլ պիտի պատասխանեն այդ հարցերին: Եվ, համառոտություն դրսևորելով, «պոկում» են այն, ինչ իրենց պետք է, կամ գոնե այնքան են «զզվեցնում», որ հասկացնում են՝ դրանք խնդիրներ են, որ պետք է լուծվեն:

Սա, իհարկե, այն դեպքում, երբ լրագրողը սրտացավ է և իրապես հեղաքրքրված խնդրով: Սակայն, որպես կանոն, լրագրողներն ասուլիսների կամ միջոցառումների կեսից հեռանում են՝ չսպասելով միջոցառման ավարտին: Ինչպես մեր հարցումներն են փաստում, դա նաև սրբերեոփայային մոտեցում է թե՛ խնդրի և թե՛ խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների նկատմամբ, երբ մտածում են, որ թեման բազմիցս կրկնվել է և այլևս նոր ասելիք չկա: Այսպիսի դեպքերում շահում է միայն այն լրագրողը, ում համար առաջնայինը ոչ թե նյութն առաջիկա եթերին հասցնելն է, այլ ամբողջական տեղեկություն փալը՝ թեկուզ հաջորդ եթերին միայն: Այս մասնագետների համար շատ ավելի արժեքավոր է այն տեղեկատվությունը, որ կարող է ստանալ խնդրին վերաբերող հարցերի մասին, որովհետև լավ լրագրողի համար ասուլիսները լավագույն առիթն են հարցերն ուղղելու ուղրորի մասնագետներին և պարամխանափորներին, ովքեր վերջապես հավաքվել են մի տեղում:

Ի տարբերություն մամուլի՝ ռադիոյում ավելի քիչ ենք հանդիպում մեկ **հերոսի** շուրջ սրբեղծված պարմությունների, մարդկային ճակատագրերի մասին պատմող ակնարկների և այլն: Հարցագրույցները հիմնականում արվում են զուտ տեղեկատվություն ստանալու նպատակով, եթե նույնիսկ խոսքը խնդիրը կրողի մասին է: Օրինակ՝ 4-րդ պեանոց մեկ ռադիոհաղորդման ընթացքում կարող են խոսել չորս տարբեր մարդիկ և պարզապես տեղեկություն հայտնել խնդրի մասին, այնինչ նրանցից յուրաքանչյուրը կարող է դառնալ մեկ առանձին նյութի հերոս:

Ռադիոեթերից կարելի է հանդիպել նաև այնպիսի դեպքերի, երբ եթերում գործ ենք ունենում անդեմ, անանուն կերպարների հետ: Օրինակ՝ հեղինակը երկու սինքրոն է ներկայացնում, երբ երկու ձայն խոսում են իրենց խնդիրների մասին, որ ունենում

են փրանսպորտով երթևեկելիս: Նրանց խոսքը հեղինակն ամփոփում է այսպես. «Զրուցակիցներս փեղաշարժման դժվարություններ ունեցող հաշմանդամներ են»⁵⁷:

Կամ հանդիպում են դեպքեր, երբ ոչ միայն բացակայում են կոնկրետ հերոսներ, այլև մարդկանց խնդիրների մասին նրանց փոխարեն եթերում խոսում են կամ լրագրողները, կամ մրերիմ-ներն ու ծանոթները:

«Նաիրա Կարապետյանը մեզ հետ զրույցում ցանկացավ ընդգծել մի փաստ. վերջերս իր մրերիմներից մեկը, ով նույնպես փեսողության լրիվ կորուստ ունի, դիմել է պեպական կառույցներից մեկին աշխատանքի փեղավորման համար, որփեղ նրան մերժել են զուր փեսողություն չունենալու պարձառով»: Սա ոչ միայն լրագրողի մասնագիտական որակներին է դեմ, այլև կույր մարդուն մեկ անգամ ևս ունկնդրի առջև ներկայացնում է որպես ձայնագուրկ և անկարող մեկին: Եվ լսարանի մեջ բնավ էլ հավար չի առաջանում փվյալ մարդու աշխարելու կարողությունների և այլ հմրությունների նկարմամբ:

Ամեն դեպքում ռադիոլրագրողները մեծավ մասամբ գիտակցում են, որ հաձախ իրենք պեպք է կարողանան հերոսին բացել և նյութը ձիշտ ուղղությամբ փանել: Նրանք հավարացնում են, որ փորձում են այնպես անել, որ մարդն ինքը խոսի իր խնդիրների մասին: Նաև սովորում են իրենց սխալների վրա, երբ գիտակցում են, որ իրենք են խոսել մարդու փոխարեն և երկարբարակ պարմել են հերոսի մասին, այնինչ ունկնդրի համար դա հեարաքրքիր չէ և ավելի շար ուզում է լսել այդ մարդու խոսքը:

Ելնելով ռադիոյի առանձնահարկություններից՝ պեպք է նկարել, որ այս լրարփամիջոցը հիմնականում եթերում խոսքի հնարավորություն փալիս է այն մարդկանց, ովքեր փիրապեփում են այդ հմրություններին: Ասել է թե՛ խոսելու դժվարություն կամ

խնդիրներ ունեցող մարդկանց ռադիոեթեր փրամադրելը շափերն ի սկզբանե բացառում են: Բայց, հուրախություն մեզ, կարելի է հանդիպել նաև բացառիկ դեպքերի, երբ լրագրողն իր հնարամտության և մասնագիտական կարողությունների շնորհիվ գտնում է նաև այս իրավիճակից դուրս գալու ուղին: Թեկուզ շափ կարճ, բայց հեռարձակում է խնդիրներ ունեցող մարդու խոսքը, որը գուցե ոմանց անհասկանալի թվա, բայց մյուսների համար ուսուցողական և տեղեկատվական է: Որովհետև որքան էլ լսարանին պատմես, թե զրույակիցը խոսելու դժվարություն ունի, նրան հեղաքրքրում է, թե դա ինչ է նշանակում կամ ինչպես է արտահայտվում: Այսպիսով լուծվում է ն' հերոսի ձայնի իրավունքն ապահովելու, ն' տեղեկատվություն տալու, ն' ունկնդրի հեղաքրքրասիրությունը բավարարելու խնդիրը:

Ցավոք, այդ դեպքերը եզակի են: Նման եթերները մարդկանց մեջ նաև հանդուրժողականություն են դաստիարակում: Եթե մարդը դժվար է խոսում, մյուսը պետք է համբերատարություն ցուցաբերի և լսի նրան: Ի վերջո, բոլորն էլ տարբեր ռիթմով են խոսում: Այս քայլին գնացող պրոֆեսիոնալները հավատարմացած են, որ շափ սխալ է հասարակական կարծրատիպերին տեղի տալը և եթերները պատրաստել՝ դրանցով առաջնորդվելով կամ առանց դրանցից հրաժարվելու: Ի վերջո, թվում է, թե ցանկացած անսովոր բան չի ընկալվի: Սակայն չի ընկալվում, որովհետև հենց իրենք են այդպես ենթադրում և սահմանափակում են այդ մտավախությունների պատճառով: Եթե ՋԼՄ-ները շափերի համար անսովոր կադրը, ձայնը, պատկերը եթեր տան, դրանք երկու-երեք օր հետո բոլորի համար շափ սովորական կդառնան: Բոլորը կիմանան, կսովորեն, որ մեր քաղաքում նաև այսպիսի մարդիկ կան:

Պրոֆեսիոնալները գտնում են նաև այն խնդիրների լուծումը, երբ ռադիոյով պետք է ներկայացնել խուլ կամ լսողության դժ-

վարություն ունեցող մարդկանց: Այդպիսի դեպքեր գրանցվել են նաև հայաստանյան ռադիոէթերների ժամանակ:

Եթե խոսքն ընդհանրապես չի հասկացվում եթերում, լրագրողը բացապրում է, որ իր հերոսը խոսելու խնդիր ունի, և այդ դեպքում ինքն է վերապատմում զրույակցի ասածը:

Քանի որ ռադիոյի հիմնական լսարանը երիտասարդներն են, և թեման լուսաբանող հաղորդումները ևս երիտասարդական ուղղվածություն ունեն, բնականաբար, հերոսների ընտրության հարցում ևս նախապատվությունը տրվում է հենց երիտասարդներին: Ինչպես մյուս դեպքերում, լրագրողները նրանց գտնում են փարբեր հասարակական կազմակերպություններից, քանի որ համոզված են, որ նրանք գնալու ուրիշ տեղ չունեն: Ռադիոյի դեպքում ավելի ուժեղ է նաև հեղադարձ կապը, և հաճախ հերոսներն իրենք են գտնում հեղինակներին: Դրանք ավելի շարքարական սեռի ներկայացուցիչներ են:

Մամուլի և հեռուստատեսության հետ համեմատած՝ ռադիոն նշանակալիորեն առաջ է **մասնագիտական կամ կոնկրետ ոլորտով զբաղվող լրագրողների** իմաստով: Հայաստանյան լրագրամիջոցներում հիմնականում բաժանումները պայմանական են, սակայն ռադիոյի դեպքում լուսաբանման ոլորտներն ու խնդիրները ավելի հստակ են բաժանված լրագրողների մեջ: Նրանք միանշանակ փաստում են, որ եթե խմբագրությունը մամուլի հաղորդագրություն է ստանում հաշմանդամության խնդրին վերաբերող կլոր սեղանի, ասուլիսի կամ այլ միջոցառման մասին, ապա միանգամից ուղարկում են այն լրագրողին, ում հուզում է կամ հոգեհարազար է հարցը, ով իր համար ուղղվածությունն է ընտրել այդ թեման:

Մի խոսքով՝ ռադիոյում միշտ կա մեկը, որ մասնագիտացած է ոլորտում:

Նրանցից շատերը նույնիսկ դեպք են հիշում, երբ շաբաթը 2-3 ռեպորտաժ են պատրաստել: Սակայն նշում են նաև այն փաստը, որ որքան մասնագիտանում են, այնքան քիչ են անդրադառնում խնդրին, որովհետև գիտակցում են, որ քանակի մեջ միշտ չէ, որ որակ կա:

Ռադիոհաղորդումների համար սովորաբար որպես **ձևավորում** են ծառայում երաժշտությունը, ձայները, աղմուկը և այլն: Իդեալական փորձերակն այն է, երբ մեկը մյուսին լրացնում է: Հաշմանդամության թեմայով ռադիոհաղորդումների ժամանակ որոշ չափով նկատվում է այն նախապաշարմունքը, որ թեման լուրջ ու փխուր է, և երաժշտությունը պետք է համապատասխանի այդ փորձարկությանը: Միանշանակ երաժշտությունն ու ձայներն ազդելու մեծ ուժ ունեն, և քանի որ հաճախ ունկնդիրը երաժշտությունն ավելի շուտ է լսում, քան բուն ռեպորտաժը, դա կարող է նրան փորձարկել կամ նախապատրաստել թեմային:

Ռադիոյի հմուտ լրագրողները գիտեն դա և նյութեր պատրաստելիս առանձնակի ուշադրություն են դարձնում երաժշտական ձևավորմանը, որպեսզի դա չչեղի ունկնդրին, թեմային մոտ լինի, բայց նաև չծանրացնի այն, փխուր կամ լացեցնող չլինի:

Սակայն միշտ չէ, որ ընտրությունն արդարացված է լինում: Լինում են դեպքեր, երբ, օրինակ, լրագրողը թեման արդիական, թեթև դարձնելու մղումով բավական լուրջ հարցազրույցներ և ուսումնասիրություններ է ներկայացնում արտասահմանյան ռիթմիկ երաժշտության ուղեկցությամբ: Ինչ խոսք, այստեղ ևս չի կարելի կորցնել չափի զգացումը:

Ռադիոն բավիցս է անդրադառնում կույրերի հիմնախնդրին, ովքեր հաճախ նաև երաժշտական ընդունակություններ ունեն: Ողջունելի է այն հանգամանքը, երբ երիտասարդ կոմպոզիտորի մասին պարմող ակնարկում որպես ձևավորում օգտագործվում

են հենց նրա ստեղծագործությունները: Եթե հերոսը ստեղծագործող է, հիմնականում փորձում են այնպես անել, որ նյութը զուգակցվի նրա հեղինակած երաժշտությամբ, երգով կամ բանաստեղծություններով:

Ռադիոհաղորդումների ձևավորման հարցում ևս լուրջ անելիքներ կան, որովհետև դա նյութի անքակտելի մասն է և ամենամեծ ազդեցությունն է գործում ունկնդրի վրա, ավելի մեծ, քան լավ արտասանված բառերն ու նախադասությունները:

2.3. Հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկությունները հեռուստատեսությունում

Հեռուստատեսությունն այսօր ամենամեծ մասսայականություն վայելող տեղեկատվական միջոցն է Հայաստանում: Դեռևս 2004 թ. ապրիլ-մայիս ամիսներին «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության կողմից իրականացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Երևանում, որտեղ կենտրոնացած է հանրապետության բնակչության մոտ կեսը, քաղաքացիների 89,40%-ը հիմնական տեղեկատվությունը ստանում է հեռուստատեսությունից: Երկրում գործող ավելի քան 17 տեղական և ազգային հեռուստաընկերությունները թեև զգալիորեն չեն փարբերվում հաղորդումների բազմազանությամբ և, հատկապես, սոցիալական հարցերի լուսաբանման առափոխությամբ, այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչյուրն առեղծվ դեր ունի հասարակական կարծիքի ձևավորման հարցում: Անգնն աչքով նույնիսկ կարելի է նկատել, որ հեռուստաթերթն այսօր ավելի շարժամանցային միջոց է դարձել, և հասարակությանը հուզող շարժարարներ, այդ թվում նաև՝ սոցիալականը, մասամբ են լուսաբանվում այս լրատվամիջոցի կողմից:

Տեղական և միջազգային փորձեր կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրում գործող փասնյակ մասնավոր և առևտրային հեռուստաընկերությունների կողքին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունն առաջին տեղն է գրավում: Հանրայինը նաև միակ հեռուստաընկերությունն է, որ սփռվում է հանրապետության ողջ տարածքով, այդ է պատճառով, որ ներկայացվող թեմայի ուսումնասիրության շրջանակում դրան առանձնակի ուշադրություն է հատկացվում:

Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որը ստեղծում է պետությունը՝ ապահովելու քաղաքացիների սահմանադրական իրավունքը, այն է՝ ազատորեն սրանալ քաղաքական, փոփոխական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր այլ տեղեկատվություն: Սակայն Հանրայինի առաքելություններից մասնավորապես ուզում ենք առանձնացնել երկուսը՝ պատասխանատվությունը լսարանի առջև և բազմաբնույթ թեմատիկան:

Նախ՝ այն հանրապետության հեռուստաթերթում մտք երկու փասնյակ մասնավոր ալիքների կողքին պետք է լինի հաղորդման նյութի առումով բացառիկ պատասխանատու, որովհետև Առաջին ալիքով հնչող ամեն ինչ հեռուստալսարանի մեծ մասի համար ուղղակիորեն զուգորդվում է պետական-պաշտոնական դիրքորոշման հետ, ինչը արտացոլում է լսարանի՝ խորհրդային անցյալից մնացած կարծրափոփոքեր և դիտվում է որպես հավաստիության միակ չափանիշ. հիմնականում՝ առողջապահությանը, նոր օրենքների լուսաբանմանը, պետական ծրագրերին վերաբերող հաղորդումների դեպքում:

Այնուհետև՝ պետք է հաղորդման թեմատիկայի առումով բա-

ցածրիկ ընդգրկումն լինի, որովհետև հանրությունն ակնկալում է, որ Առաջին ալիքը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի ուսումնակրթական, մանկապարտեզական, գիտահանրամարտչելի և դաստիարակչական հաղորդումներին, նույնքան մեծ պեղ տա գյուղատնտեսական, առողջապահական, սոցիալական, դատարանական, մարզական, մշակութային, զրական-գեղարվեստական, ռազմահայրենասիրական, ազգային-երաժշտական հաղորդումներին, նույնքան էլ եթերաժամանակ հատկացնի հաշմանդամների, թոշակառուների, միայնակ մայրերի, ազգային փոքրամասնությունների և եկեղեցու հիմնախնդիրներին:

Սակայն վերը նշվածն այն է, ինչ ցանկալի է, բայց ոչ իրական և կիրառելի այսօր:

Հանրայինի ղեկավարները փաստում են. եթերը վերը թվարկված բոլոր կարևորագույն հաղորդումներով ծանրաբեռնելով՝ կկորցնեն զանգվածային դիտողին, կկորցնեն իրենց հեռուստալսարանի զգալի մասը և տանուլ կտան մասնավոր հեռուստաալիքների հետ մրցակցային պայքարում: Ասել է թե՛ բնակչությանը հուզող բոլոր խնդիրների մասին խոսելը շահավետ չէ Հանրային հեռուստաընկերության համար:

Մեր ուսումնասիրությունները և մոնիթորինգը վկայում են, սակայն, որ առանձին դեպքերում Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը, այնուամենայնիվ, անդրադառնում է նաև հաշմանդամության խնդիրներին՝ հիմնականում դրա համար տրամադրելով առավել տանջող ծրագրի կամ «Հայլուր» լրատվականի եթերը: Դրանք լինում են հարցազրույցներ ստուդիաներում կամ ռեպորտաժներ, ինչպես նաև «Լուս» տեսանյութեր, որոնք հիմնականում եթեր է տալիս «Հայլուրը», երբ հարցը հաշմանդամ մարդկանց է վերաբերում կամ նրանց խնդիրներով զբաղվող ՀԿ-ներին: Եվ այսպես Հանրայինի լրատվական ծրագիրը բացառիկ

դեպքերում է անդրադառնում խնդրին, այնուամենայնիվ, Հանրային լրագրողների մեջ կան մարդիկ, ովքեր հասցրել են մասնագիտանալ խնդրի լուսաբանման հարցում և փարիներ շարունակ անդրադառնում են փարբեր խնդիրների՝ կրթական, կառավարության որոշումներին, բուհական ընդունելության քննություններին և այլ հարցերի վերաբերող:

Վերջին երկու փարիներին դրանք եղել են բացառապես ընտրությունների հետ կապված: Լուսաբանումների թիվը համեմատաբար նվազել է, ինչը պայմանավորված է առաջին հերթին լրագրական ծրագրի քաղաքականությամբ: Եթե լրագրողների անձնական նախաձեռնությանը մնար, ապա ավելի հաճախ կանդրադառնային:

Բայց քանի որ լրագրական ծառայությունն այլ քաղաքականություն ունի, և երբեմն կարող է լինել այնպես, որ նյութ պարաստեն, բայց այն չգնա եթեր, հեղինակային հետաքրքրությունն էլ է մարում:

Սկսածի ունենալով Հանրային հեռարձակման հիմքում ընկած սկզբունքները՝ պետք է նշենք, որ դրա կարևորագույն պայմանները մեր Հանրային հեռուստաընկերության համար դեռևս մնում են չիրագործված կամ, լավագույն դեպքում՝ թերի: Դրանցից մեկն էլ բազմակարծությունն ապահովելն ու հանրության փարբեր շերտերի համար տեղեկատվության մատչելիությունն ապահովելն է: Այս սկզբունքներն իրապես որդեգրելով միայն Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կարող է նպաստել երկրում քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Այնինչ այսօր հակառակ պարկերն է, և հեռուստավարկանիշների նոր մրցակցության մեջ հաշվի են առնված բոլոր կողմերի շահերը, բացի հեռուստադիտողից: Հեռուստադիտողն ընդամենը զանգված է, որն օգտագործվում է իշխանական և բիզնես «էլի-

տայի» կողմից իրենց կարիքները բավարարելու համար, մեկ՝ որպես ընտանեկան զբաղմունք, մեկ՝ որպես ապրանքների և ծառայությունների սպառող:

20-րդ դարում ծնված հեռուստաընկերությունն իր բնույթով ժողովրդավարական է: Այն կոչված է զանգվածների համար մարտնչի դարձնել քաղաքականությունն ու մշակույթը: Հեռուստատեսության խնդիրն է բարձրացնել հասարակության իմացության և ճաշակի մակարդակը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այս խնդիրը կարող է լուծել միայն հանրային հեռուստատեսությունը, այսինքն՝ այն հեռուստատեսությունը, որը պատկանում է հասարակությանը:

Ինչպես «Հ1»-ը, այնպես էլ բոլոր մյուս հեռուստաընկերությունները խնդրին անդրադառնում են տեղեկատվական հաղորդումների, մասնավորապես՝ լրատվական ծրագրերի շրջանակներում: Սա այն դեպքն է, երբ գրեթե բոլոր ալիքները տեղ են տալիս միջոցառումներին, որ նախաձեռնում են հաշմանդամների շահերով զբաղվող կազմակերպությունները՝ կախված նրանից, թե ովքեր են կազմակերպիչները, ինչ պաշտոնյաներ են մասնակցեցնում միջոցառմանը, ինչ միջազգային հյուրեր կան, և որքանով է տեսարժան միջոցառումը: Լուրերի ձևաչափն արդեն ենթադրում է, որ դրանք հիմնականում իրադարձային ռեպորտաժներ են, հպանցիկ անդրադարձներ և զուտ նկարագրական սյուժեներ: Շոշափվող հարցերն ու թեմաները բազմազան են՝ սպորտ, մշակույթ, միջավայրի մարտնչություն, կրթություն և այլն:

Ինչպես փաստում են մասնագետները, Հայաստանում հեռուստաընկերությունների միջև որևէ մրցակցություն չկա տեղեկատվության բովանդակության առումով: Օրինակ՝ Հանրային հեռուստաընկերության փոխտնօրենի դիտարկմամբ՝ տեսանյութերի 80 փոկոսը կրկնվում է բոլոր հեռուստաընկերություններ

րով, իրենցը փարբերվում է միայն նրանով, որ ավելի գրագետ է պատրաստված:

Հաշմանդամության թեմայով «Արևածաղիկ» ԶԼՄ-ների մրցույթի հանձնաժողովի անդամները փաստում են, որ արդյունքները միշտ ցույց են տվել, որ համեմատության մեջ հեռուստատեսային նյութերն ավելի որակյալ են: Եվ, չնայած իր ազդեցության մեծ հնարավորություններին՝ հեռուստատեսությունն ունի նաև ավելի հաճախ և կոպիտ սխալվելու հավանականություն:

Մի շար կարևոր միջոցառման ժամանակ մեկը «բերանից թռչրել էր», թե հացի խնդիր ունենք ու մի հացի կտոր էր ցույց տվել, իսկ օպերատորն ուղղակի հացի կտորն էր որսացել: Այդպիսով՝ լուսաբանման արդյունքում պարզվեց, որ հաշմանդամները սոված են, ուրիշ խնդիր չկա, այնինչ ամբողջ միջոցառումը նվիրված էր օրենսդրական քննարկումների:

Որքան էլ փարօրինակ է, բայց հեռուստաժուռնալիստիկայում էլ դեռևս առկա են հնացած բառապաշարն ու պաթեփիկ ոճը: Օրինակ՝ «Շանթ» հեռուստաընկերության լրատվականի հաշմանդամության մասին սյուժեները սկսվում են այսպես. «Տասնհինգ փարի առաջ ավտովթարի հետևանքով մեկընդմիջ գրկվելով քայլելու հնարավորությունից՝ սփոփանք գտավ երգում՝ միանալով անվաթռռին նստած իր բախտակիցներին»⁵⁸: Կամ՝ «Հայլուր» լրատվականի եթերում կարելի է հանդիպել դեպքի, երբ լրագրողը ներկայացնում է գրուցակցին՝ ասելով. «Միերն առաջ սպորտսմեն էր, հիմա՝ Հայաստանում ապրող 150 հազար հաշմանդամներից մեկը»⁵⁹: Ռեպորտաժն սկսելով այս փողերով՝ հեղինակն արդեն զրկում է հաշմանդամին մարդկային դեմք, նկարագիր, անուն և հասարակության մեջ իր տեղն ունենալու հնարավորությունից, քանի որ հեռուստադիտողի համար նա պարզապես «հաշմանդամ» է: Սրան հավելելով լուսագրի անուն-

ազգանվան վերևում գրված «Հաշմանդամ» բառը՝ լրագրողն այնպիսի փափաքով է ստեղծում, թե դա մարդու պիտակն է կամ պաշտոնը, այնինչ նույնն է, թե հարցազրույց փոփոխ անվան փակ գրվի «ամուսին» կամ, ասենք, «աղջիկ»: Մեկ այլ նախապաշարումային մոտեցում ևս. լրագրողը նախ պատմում է, որ հերոսի հաշմանդամությունը ձեռքբերովի է, ապա շարունակում. «Կինը՝ Կարինեն, նույնպես սայլակով է. 88-ի երկրաշարժի հետևանք է: Մերին փան միակ երեխան է, աղջիկն առողջ է»: Անհասկանալի է, թե ինչու պեքը է աղջիկն անառողջ կամ հաշմանդամ լինելը, եթե ծնողներից երկուսի հաշմանդամությունն էլ պատահարի արդյունք է:

Եվ նման դեպքերը քիչ չեն, քանի որ ընդունված կարծիք է, որ եթե հաշմանդամ մարդիկ ամուսնանում են, ապա միայն հաշմանդամ մարդկանց հետ, և հավանական է, որ նրանց զավակներն էլ հաշմանդամ լինեն: Բայց իրականությունն ամենևին էլ այդպես չէ. հաշմանդամության քիչ տեսակներ կան, որոնք ժառանգաբար փոխանցվում են:

Վեռուստաժուռնալիստիկայի ամենակոպիտ սխալներից մեկը լրագրողական տեքստի և կադրերի անհամապատասխանությունն է, երբ հեռուստադիտողը լսում է մեկ, տեսնում բոլորովին այլ բան: «Կենտրոն» հեռուստաընկերության տեղեկատվական-վերլուծական հաղորդումներից մեկի ժամանակ լրագրողը վեր է հանում բուհական կրթության խնդիրը⁶⁰: Հաղորդավարը պատմում է, որ հերոսը համալսարանի ուսանող է, սակայն նրան տեսնում ենք ինչ-որ անհասկանալի միջավայրում, որն ակնհայտ փարբերվում է համալսարանից: Ո՛չ բնակարանում, ո՛չ աշխատավայրում, այլ ինչ-որ սեմինարի ժամանակ: Այնուհետև նա հարցազրույց է փախս մեկ այլ, նախորդից կտրուկ փարբերվող միջավայրում փարթինակ հագուստով: Տարբեր պաշտոնյաների

հեպ գրույցելույ հեպո հեղինակը նոր միայն վերադառնում է իր հերոսին և նշում, որ վերջինս նաև թափրոնի դերասանուհի է, ինչից միայն պարզ է դառնում, թե ինչու էր նա այդ կերպարի մեջ հարցազրույց փալխ:

Գրեթե բոլոր դեպքերում հեռուստասյուժեները սկսվում են մեկ հերոսի պատմությամբ՝ ընդհանրացնելով նրա խնդիրները: Լինում են նաև դեպքեր, երբ ռեպորտաժի կեսից հեղինակը, խճճ-վելով խնդիրների բազմազանության մեջ, մոռանում է հերոսին:

Հեռուստաբեռությանը հատուկ են հպանցիկ անդրադարձները, որոնց ընթացքում սակայն շատ լրագրողներ փորձում են անդրադառնալ մի քանի խնդրի և քննարկել փարաբնույթ հարյսեր կատարելով կիրուկ անցումներ: Միայն «Կենտրոն» հեռուստաընկերության «Գաղտնավանկ» և «Հ1»-ի «360 ասփիճան» հաղորդաշարերում եղել են դեպքեր, երբ խնդրի վերլուծության փորձ է արվել:

Բացի լրատվությունից, առանձին հեռուստաընկերություններ թեմային անդրադառնում են նաև իրենց մյուս հաղորդումների ժամանակ. «Հ1»-ը՝ «360 ասփիճան», «Առավոտյան ծրագրի», «Նոր ալիքը»՝ «Թեժ անկյուն», «Երկիր մեղիան»՝ «Անկախության սերունդ», «Հ2»-ը՝ «Նայիր աչքերիս մեջ», «Ար»-ը՝ «Կրթություն ցպահանջ», «Բաց եթեր», «TV5»-ը՝ «Էքսպրես», «Ուշ երեկոյան» և այլն:

«Շողակաթ» հեռուստաընկերությունը խնդրին անդրադառնում է ոչ միայն իր հաղորդումների ժամանակ, այլև առանձին ֆիլմերով: Հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար Արա Շիրինյանը համոզված է, որ ԶԼՄ-ները պետք է կարողանան ձևավորել իրենց լսարանը և լսելի դարձնեն այդ թեմաները լայն հասարակությանը: Նա ինքը հաշմանդամության թեմայով ֆիլմեր է նկարահանում 1996 թ.-ից:

«ՕԲՄՖԱՍ» բրիտանական կազմակերպության հետ սկսել են նկարահանել «Լիիրավ կյանք» ֆիլմաշարը, որն ամեն անգամ անդրադառնում էր հաշմանդամության որևէ խմբի խնդիրներին: Աշխատում էին որպես գործընկերներ: Կազմակերպությունն ինքն էլ չգիտեր հայկական միջավայրում խնդրի առանձնահատկությունները, և լրագրողները նաև հեղափոխություններ էին անում: Օրինակ՝ բացահայտեցին, որ Հայաստանում, ի տարբերություն մյուս երկրների, խուլերի համար առանձնահատուկ է կրթական խնդիրը, կամ՝ որ կույրերն ունեն բարձր ինտելեկտուալ մակարդակ և նրանց համար առաջնայինը մարչելիության, աշխատանքի տեղավորման և հասարակությանն ինտեգրվելու խնդիրն է:

Հմրանալու և փորձ ձեռք բերելու ճանապարհին հեռուստալրագրողներին հանդիպած խնդիրները նույնն են, ինչ մյուսների-նր՝ բացառությամբ այն պարագայի, որ այստեղ թիմային աշխատանք է պահանջվում, և էթիկայի նորմերն ու վարվեցողության կանոնները պետք է դառնան ողջ ստեղծագործական խմբի կանոնները: Փորձը ցույց է տալիս, որ սկզբնական շրջանում այդ հարցում խուլները հիմնականում կողմնորոշվում է անձնական ինտիմիտիվ չափանիշներով: Եվ քանի որ լրագրողական դպրոցը չի նախապատրաստում այդ թեմաներին անդրադառնալու համար, կարող են լինել նաև սխալներ: Արա Շիրինյանը փաստում է, որ դրանք հիմնականում լինում են կադրից դուրս հաղորդավարական տեքստի մեջ: Այնուամենայնիվ մասնագետները նշում են, որ ֆիլմեր և հաղորդումներ անելուց հետո են սովորում, թե իրենց հիմնական սխալը որն էր:

Պետք է նշել, որ ֆիլմերն ու ակնարկները երկրորդ հիմնական միջոցն են, որին դիմում են հեռուստաընկերությունները խնդրի վերհանման և մարդկային պատմությունների ներկայացման համար: Դրանք ավելի մեծ հնարավորություն են տալիս հե-

ղինակներին բացահայտելու խնդիրը և ազդելու հանրային գիտակցության վրա, որովհետև ոչինչ այդքան ազդեցիկ ու փափուրիչ չէ, որքան մարդկային ճակատագրերը, հատկապես հաջողված պատմությունները: Դրանց առավելությունը նաև գեղարվեստականության ոճի մեջ է, որտեղ ևս չափավորություն է հարկավոր, այլապես այնպիսի թեմայի դեպքում, ինչպիսին է հաշմանդամությունը, ավելորդ հուզականություն սրբեղծելու և հակառակ արդյունքն ունենալու վտանգ կա նաև:

10-րդապետնոց «Կյանքը իմ աչքերով»⁶¹ ֆիլմը հրաշալի պատմություն է կույր երիտասարդի մասին, ով երաժշտական փառանդ ունի, իրավաբանի մասնագիտություն է ձեռք բերել, աշխատանք ունի և կայացել է կյանքում: Ֆիլմի առավելությունն այն է, որ ողջ ընթացքում հերոսն ինքն է պատմում իր մասին: Չկա որևէ միջամտություն ո՛չ հեղինակի, ո՛չ էլ կողմնակի ուրիշ անձանց կողմից: Սակայն ֆիլմի սկիզբն ավելի էմոցիոնալ է, քան ողջ պատմությունը. մութ միջանցքով քայլում է երիտասարդը, խորհրդավոր և ծանր երաժշտության ներքո լսվում է ձայնը. «Ինձ ոչինչ չի կարող խանգարել, որ ես իրականացնեմ իմ ցանկացածը»: Այս ամենը հեռուստադիտողն ինքը կարող էր հասկանալ ֆիլմը դիտելուց հետո: Սակայն շտապելու պատճառով հեղինակն ավելորդ կարծրափայեր է սրբեղծում հաշմանդամ մարդկանց, նրանց «գերբնական» կարողությունների և փառանդի մասին:

Բառերի փոխաբան ամեն ինչ ասում են հաջորդող կադրերը, երբ երիտասարդը հագնվում է, պատրաստվում փոխ փուրս գալուն և այս ամենը՝ ռիթմիկ երաժշտության ներքո: Այնուհետև մենք հերոսին փեսնում ենք փորձերի ժամանակ դաշնամուր նվագելիս, ընկերների հետ նարդի խաղալիս, աշխատանքի գնալիս և նույնիսկ ավերմեքենա վարելիս: Մեկ այլ պարզ, բայց լրագրողների

կողմից շար հաճախ անտեսվող փաստ սս. ֆիլմի ընթացքում օգտագործվել են հերոսի ստեղծագործությունները:

Լրափակյան հաղորդումների և թողարկումների ժամանակ **հերոսները** հիմնականում չափահասներ են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք նաև տեղեկատվության աղբյուր են հանդիսանում լրագրողի համար, թեպետ այս դեպքում նրանց այդքան էլ չի կարելի հերոս անվանել: Նրանք հիմնականում հասարակական կազմակերպությունների անդամներ են, ովքեր նաև հեղինակն են անցկացրած միջոցառումների, որոնք լուսաբանվում են լրափամփիջուցի կողմից:

Տեսաֆիլմերի կամ վերլուծական այուժենների դեպքում խնդիրն այլ է: Այստեղ գրեթե հնարավոր չէ առանց հերոսի. նրա առկայությունը միշտ ողջունելի է:

Թեև մասնագետները հերոսների ընտրության դժվարություններ ունեն, այսօր շար ավելի հեշտ է տեսնել մի նյութ, որտեղ գործ ունես նպատակին հասնող լուրջ մարդու հետ, ով հաշմանդամություն ունի: Ոլորտում փորձ ձեռք բերած հեղինակները պնդում են, որ այսօր ՀԿ-ները բավական կայացած են և կերպարի ընտրության հետ կապված ցանկացած տեղեկություն կարող են ստանալ նրանցից, եթե ցուցաբերում են անկեղծ հետաքրքրություն և պրոֆեսիոնալ մոտեցում:

Թերևս ամենավառ կերպարները կարելի է տեսնել հեռուստատեսային հաղորդումներում և ֆիլմերում, որոնք կարող են աշխարհաքնի հաջողության գլխավոր գրավականը դառնալ: Նրանք հիմնականում երեխաներ ու պատանիներ են կամ երիտասարդներ:

«Արևածաղիկ» ՋԼՄ մրցույթի ժյուրին 2007 թ. Չարենյավանի «Լուսալիք» հեռուստաընկերության լրագրողներից մեկին հարուկ մրցանակ շնորհեց տեսաֆիլմում ընտրած հերոսի հա-

մար⁶²: Ֆիլմի 14-ամյա հերոսուհին մեզ է ներկայանում ընդհանրում, դպրոցում, բակում: Լիարժեք կյանքով ապրող երեխային հեղինակը ներկայացնում է մեկ ուղիղ խոսքով, մեկ՝ ընկերների խոսքով, մեկ՝ ընդհանրի անդամներից յուրաքանչյուրի պատմածներում: Սա ևս լավագույն միջոցներից է հերոսի ամբողջական կերպարը ստեղծելու համար: Սակայն այն անթերի կլիներ, եթե չլիներ լրագրողի միջամտությունը: Խոսելով հերոսի փոխարեն, բանաստեղծություններ մեջբերելով, սեփական գնահատականները տալով և իր անձնական վերաբերմունքը հայտնելով՝ հեղինակային տեսքում նա ավելորդ զգացմունքանություն և վերամբարձություն է հաղորդում նյութին: Այնինչ միայն տեսանյութի կադրերն ամեն ինչ կարող էին պատմել աղջկա կյանքի մասին:

Մեկ այլ դեպքում ականատես ենք լինում նրան, որ հերոսի ընտրությունը լրագրողին հնարավորություն չի տալիս ավելի զարգացնելու թեման և կերպարն ամբողջությամբ բացելու: Այսինքն՝ իր հերոսի պոպենցիակն ամբողջությամբ չի օգտագործում, այնինչ ակնհայտ է, որ կարելի էր առավելագույն արդյունքի հասնել նյութն այլ կերպ կառուցելով:

«Երկիր մեդիայի» եթերում⁶³ վերլուծական տեսանյութի համար հերոսուհի է ընտրվել մի երիտասարդ աղջիկ, ով ուսանում է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում: Աղջկա հարցազրույցից և նրա մասին հայտնած տեղեկատվությունից պարզ է դառնում, որ նա ինտեգրված, լիարժեք կյանքով ապրող մարդ է, հեղափոխիչ ձևակազմով և լուրջ ձեռքբերումներով, ով կարող է նաև քաջալերող օրինակ դառնալ շատերի համար: Սակայն լրագրողը նրան մի քանի դրվագներում է ներկայացնում միայն՝ համալսարանի ռեկտորի, ՀՀ նախագահի հետ արված հարցազրույցների ժամանակ: Վերջիններիս խոս-

քը, սակայն, կարելի էր նաև հեղինակային տեքստում տալ, որովհետև դրանք զուտ տեղեկատվություն են:

Մեկ այլ ռեպորտաժում, որը պատմում է մարզական մրցումների և հաշմանդամային սպորտի մասին⁶⁴, ընդամենը երկու կարճ սինքրոն է գնում մարզիկների հարցազրույցից: Ողջ տեսաշարում նրանց փոխարեն խոսում են Կարմիր խաչի տնօրինությունը, պարալիմպիկի նախագահը, ՀԿ նախագահներ և մարզիչներ: Նույնիսկ հաղթողների մասին նշվում է միայն քաղաքը՝ առանց նրանց անունը տալու և առավելևս հարցազրույց անցկացնելու: Հաշմանդամ մարդկանց շրջանում անցկացրած մեր հարցումները վկայում են, որ լրագրողների մոտեցումներն ու հարցադրումները միշտ չէ, որ միտված են հերոսին բացահայտել: Հարցազրույցների ժամանակ միշտ շեշտադրումները ժխտական կամ բացասական են լինում, և դեռևս չկա այն մոտեցումը, որ հաշմանդամ մարդուն ներկայացնեն դրական համատեքստում:

Ի տարբերություն մամուլի և ռադիոյի՝ հեռուստատեսությունը ԶԼՄ այն տեսակն է, որտեղ լրագրողներն ամենաշատն են հանդիպում ճնշման ղեկավարների և խմբագիրների կողմից, քանի որ թեման լուսաբանել-չլուսաբանելու հարցը ևս նրանց որոշումն է: Լրագրողներից շատերը նշում են, որ բազմիցս հանդիպել են այնպիսի փաստարկների, թե այդ թեման ոչ մեկին հետաքրքիր չէ և լուսաբանելու կարիք չկա: Երբ շատ ակտիվ լուսաբանել են հաշմանդամության թեման, խմբագիրները մեղադրել են: Եղել են նույնիսկ ռեպորտաժներ, որ վեճերի արդյունքում են միայն եթեր գնացել:

Հեռուստատեսությունն այն ոլորտն է, որտեղ ամենահեղիեղուն են լրագրողների **մասնագիտական բաժանումները**: Հարկապես լրատվության բաժնում աշխատող անձը լուսաբա-

նում է ամեն ինչ՝ սկսած մշակութային միջոցառումներից, վերջացրած սոցիալական հարցերով: Արձանագրվել են դեպքեր, երբ լրագրողը երեք փարի շարունակ միայն ինքն է անդրադարձել խնդրին, բայց վերջին երկու փարում նույն խմբագրությունից փարբեր մարդիկ են անում՝ երբեմն և իրենց նախաձեռնությամբ:

Ինչպես բոլոր մյուս դեպքերում, հեռուստապեսության ոլորտում ևս թեմային անդրադառնալիս լրագրողներին օգնում են անհատները և ոչ կառավարական կազմակերպությունները, քանի որ կազմակերպված պետական մոտեցում, լրագրողական վերապատրաստումներ չեն լինում: Դա մնացել է անձնական նախաձեռնությունների և շփումների մակարդակում: Այսպեղ օգնության է հասնում նաև գործընկերների փորձը: Մեր հարցումները ցույց են փալիս, որ «նորեկները» պարտադիր դիմում են իրենց հետ աշխատող մյուս լրագրողներին, նկարահանումներից առաջ հարցեր են փալիս: Վերջիններս որպես «փորձագետ» են հանդես գալիս և երբեմն նաև ռեպորտաժը դիտելուց հետո դիտողություններ անում կամ խորհուրդներ փալիս: Նրանք համոզված են, որ եթե մի թեմա հասկացել ես, պետք է շարունակես գործը: Դա նաև բարոյական պարտավորություն է: Եթե հանձն են առել մի խումբ մարդկանց իրավունքների մասին իրազեկել, իրավունք չունեն կիսատ թողնել: Դա նաև պրոֆեսիոնալ պահանջ է:

Այնուամենայնիվ որոշակի պայմանական բաժանումներ կան առանձին լրագրամիջոցներում, օրինակ՝ «Երկիր մեդիա», «Հ2», «Շանթ», «Շողակաթ» հեռուստաընկերություններում: Հեղափոխություն է, որ շատ դեպքերում հաշմանդամության խնդիրը լուսաբանում են ոչ թե սոցիալական ոլորտի լրագրողները, այլ ավելի հաճախ կրթական, ինչը, կարծում ենք, պայմանավորված է կրթության խնդրի գերակայությամբ:

Հաշմանդամ մարդիկ նշում են, որ հեռուստապեսությունը բա-

վական արագ է զարգանում խնդրի լուսաբանման առումով. այսօր ավելի նվազել են դեպքերը, երբ նախ ցույց էին տալիս մարդու ֆիզիկական խնդիրը, հետո միայն՝ մարդուն: Նախկինում կենտրոնացումներն ավելի շար էին:

Մասնագետները նշում են, որ նկարահանման, այնուհետև նյութի **մոնտաժման և ձևավորման** հարցում ևս կարծրափայտե կան, որոնք, սակայն, շար դեպքերում արդեն հաղթահարված են: Իհարկե, պրոֆեսիոնալները փորձում են դա չանել, բայց ինչպես ցույց է տալիս փորձը, ուրիշների սխալների վրա սովորելը շար դժվար է:

«Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրագրավական ծրագրում փեղ գրած տեսանյութում⁶⁵ նախ նկատում ենք, որ օպերատորը սայլակին նստած հաշմանդամ զրուցակցին ցուցադրում է զրեթե ուսերից՝ խուսափելով ցուցադրել սայլակը կամ հերոսին սայլակին նստած: Ըստ երևույթին նա այդպիսով ցանկացել է խուսափել խղճահարություն հարուցող կադրերից, այնինչ երիտասարդ տղայի տեսքն ամենևին էլ խղճահարության արժանի չէր: Այնուհետև տեսանյութում նկատում ենք թեմայի և հերոսների հետ կապ չունեցող կադրեր՝ հեռվում սայլակին նստած միայնակ մարդ, ով, հավանաբար, խորհրդանշական դեր ուներ նյութում: Արդեն բազմիցս նշել ենք, որ պետք չէ թաքցնել հաշմանդամությունը, ոչ էլ պետք է անհարկի կենտրոնանալ մարդու ֆիզիկական խնդրի վրա՝ ո՛չ տեքստում, ո՛չ հարկապես կադրում:

Մեկ այլ դեպքում ականատես ենք լինում, թե ինչպես է հեղինակը ներկայացնում իր հերոսին. «Տասնյոթամյա այս աղջնակը մանուկ հասակից հենակներով է քայլում»⁶⁶, իսկ մինչ այդ օպերատորը ցուցադրում է հենակներով քայլող աղջկան հետևից՝ հարկապես կենտրոնանալով նրա քայլելու դժվարության

վրա: Այդպիսով հեռուստադիտողի աչքի առջև կորչում է աղջկա դեմքը, կերպարը և անհատականությունը: Նա չի էլ հասցնում հեռուստադիտողին հեղաքրքրել որպես մարդ, որովհետև նախ երևում են նրա ֆիզիկական խնդիրը, հաշմանդամությունը, հե՛նակները:

Քանի որ մոնտաժողը և օպերատորն այդ առումով ավելի ան-տեղյակ են, նյութի մոնտաժման ժամանակ գերիշխողը դառնում է լրագրողի խոսքը: Եվ դա ոչ թե որովհետև ստեղծագործական խմբի մյուս անդամները վար են աշխատում, այլ պարզապես անտեղյակ են: Շատ հաճախ գույե կադրը տեսնիկապես ճիշտ է, բայց եթևկապես սխալ: Շատ հեռուստաընկերություններում հիմնական հեղինակային իրավունքը լրագրողինն է՝ օպերատորի աշխատանքից սկսած մինչև մոնտաժը:

Հեռուստաընկերությունների խմբագրություններում նկարա-հանման եթևկայի հատուկ կանոններ չկան: Գիտեն, որ շատ մո-տիվիկի պետք չէ նկարել, անկախ այն բանից՝ հաշմանդամ է մարդը, թե ոչ: Այստեղ ավելի շատ մարդկային եթևկայի խնդիր է: Օպերատորները երբևէ մարդուն չեն հարցնում՝ նկարե՞լ, թե՞ ոչ: Չեն լինում նաև դեպքեր, երբ դեմ են լինում նկարահան-մանը:

Բազմիցս հաշմանդամության խնդիրներին վերաբերող ռեպոր-տաժներ, միջոցառումներ նկարահանած օպերատորներն ունեն իրենց «կանոնները», որոնցով առաջնորդվում են տարիներ շա-րունակ: Նրանցից շատերը խոստովանում են, որ նկարահանում-ներից առաջ հաճախ հատուկ տրամադրվել են: Եվ այսպես շա-տերի համար միանշանակ է, որ նկարելիս պահեր կան, երբ պետք է այնպես նկարել, որ մարդը չզգա: Գույե կան բաներ, որ մարդը չի ուզում նկարահանես, բայց դա պետք է ցույց տալ, և հանրությունը պետք է դա տեսնի, որովհետև օպերատորն այդ-

պիսի խնդիր է դրել նկարահանման գնալիս: Այդ պարճառով պետք է ավելի հեռվից նկարել, որովհետև նկարահանողը նաև չվիրավորելու խնդիր ունի:

Օպերատորները պարտադիր են համարում նկարահանել մարդուն սայլակով շարժվելիս, աստիճաններով իջնելիս, խոչընդոտներ հաղթահարելիս, որպեսզի անմապշելիության խնդիրը երևա, և հանրությունը հասկանա, որ այս մարդիկ ինքզուրու խնդիր ունեն: Հաճախ կադրերը ցույց են տալիս, թե ինչպես են մի քանիսն օգնում հաշմանդամ մարդուն սայլակով իջեցնել աստիճաններով: Օպերատորները համոզված են, որ հենց դա պետք է ցույց տալ հանրությանը:

Սա, անշուշտ, պարտադիր է հաշմանդամ մարդկանց մասին գործնական տեղեկություններ տալու և նրանց խնդիրներն ավելի շոշափելի դարձնելու իմաստով: Անդրադառնալով մեր ուսումնասիրած տեսանյութերին՝ պետք է նշենք, որ այդ իմաստով չափազանց կարևոր են «Հ1», «Միր», «Շողակաթ» հեռուստաընկերությունների լրատվական և այլ հաղորդումներում տեղ գրած կադրերը, որոնք ցուցադրում են հաշմանդամ մարդուն գործողության մեջ, տրանսպորտի և այլ շինությունների հարմարեցումները, դրանց կիրառման ձևերն ու գործառնությունները և այլն:

Զնայած տարածված այն կարծիքին, թե նրանք հիմնականում միայն սայլակ են նկարում որպես հաշմանդամության խորհրդանիշ, նրանք այնուամենայնիվ կարծում են, որ հասարակության մեջ է ընդունված, թե հաշմանդամը պարտադիր սայլակով է, այնինչ իրենք ցույց են հաշմանդամության տարբեր տեսակներ:

Օպերատորական դպրոցը ևս այս հարցում որևէ կերպ չի նախապատրաստում մասնագետներին, չնայած կան որոշակի նորմեր, որ ընդհանուր են բոլոր դեպքերի համար: Իսկ մասնավորի

դեպքում նրանք հիմնականում վարվում են ինչպես բոլորը՝ առաջնորդվելով անձնական էթիկայով, բարոյական նորմերով և չափանիշներով:

Փորձառուները, օրինակ, շարժ խոշոր կադրեր չեն անում, ասենք՝ հաշմված ձեռք չեն նկարում: Նրանք տեղում են գնահատում իրավիճակը և իրենց համար առանձնացնում ինչ պետք է նկարեն՝ կախված մարդու հաշմանդամության տեսակից:

Մեր գրույցները վկայում են, որ օպերատորներն ամենաքիչն են իրազեկ խնդիրն և, հետևաբար, ամենաշարժ են նախապաշարված: Նրանցից շատերը համոզված են, որ կան հաշմանդամության տեսակներ, որոնք ցուցադրելը ցավ կառաջացնի հեռուստադիտողի մեջ, որովհետև իրենք էլ հաճախ ցավ են ապրում հատկապես երեխաներին նկարելիս: Թեև խնդիրն առկա է և պետք է ցուցադրել, բայց ոչ ամենածանր դեպքերը: Թե ինչը նկարել, ինչը՝ ոչ, օպերատորն ինքն է որոշում: Այնինչ հենց նրա տեսախցիկից է կախված՝ հանրության մեջ կկոտրե՞ն գոյություն ունեցող կանխակալ կարծիքն ու վերաբերմունքը, թե՞ ավելի կխորացնեն:

Կան մարդիկ, որ խուսափում են նման նկարահանումներից: Հաճախ միջոցառումից գալիս են ազդված կամ տրավոլորված: Այսպիսի դեպքերում նաև միմյանց հետ խորհրդակցում են իրենք՝ նկարահանողները: Հարկապես նոր եկած երիտասարդ կադրերն իրենք են խորհուրդ հարցնում փորձառուներից:

Նրանց հիմնական աղբյուրը, սակայն, դառնում են լրագրողները, ում հետ աշխատում և զնում են նկարահանման: Եվ եթե լրագրողը փորձառու է կամ գիտելիքներ ունի, ապա նկարահանումներից առաջ անպայման կկիսվի իր իմացածով և խորհուրդներ ու ցուցումներ կտա՝ ինչը պետք է նկարել, ինչը՝ ոչ:

Օպերատորները փաստում են, որ հենց այս եղանակով են իրենք սովորում, և ավելի շատ՝ նկարահանումների արդյունքում:

Հաճախ տեսանյութը փչացնում են հին արխիվային կադրերը, որոնք փվյալ միջոցառման հետ կապ չունեն, սակայն տեղ են գտել ռեպորտաժում կամ հաղորդման մեջ:

Դրանց օգտագործման պատճառները հիմնականում երկուսն են. երբ հաշմանդամության խնդրի մասին բարձրաձայնելու նպատակով կազմակերպված միջոցառմանը կամ նույն հարցին առնչվող որևէ իրադարձությանը ներկա չեն հաշմանդամ մարդիկ, կամ նրանց թիվը շատ քիչ է, իսկ նյութի համար հարմար կադրեր են պեքը:

Մյուս դեպքը նկարահանումների ժամանակի սղությունն է: Հարկապես լուրերի բաժնում աշխատող օպերատորը 30 րոպե մի տեղում աշխատելուց հետո ստիպված է գնալ մեկ այլ նկարահանման: Այնինչ օպերատորներից շատերը միանշանակ գերադասում են մի քանի կազմակերպությունում նկարահանումներ անել, հաշմանդամ մարդուն նկարել աշխատանքի գնալիս կամ նրա առօրյան, կյանքի մեկ օրը և այլն: Դա, անշուշտ, ավելի գեղեցիկ և հետաքրքիր կլիներ և՛ նկարահանողի, և՛ հեռուստադիտողի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հասարակական փարբեր շերտերից մարդկանց ներգրավումը ՋԼՄ հրապարակումներում, նրանց խնդիրների վերհանումը և քննարկումը միայն անաչառության և հավասարակշռության պահպանման խնդիր չէ: Այն գործնական տեսանկյունից ևս կարևոր է լրագրության համար: Շատ լրագրական թողարկումներ սահմանափակում են իրենց հնարավոր լսարանը՝ ներկայացնելով միայն մեկ խմբի դիրքորոշումները: Եթե նրանք փորձեն ընդլայնել շրջանակները՝ լուսաբանելու համար այլ համայնքներին ևս՝ կարող են ընդլայնել իրենց լսարանը:

Հաշմանդամության խնդրի լուսաբանման հարցում որոշիչ դեր են խաղում լրագրողների և հաշմանդամ մարդկանց միջև գոյություն ունեցող մրավախոթություններն ու նախապաշարմունքները: Ինչպես ցույց տվեցին մեր սեփական հարցումները, լրագրողները հիմնականում հաղորդակցման բարդույթ են ունենում հաշմանդամ մարդկանց հետ զրույցելիս: Չափից դուրս զգուշությունն ու մրավախոթությունը, թե կարող է վիրավորեն, կաշկանդում են լրագրողներին: Պատահական չէ, որ այս ոլորտում արդեն մասնագիտացած և փորձ ձեռք բերած լրագրողներն իրենց ամենամեծ ձեռքբերումը համարում են հաշմանդամ մարդկանց վստահությունը, հաղորդակցվելու, հարցազրույց տալու նրանց պատրաստակամությունը⁶⁷:

Խոչընդոտող բարդություններն ու կարծրափայերը լրագրողների և հաշմանդամ մարդկանց միջև փոխադարձ են: Վերջիններս դժվարությամբ են համաձայնում հաղորդակցման, հարցազրույցի, տեղեկատվության տրամադրման: Բացի վերը նշված պատճառներից, հաշմանդամ մարդիկ նաև չեն վստահում լրագրողներին⁶⁸: Հաճախ առանձին անհատներ փորձում են լրագրողների

միջոցով խղճահարություն հարուցել իրենց նկատմամբ և այդպիսով ինչ-որ խնդիրների լուծում փալ: Սակայն ԶԼՄ-ների հետ չհամագործակցելու ամենամեծ պատճառները հաշմանդամ մարդկանց համար դեռևս մնում են ամոթխածությունը, անլիարժեքության բարդույթը և խղճահարությունից խուսափելու ցանկությունը: Իսկ փորձառու և մասնագիտացված լրագրողները, որ փորձում են նախ մարդկանց և նրանց խնդիրները ճանաչել, այնուհետև անդրադառնալ թեմային, դեռևս շարք քիչ են:

Օրինակ՝ Գերմանական մամուլի խորհուրդը մամուլի ընկերակցությունների հետ համարեղ ներկայացրած իր վարքականոնում սեռի, ցեղային, էթնիկական, կրոնական, սոցիալական կամ ազգային պատկանելության վրա հիմնված խտրականությունը անթույլատրելի է համարում⁶⁹:

Ցավոք, հայաստանյան արդի լրատվամիջոցներից քչերն են մասնագիտական էթիկայի կանոնագրեր ընդունել: Դրանցից շարքչերում կարելի է հանդիպել ամրագրված սկզբունքներ, որոնցով լրագրողները պետք է առաջնորդվեն խոցելի խմբերին անդրադառնալիս:

Վանաձորի մամուլի ակումբի խորհուրդը Հայաստանում եզակիներից է, որ իր էթիկայի կանոնագրում ուշադրություն է դարձրել այս խնդրին. «Մենք մերժում ենք սոցիալական, ռասայական, կրոնական, լեզվի, սեռի, քաղաքական, ազգային խտրականությունը, ֆիզիկական և մտավոր վիճակի անհարկի շեշտադրությունները, անձի արժանապատվությունը նսեմացնող գործողությունները, վիրավորական արտահայտությունները»⁷⁰:

Լուսաբանումներն էապես չեն փարբերվում իրարից: Լրատվամիջոցները հիմնականում խուսափում են նորարարություններից և քչերն են շեղվում լուսաբանման ավանդական մոտեցումներից: Լրատվամիջոցներում քիչ է ներառվում հաշմանդամ

մարդկանց ուղիղ խոսքը, ինչը կարծրափայային մտպեցման հեփրկանք է: Նրանց փոխարեն դեռևս խոսում են ընփանիքի անդամները, ՀԿ-ները, պաշտոնյաները, բժիշկները և այլք: Եթե լրագրողն այնուամենայնիվ որոշել է հերոս ունենալ նյութում, ապա ավելի հաճախ իր սեփական միջամտություններով, գնահատականներով և վերաբերմունքով փչացնում է այն տպավորությունը, որ կարող էր թողնել հերոսը:

Թեև շատ քիչ, բայց նկատվում է լրագրողների մի խումբ, որ հեփրնողականորեն անդրադառնում է թեմային, որը սակայն չի հեփրաքննում և մեկ խնդրի հեփրքերով չի գնում, ասենք՝ խորագրերի, հաղորդաշարերի միջոցով, այլ պարզապես անդրադառնում է հաշմանդամ մարդկանց տարբեր խնդիրներին: Այսինքն՝ այս ոլորտում մասնագիտացող լրագրողների միտում է նկատվում: Լրագրողներից շատերը ճանաչում են հիմնախնդրով զբաղվող նվագագույնը երկու ՀԿ՝ բնականաբար նրանց, ովքեր ակտիվ են դաշտում:

Լրատվամիջոցներից յուրաքանչյուրն ունի լուսաբանման իր առավելություններն ու թերությունները: Խնդիրը նոր-նոր է սկսում քննարկվել մարդու իրավունքների տեսանկյունից, թեև դրանք պաշտպանող իրավական ակտերին և օրենքներին հազվադեպ են հղումներ լինում: Ավելի շատ հանդիպում են հաշմանդամության բժշկական մոդելի վրա կառուցված նյութեր, որոնք հասարակության և պետության բարյացակամության ու բարի կամքի դրսևորման կոչ են անում, այլ ոչ թե օրենքների կիրառման ու հաշմանդամ մարդկանց իրավունքների պաշտպանության: Գործնական առաջարկների, խնդիրների լուծման ուղիներ ցուցադրելու փոխարեն գրեթե բոլոր ԶԼՄ-ներում գերիշխում են հռեփորական վերնագրերն ու կոչերը, որոնք իբր միտված են հանրության մեջ խղճահարություն առաջացնելուն, նրան խորհելու առիթ տալուն:

Մամուլն ավելի հաճախ է անդրադառնում հաշմանդամության խնդրին, քան մյուս լրագրամիջոցները, սակայն որակի առումով դեռևս զգալիորեն հետ է մնում նրանցից: Այսպեղ շեշտված են զգացմունքայնությունը և ավելորդ գեղարվեստականությունը: Տպագիր և էլեկտրոնային մամուլում ամենաշատն են հանդիպում լեզվի և բառերի հետ կապված սխալներ և անհարկի որակումներ: Պակասում են փաստերի հստակ շարադրանքը, օբյեկտիվությունը, բազմակարծությունը, խնդրի համակողմանի քննարկումը: Այսպեղ ավելի հաճախ հանդիպում ենք մամուլի հարողագրությունների ուղղակի վերաբերության:

Էլեկտրոնային մամուլը, սակայն, տպագրի համեմատությամբ, ավելի խորն է ուսումնասիրում խնդիրը, ավելի հաճախ է դրական օրինակներ ցուցադրում և վերլուծական փորձեր անում: Տպավորիչ և ազդեցիկ հաջողված պարտությունները հիմնականում այս լրագրամիջոցում ենք հանդիպում:

Պետք է նշենք, որ ռադիոյում ավելի քիչ են մակերեսային հաղորդումները: Այս լրագրամիջոցը կամ ընդհանրապես չի անդրադառնում թեմային, կամ, նվազագույնը, վերլուծության փորձ է անում: Սա է պարճառը, որ ռադիոն ամենապասիվն է այս խնդրի լուսաբանման հարցում, բայց նաև ամենապրոֆեսիոնալ մոտեցումն է ցուցաբերում: Այն առաջ է մամուլից և հեռուստատեսությունից թե՛ քննարկված թեմաների գործնականությամբ, թե՛ լրագրողների մասնագիտացմամբ և թե՛ խնդրի համակողմանի լուսաբանմամբ: Սակայն ռադիոն նս չի հրաժարվել կարծրափայտից. ավելի հաճախ անդրադառնում է կույրերի խնդրին, որովհետև իրենց պոպենցիալ լսարանն է, և գրեթե չի շոշափում խուլերի կամ թույլ լսողների խնդիրները՝ հաշվի չառնելով, որ «քրիստոնյաներին քրիստոնեություն են քարոզում»:

Հեռուստատեսությունը ամենահաճախակի և մակերեսային նյութերն է անում հաշմանդամության խնդրի մասին: Դրանք հիմնականում լուրերի թողարկման շրջանակներում են արվում կամ առանձին ֆիլմերի միջոցով, որոնք, սակայն, շատ չեն: Ավելի հաճախ լրագրողները տեղեկատվական հաղորդումներում են անդրադառնում թեմային, այս կամ այն միջոցառման շրջանակներում: Սակայն ամենամեծ ազդեցությունը հասարակական գիտակցության վրա ունենում է հեռուստատեսությունը: Մարդկանց մեծ խումբը հիմնականում տեղեկություն է ստանում այս լրատվամիջոցից, որը, սակայն, ամբողջությամբ չի օգտագործում իր հնարավորությունները հաշմանդամության խնդրի համակողմանի լուսաբանման համար:

Այստեղ խնդիրն ավելի բարդ է, որովհետև գործ ունենք ոչ թե անհատ լրագրողի, այլ ստեղծագործական խմբի հետ: Հեռուստատեսությունը դեռևս խուսափում է ցուցադրել հաշմանդամության տարբեր տեսակներ ունեցող մարդկանց, ովքեր հատկապես տարբերվում են ընդունված «խորհրդանիշներից»: Եթե ցուցադրում են, ապա նախ կենտրոնանում են խնդրի վրա, որի պատճառով անտեսվում է մարդը: Բավական մեծ աշխատանք է պահանջվում հատկապես օպերատորների հետ, ում ձեռքբերում են հեռուստատեսության ամենահզոր զենքերից մեկը՝ կադրը:

Փորձը ցույց է տալիս, որ ցանկացած խնդրի վերհանման համար այսօր կարևոր նախապայմանը դրանցով շահագրգիռ կողմերի ակտիվությունն ու նախաձեռնությունն է: Սա նշանակում է, որ հաշմանդամության խնդիրների լուծման, դրանց լուսաբանման սկզբունքների հետ կապված հարցերը ևս կարող են լուծվել միայն ՀԿ - ԶԼՄ սերտ համագործակցությամբ: Փաստ է, որ ՀԿ-ների մեծ մասի համար ԶԼՄ-ներն անմատչելի են, ինչի հետևանքով հասարակության լայն շերտերը չեն իրազեկվում իրենց

աշխատանքների, առաջադրած խնդիրների մասին: Փոխադարձ վերապահություն կա ՀՎ-ների և ՋԼՄ-ների միջև:

Բազմաթիվ խմբագիրներ ու լրագրողներ մրտնույն են, թե «գրանդակներ» կազմակերպությունը պետք է բարի լինի այդ դրամաշնորհից բաժին հանել նաև իր թերթի, ռադիոյի կամ հեռուստատեսության համար, այլապես ինչո՞ւ պետք է ինքը պրոպագանդի նրա գործունեությունը: ՀՎ-ներն էլ կարծում են, թե ՋԼՄ-ներն անվճար ոչ մի բան չեն փապագում, չեն հնչեցնում կամ չեն ցուցադրում, հերևաբար անիմաստ է նրանց հետ համագործակցելը: Հաճախ էլ կազմակերպությունները ձեռնպահ են մնում այդ համագործակցությունից՝ փաստերն ու իրավիճակը աղավաղելուց կամ այլ լույսի ներքո ներկայացնելուց խուսափելու համար:

Փաստ է, որ եթե ՀՎ-ների համար ՋԼՄ-ների հետ համագործակցությունը և խնդիրների հանդեպ նոր մոտեցումներ սերմանելը երկարատև աշխատանք է պահանջում, ապա պետական գերատեսչությունները նույն խնդիրը կարող են լուծել շարժվելի կարճ ժամանակահատվածում և ավելի նվազ ջանքեր գործադրելով:

Բավական է, որ գերատեսչությունները փոխեն իրենց վերաբերմունքը խնդրի և դրանով շահագրգիռ ՀՎ-ների նկատմամբ, ընդունեն, որ ոլորտում գործող ՀՎ-ները հսկայական գործ են անում և սկսեն միասին աշխատել, քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնել, ռազմավարություն մշակել, արդյունքները հսկայական կլինեն:

Գերատեսչությունները և ՀՎ-ները համակարծիք են, որ խնդիրը պետք է ուշադրության կենտրոնում պահել նաև սուր քննարկումներ, խոր ուսումնասիրություններ անելու և ոլորտի բացերը նշելու համար: Երբ ՋԼՄ-ները ցույց են փախիս խնդրի լուծման

ուղիները, միայն օգնում են գործին, որովհետև հասարակական և քաղաքական գործընթացներն ու ՋԼՄ-ներն իրարից անկախ չեն կարող լինել. լրատվական դաշտը կյանքին համընթաց է:

Այն երկրներում, որտեղ ժողովրդավարությունն ընդունվում է որպես բարձրագույն արժեք, ՋԼՄ-ները պետք է բավականաչափ տեղեկատվություն տրամադրեն քաղաքացիներին⁷¹: Բացի այդ, ժողովրդավարական որոշ մոդելներում ՋԼՄ-ները պետք է ծառայեն «իրական արժեքների» տարածմանն ու ամրապնդմանը:

Եթե ժողովրդավարական հասարակությունը լայն քաղաքացիական ներկայացուցչություն է, ապա անհրաժեշտ են այնպիսի ՋԼՄ-ներ, որոնք օգնում են հասարակական խմբերին իրականացնել իրենց նպատակները և ի մի են բերում նրանց ջանքերը սեփական շահերի պաշտպանության համար: Տվյալ դեպքում խոսքը Հայաստանի ամենախոցելի սոցիալական խմբին՝ հաշմանդամ մարդկանց, ժողովրդավարական հասարակություն ներառելու մասին է:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ժողովրդավարական պետություն⁷², չի կարող անտեսել հասարակության որևէ խավի շահերն ու պահանջները, քանզի որևէ հասարակություն չի կարող առողջ ու լիարժեք համարվել, եթե նրա բոլոր անդամների համար չկան կրթություն ստանալու, աշխատելու, ստեղծագործելու և լիարժեք ու արժանապատիվ կյանքով ապրելու հավասար հնարավորություններ: Այս նպատակին հասնելու համար հսկայական դեր ու նշանակություն ունեն ՋԼՄ-ները և լրագրողները:

Առաջարկներ: Այսօր ոլորտի պատասխանատուները և խնդրով մտահոգ կազմակերպությունները համակարծիք են, որ հաշմանդամության թեման երբեք չպետք է դուրս մնա ՋԼՄ-ների

ուշադրությունից: Սակայն միայն քանակի մասին խոսելն արդեն քիչ է: Հարցն այն է, թե ինչ որակով պետք է արվեն դրանք, որ պեսզի մի բան էլ «հոնքը սարքելու տեղը աչքը չհանեն»: Եվ շեշտը վաղուց դրված է ոչ թե քանակի, այլ որակի վրա: Իսկ ի՞նչ ասել է որակ.

- պետք է օգտագործել ճիշտ բառեր.
- հասարակության մեջ դրական վերաբերմունք ստեղծել.
- այն գիտակցությունը ձևավորել, թե հաշմանդամ մարդը բոլորի նման մեկն է, բոլորի նման ունի նույն իրավունքները.
- այդ իրավունքների ապահովման և պաշտպանության համար մարդկանց գործողությունների մղել:

Ահա թե ինչ են հորդորում այսօր ՀՀ աշխարհաբնի և սոցիալական հարցերի նախարարությունը և հիմնախնդրի լուծմամբ մտահոգ կազմակերպությունները՝ հավատարմությունով, որ սա է հաշմանդամության խնդրի որակյալ և իդեալական լուսաբանման մոդելը:

Սակայն ՀԿ - ՋԼՄ համագործակցություն զարգացնելն ու փոխվստահության հասնելը երկարատև և հեղուղական աշխատանք է պահանջում: Դրա համար պետք է՝

- լրագրողներին դաշնակից դարձնել.
- կատարված աշխատանքների արդյունքները պարզաձև կերպով ներկայացնել ՋԼՄ-ին և հանրությանը.
- խուսափել անհասկանալի մասնագիտական տերմիններից մամուլի հաղորդագրություններ պատրաստելիս կամ հարցազրույցներ տալիս.
- սեփական ինտերնետային կայքն ունենալ, որը լրատվամիջոցների համար տեղեկատվության լավագույն աղբյուրը կարող է հանդիսանալ.
- կազմակերպությունում ունենալ մեկը, ով պատասխանատու

է ՋԼՄ-ների հետ համագործակցության համար, ինչն ավելի կհեշ-
տացնի ՀԿ-ների հետ ՋԼՄ-ների հաղորդակցումը:

Ինչ վերաբերում է հաշմանդամության խնդրի լուսաբանման
սկզբունքներին, ապա դրանք տարիներ շարունակ մշակվել են
հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք աշխա-
տել են ՋԼՄ-ների հետ: Այսօր աշխարհում ընդունված և կիրառե-
լի լուսաբանման սկզբունքները հետևյալն են.

- լուսաբանումները պետք է հիմնված լինեն հաշմանդամ
մարդկանց կրթական, զենդերային, սոցիալական և այլ խնդիր-
ների խորը և համակողմանի ուսումնասիրության վրա.

- վեր հանեն հաշմանդամների հիմնախնդիրները՝ ներկայա-
ցելով դրանց հաղթահարման դրական օրինակներ.

- քարոզեն հավասար հնարավորությունների ստեղծման գա-
ղափարը.

- հիմնվեն փաստերի վրա՝ ներկայացնելով իրական պատմու-
թյուններ, օգտագործեն իրական մարդկանց կենդանի խոսքը.

- պահպանեն հաշմանդամ մարդկանց նկարահանելու և ձայ-
նագրելու էթիկայի կանոնները.

- լրագրողները պետք է պարբերաբար անդրադառնան հաշ-
մանդամ անձանց իրավունքները պաշտպանող օրենքներին և
դրանց կիրառման մեխանիզմներին:

**Հաշմանդամ մարդկանց խնդիրների լուսաբանման կարև-
որագույն սկզբունքը ներառականն է, երբ, օրինակ, լրագրո-
ղը հաշմանդամ մարդու աշխատանքի իրավունքին անդրա-
դառնում է ընդհանուր գործազրկության համապեքստում,
կամ մաքչելի միջավայրի մասին խոսում է այն ժամանակ,
երբ հարցը վերաբերում է դպրոցաշինությանն ու վերանորոգ-
մանն ընդհանրապես: Այդպիսով, հաշմանդամ մարդկանց
խնդիրը դիվում է որպես ամբողջի մաս: Այս կարգի լուսա-**

բանումները հաճախ ավելի ազդեցիկ են լինում, քան կոնկրետ հաշմանդամության թեմայով մեկ առանձին հոդվածը կամ հաղորդումը:

Պեպք է կիրառել հափուկ լեզվաոճ և բառեզրեր, որոնք չեն վիրավորում հաշմանդամ մարդուն և չեն առաջացնում խղճահարություն: Չպեպք է խուսափել հաշմանդամ բառի կիրառումից կամ նոր հոմանիշներ փնտրել դրա համար: Հարկավոր է պարզապես փոխել սեփական և հանրության վերաբերմունքն այդ բառի նկատմամբ: Շատ նրբանկար և ուշադիր պեպք է լինել հասարակության մյուս անդամներին բնութագրելիս, այլապես ակամայից լրագրողները կարող են վիրավորել հաշմանդամ մարդուն: Պեպք է խուսափել կարծրափայեր առաջացնող գնահատականներից ու եզրահանգումներից: Հրապարակումները պեպք է օգնեն ընթերցողին հրաժարվելու ընդունված կարծրափայերից, որ հաշմանդամ մարդիկ միայն խնամքի կարիք ունեն և չեն կարող օգտակար լինել:

Խրախուսվում է համապատասխան լուսանկարների կիրառումը հոդվածներում: Սակայն առանձնակի ուշադրություն պեպք է դարձնել դրանց ընտրությանը: Այսպեղ ևս չպեպք է այնպիսի կադրեր ընտրել, որոնք անհարկի կենտրոնացել են մարդու ֆիզիկական խնդրի վրա, կամ բավականաչափ տեղեկատվություն չեն պարունակում նրա մասին:

Պրոֆեսիոնալ լրագրողներն ունեն տվյալների բազա, որոնցից օգտվում են պարբերաբար: Հաշմանդամության խնդրին անդրադառնալիս նման փորձը միայն կօգնի: Հաճախ լրագրողները գիտեն ՀԿ-ների անունները, սակայն տեղյակ չեն, թե որ կազմակերպությունը կոնկրետ ո՞ր խմբի շահերն է պաշտպանում, ո՞ր խնդիրն է նրա համար գերակա, չէ՞ որ հաշմանդամության խնդիրները բազմաթիվ են, և մեկ ՀԿ-ն չի կարող զբաղվել

ամեն ինչով: Դրանցից յուրաքանչյուրն ունի շահառուների իր խումբը և նախանշած ոլորտը, որն ուզում է բարեփոխել:

Լրագրողների համար նախապայմանը պետք է լինի իրենց՝ հաշմանդամների և նրանց շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ խոսելը, նրանց փորձի ուսումնասիրությունն ու ընդհանրացումը: Հարկավոր է ցույց տալ հաշմանդամ մարդկանց դրական օրինակներ գործունեության փարբեր ոլորտներում:

Պետք է ծայրահեղորեն կենտրոնանալ հաշմանդամ մարդու ֆիզիկական խնդրի վրա՝ ներկայացնելով նրանց որպես պասիվ, ոչ ինքնուրույն դիտորդներ: Անհրաժեշտ է ցուցադրել հաշմանդամ մարդկանց հնարավորությունները, խոսել նրանց՝ հասարակության լիարժեք անդամներ դառնալու կարևորության մասին: Կրթություն, մասնագիտություն ստանալու հավասար հնարավորությունների, համապատասխան տեխնիկական պայմանների և սոցիալական ծառայությունների առկայության դեպքում հաշմանդամները կարող են մեծ օգուտ բերել իրենց ընտանիքներին և հասարակությանը:

Հաշմանդամների մասին գրելիս նրանց խնդիրներին պետք է անդրադառնալ նախ և առաջ մարդու իրավունքների տեսանկյունից:

Լրագրողական կազմակերպությունները պետք է մշակեն էթիկայի կանոնագրեր և դրանց մեջ ներառեն այնպիսի սկզբունքներ, որոնք հստակ ամրագրում են հաշմանդամ մարդկանց խնդիրներին անդրադառնալու միջոցները: Պետք է բուեփրում դասավանդվող «Լրագրողական էթիկա» առարկայի շրջանակներում անդրադառնալ նաև հաշմանդամության հիմնախնդրի լուսաբանման սկզբունքներին, քանի որ ուսանող և սկսնակ լրագրողների համար էթիկայի սկզբունքների յուրացումը մասնագիտական կայացման կարևոր փարր է:

**Ծանոթագրություններ և
օգտագործված գրականության ցանկ**

Ծանոթագրություններ

1. Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ, ՄԱԿ, 1993:
2. Նույն տեղում:
3. www.add.ogr.uk (Action on Disability and Development):
4. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ, 1948: Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիր, ՄԱԿ, 1975:
5. РОИ Перспектива , “Работа со СМИ”, Москва, 2003.
6. Фефелов В., “В СССР инвалидов нет...”, Лондон, 1986.
7. Трунов И. Л., “Правовые проблемы оздоровительной реабилитации инвалидов”, Юрист 8, 2003
8. MDI, "Press Coverage of Minority Groups in the South Caucasus", 2004-2005:
9. Հավելված
10. MDI, "Press Coverage of Minority Groups in the South Caucasus", 2004-2005:
11. Harris A. with Enfield S., “Disability, Equality, and Human Rights”, 2001.
12. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 1993:
13. Նույն տեղում:
14. Հախվերդյան Ն., «Տեղ այս արևի տակ», «168 ժամ», ապրիլ, 2005:
15. Հովհաննես Դ., «Արևածաղիկ», «Ճիչ», 18 (192), 2007:
16. Ղալեշյան Ն., «Մաքսլիբերթի», «Ազատություն» ռադիոկայան, 2007:
17. Ավետյան Ն., «Կամք և կորով» «168 ժամ», հոկտեմբերի 27-28, 2005:
18. Harris A. with Enfield S., “Disability, Equality, and Human Rights”, 2001.
19. Նույն տեղում:
20. Рубинштейн С.Л., “Основы общей психологии”, 2000
21. ԵՄԱ, «Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը», 2000:
22. Քերոբյան Հ., «Հայրենիքի համար կորցրել է տեսողություն

- ու մնացել... անօթևան», «Օրինաց երկիր», նոյեմբերի 4-10, 2005:
23. Իշխանյան Վ., «Լեռնուհու ապաքինումը. իմ վերքերն այս-
տեղ են բուժվել», «168 ժամ», հունվարի 13-19, 2005:
24. Պողոսյան Ն., «Արժանապատիվ ապրելու ուժը», «Երկիր»,
նոյեմբերի 25, 2005:
25. Ավագյան Գ., «Անավարտ պատմություն», «Զանգակ», օգոս-
տոս, 2005:
26. Ավետյան Ն., «Շարունակվող պատերազմ», «168 ժամ»,
հունվարի 20, 2005:
27. РОИ Перспетива , “Работа со СМИ”, Москва, 2003.
28. Դանիելյան Վ., «Հայաստանում 3 հազար սայլակավոր
հաշմանդամ կա», «Ազգ», հուլիս, 2005:
29. Պողոսյան Ն., «Որ երեխան քնի առանց ցավի», «Երկիր»,
նոյեմբեր, 2005:
30. Ղալեշյան Ն., «Մաքսլիբերթի», «Ազատություն» ռադիոկա-
յան, 2007:
31. B.Kolucki and B.Duncan. Together with media. Apractical
Guid for People with Disabilites. International Labour
Organization. 1994.
32. Հայրապետյան Պ., «Ես էլ եմ խաղալ ուզում... », «Սևան»,
օգոստոս 2005:
33. Նույն տեղում:
34. Քերոբյան Հ., «Հայրենիքի համար կորցրել է տեսողությունն
ու մնացել... անօթևան», «Օրինաց երկիր», նոյեմբերի 4-10,
2005:
35. Պողոսյան Ն., «Որ երեխան քնի առանց ցավի», «Երկիր»,
նոյեմբեր, 2005:
36. Դավթյան Հ., «Արևածաղիկ», «Ծիչ», 2007:
37. Ղալեշյան Ն., «Մաքսլիբերթի», «Ազատություն», 2007:
38. "Press Coverage of Minority Groups in the South
Caucasus" MDI 2004-2005:
39. Դանիելյան Ն., «Երկիրն այսօր», «Երկիր մեդիա», 2005:
40. Կարապետյան Լ., «Հայլուր», ՀՀ, 2007
41. Խեչոյան Ա., «Ամուսնացել է, բայց կնոջը երբեք չի տեսել»,
«Առավոտ», մարտի 2, 2008:
42. Դավթյան Հ., «Արևածաղիկ», «Ծիչ» 18 (192) 2007:
43. Ավագյան Ա., «Մենք խուլ ենք, բայց ամեն ինչ կարող
ենք», «Հայք», 2007:

44. Նույն տեղում:
45. Հունանյան Ա., «Հովիկ լինելու համար պետք է հոգեպես չկործանվել», «Շրջապատ», 2007:
46. Մարգարյան Ա., «Փոքրիկ իշխանը», «Ազգ», նոյեմբերի 23, 2005:
47. Նույն տեղում:
48. Վիրաբյան Ա., «Սպորտը և հաշմանդամությունը», «Հայք», հոկտեմբեր, 2007:
49. "Press Coverage of Minority Groups in the South Caucasus" MDI 2004-2005:
50. «Արևածաղիկ», «Մրցում են լրագրողները, շահում հասարակությունը», 2004:
51. ԵՄԱ, «Լրագրողական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը», 2000:
52. Նույն տեղում:
53. Պողոսյան Ն., «Ուրիշի ցավը նժարի վրա», «Երկիր», հոկտեմբեր, 2005:
54. Հախվերդյան Ն., «Տեղ այս արևի տակ», «168 ժամ», ապրիլի 7-13, 2005:
55. Պողոսյան Ն., «Արժանապատիվ ապրելու ուժը», «Երկիր», 25 նոյեմբերի, 2005:
56. Ավետյան Ն., «Շարունակվող պատերազմ», «168 ժամ», հունվարի 20, 2005:
57. Ղալեչյան Ն., «Մաքսլիբերթի», «Ազատություն», 2007:
58. Հովհաննիսյան Ի., «Հորիզոն», «Շանթ», 2005:
58. Մելքոնյան Զ., «Հայլուր», Հ1, 2007:
60. Տոնոյան Ի., «Գաղտնավանկ», «Կենտրոն», 2005:
61. Գասպարյան Ա., «Կյանքը իմ աչքերով», «Արմենակոր», 2007:
62. Գրիգորյան Ա., «Իմ հեքիաթը», «Լուսալիք», 2007:
63. Բաղդասարյան Ա., «Անկախության սերունդ», «Երկիր մեդիա», 2007:
64. Մարգարյան Տ., «Երևան» լրատվական, «Երևան», 2007:
65. Հովհաննիսյան Ի., «Երկիրն այսօր», «Երկիր մեդիա», 2006:
66. Բաղդասարյան Ա., «Անկախության սերունդ», «Երկիր մեդիա», 2007:
67. Նույն տեղում:
68. «Արևածաղիկ», «Արփիս փոթորիկը հանդարտվում է, երբ նկարում են», սեպտեմբեր, 2004:

69. Նույն տեղում:
70. <http://www.vpc.am/downloads/VMaetickanonner.pdf>
71. Прайс М., Круг П., “Благоприятная среда для свободных и независимых СМИ”, 2000.
72. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Գլուխ 1, հոդված 1, 2005:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բիլ Կովաչ, Թոմ Ռոզենշթայլ, «Լրագրության հիմունքներ», 2003:
2. Մամուլի ազատության համաշխարհային կոմիտե, Սրբեփանակերտի մամուլի ակումբ, «Ձեռնարկ լրագրողների համար», 2003:
3. Երևանի մամուլի ակումբ, «Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը», 2000:
4. ԲՏԻ, «Բազմակողմանի լրագրության ձեռնարկ», 2004:
5. ԲՏԻ, «Լրագրական կապեր. խորհուրդներ առաջադարձի հայ մասնագետներից», 2004:
6. «Հուլիսի կամուրջ» ՀԿ, Հանրային հարաբերություններ և աշխատանք ՋԼՄ-ների հետ, 2003:
7. Монро Прайс, Питер Круг, “Благоприятная среда для свободных и независимых СМИ”, 2000.
8. Фефелов В., “В СССР инвалидов нет...”, Лондон, 1986.
9. Alison Harris with Sue Enfield, “Disability, Equality, and Human Rights”, 2001.
10. Рубинштейн С.Л., “Основы общей психологии”, 2000
11. РОИ Перспектива , “Работа со СМИ”, Москва, 2003.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2007
- «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, 2003
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, 2000
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 2004
- «Գովազդի մասին» ՀՀ օրենք, 2002
- «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 1993
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ, 1948
- Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիր, ՄԱԿ, 1975
- Հաշմանդամ անձանց իրավունքների կոնվենցիա, 2007
- Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ, ՄԱԿ, 1993

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՑԱՆՑԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. www.armtv.am
2. www.parliament.am
3. www.media.am
4. www.internews.am
5. www.add.org.uk
6. www.mss.am
7. www.media-diversity.org
8. www.ypc.am

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարյման ենթարկված անձանց ցուցակ

1. Հասմիկ Խաչատրյան, աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2. Գնել Նալբանդյան, փոխստեղծ, ՀՀ հանրային հեռուստաընկերություն
3. Սարապ Օրոյան, փոխստեղծ, ծրագրերի ղեկավար, ՀՀ հանրային հեռուստաընկերություն
4. Նունե Ալեքսանյան, լրագրող, ՀՀ հանրային հեռուստաընկերություն, «Հայլուր» լրատվական ծրագիր
5. Արա Շիրինյան, ռեժիսոր, գեղարվեստական ղեկավար, «Շողակաթ» հեռուստաընկերություն
6. Մերի Ալեքսանյան, երիտասարդական էջի պատասխանավոր, «Երկիր» շաբաթաթերթ
7. Անուշ Խեչոյան, լրագրող, «Առավոտ» օրաթերթ
8. Նարինե Ղալեյան, լրագրող, «Ազատություն» ռադիոկայան, «Մաքսլիբերթի» ծրագիր
9. Արմինե Գեղամյան, երիտասարդական ծրագրերի ղեկավար, ՀՀ հանրային ռադիո
10. Հասմիկ Կարսլյան, լրագրող, Հանրային ռադիոյի «Լյունսե» երիտասարդական ծրագիր
11. Հակոբ Սարգսյան, օպերատոր, ՀՀ հանրային հեռուստաընկերություն
12. Տիգրան Բաբայան, օպերատոր, ՀՀ հանրային հեռուստաընկերություն
13. Մարինե Հակոբյան, փորձագետ, ՀՀ Ազգային ժողով
14. Սուրեն Օհանյան, ՀԿ նախագահ, «Փարոս» ՀԿ

15. Սուրեն Մաղաքյան, ՀԿ նախագահ, «Լիարժեք կյանք» ՀԿ, Սյրեփանավան

16. Սուսաննա Թաղևոսյան, ՀԿ նախագահ, «Հույսի կամուրջ» ՀԿ

17. Արփինե Աբրահամյան, ՀԿ նախագահ, «Փրկություն» ՀԿ

18. Արմինե Կարախանյան, հաշմանդամություն ունեցող ուսանողուհի, «Հույսի կամուրջ» ՀԿ

19. Վարդուհի Արամյան, հաշմանդամ երեխաների ծնողների փոխօգնության խմբի ղեկավար, Երևանի թիվ 150 դպրոց

20. Նշան Աբասյան, հրապարակումների պարասխանապուր, «Արևածաղիկ» մանկապարտեզական ամսաթերթ

21. Ալեքսանդր Ժույկով, Հաշմանդամություն ունեցող երաժիշտ Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիա

Բովանդակություն

Նախաբան	3
Գլուխ 1. Հաշմանդամության խնդիրը և զանգվածային լրատվության միջոցները	15
1.1. Հաշմանդամության խնդրի բժշկական և սոցիալական մոտեցումները ԶԼՄ-ներում	15
1.2. ԶԼՄ-ների դերը հաշմանդամ մարդկանց նկատմամբ կարծրափափեքը կոփրելու գործում	22
1.3. Լրատվամիջոցներում կիրառվող լեզուն և բառերը	29
1.4. Հաշմանդամության խնդրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, լուսաբանման նախաձեռնումը	41
1.5. Հաշմանդամության հիմնախնդիրը սոցիալական գովազդում	50
Գլուխ 2. Հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկություններն ըստ լրատվամիջոցների	59
2.1. Տպագիր և էլեկտրոնային մամուլ	59
2.2. Հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկությունները ռադիոյում	76
2.3. Հաշմանդամության խնդրի լուսաբանման առանձնահատկությունները հեռուստատեսությունում	85
Եզրակացություններ և առաջարկություններ	104
Օգտագործված գրականության ցանկ	115
Հավելված	121

Զարուհի Վալերիանի Բաթոյան
Հաշմանդամության խնդիրը և զանգվածային
լրատվության միջոցները

Zaruhi Batoyan

Disability issue and Mass Medias

This guideline is published by "Bridge of Hope" NGO and
Mission East Armenia, with financial support from DANIDA

Տպագրվել է «Զանգակ-97» տպարանում: 500 օրինակ